ԲԱՋՄԱԿՈՂՄԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԲԱՋՄԱՋԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ

ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Երևան, 2024 թ.

Այս ձեռնարկը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:

«Մեդիայի որակի և դիմակայունության նախաձեռնություն» ծրագիրն իրականացնում է Մեդիա նախաձեռնությունների կենտրոնը՝ Երևանի մամուլի ակումբի, Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտի, «Միջազգային մեդիա աջակցություն» (IMS) կազմակերպության հետ համատեղ՝ Եվրոպական միության ֆինանսավորմամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ***5***

Համատեքստ ***8***

Ընդհանուր խորհուրդներ բազմազանության մասին հրապարակումների վերաբերյալ 12

Խորհուրդներ տեղեկատվության աղբյուրներ գտնելու վերաբերյալ 12

Խորհուրդներ սոցիալական տարբեր խմբերի անդամների հետ հարցազրույց անցկացնելու վերաբերյալ 16

Էթնիկ պատկանելություն **20**

Դեպքերի ուսումնասիրություն 25

Կրոն և համոզմունք **37**

Դեպքերի ուսումնասիրություն 43

Գենդերային հավասարություն **49**

Դեպքերի ուսումնասիրություն 55

Ֆիզիկական և մտավոր հաշմանդամություն **64**

Դեպքերի ուսումնասիրություն 68

Սոցիալապես խոցելի խմբեր **78**

Դեպքերի ուսումնասիրություն 82

Տարեցներ և թոշակառուներ **87**

Դեպքերի ուսումնասիրություն 90

Փախստականներ, տեղահանվածներ և ներգաղթյալներ **95**

Դեպքերի ուսումնասիրություն 98

Գենդերային ինքնություն 107
Դեպքերի ուսումնասիրություն 111
Քաղաքական ընդդիմություն և այլախոհներ 126
Դեպքերի ուսումնասիրություն 129
Երեխաներ 136
Դեպքերի ուսումնասիրություն 141

Ամփոփում 147

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այս ձեռնարկը ստեղծվել է հաջակցություն լրագրություն սովորող ուսանողների և գործող լրագրողների, որոնք իրենց ամենօրյա աշխատանքում շփվում են հասարակության ամենատարբեր խմբերի ներկայացուցիչների հետ: Ամենօրյա լրագրությունը բարդ գործընթաց է, քանի որ գործող լրագրողը պետք է իմանա ամեն բան, կարողանա շփվել մարդկանց հետ և լուսաբանել բազմազան թեմաներ: Ընդ որում, թեմատիկ լուսաբանման բազմազանության ապահովումը կարևոր հիմնաքար է լրատվության բազմակողմանիության և հասարակության տարբեր շերտերի կարիքներին, խնդիրներին, մարտահրավերներին, հաջողություններին ու ձեռքբերումներին անդրադառնալու համար: Լրագրողների առաքելությունն է արագ արձագանքել միջադեպերին, գտնվել ճգնաժամերի էպիկենտրոնում և թեժ կետերում, լսելի դարձնել մարդկանց ձայնը և կապող օղակ լինել պետության, քաղաքացիական հասարակության և հանրության միջև, ճշգրտորեն ներկայացնել ուղերձները և միևնույն ժամանակ՝ չվնասել: Այս ձեռնարկում խոսելու ենք հենց չվնասելու և զգայուն լուսաբանման կարևոր գործի մասին՝ ինչպես նախապատրաստվել հարցազրույցներին և ինչպես վարել դրանք, ինչ անել և ինչ չանել մարդկանց ամենատարբեր խմբերի հետ հաղորդակցվելիս, որպեսզի ստեղծվող արտադրանքը որևէ կերպ չվնասի նյութի հերոսին կամ աղբյուրին, լինի զգայուն և մատչելի լայն լսարանի համար:

Բռնության ենթարկված անձինք, կանայք, տարեցներ և թոշակառուներ, կյանքի դժվարին պայմաններում հայտնված երեխաներ (և ոչ միայն), կրոնական, ազգային, սեռական փոքրամասնություններ, սոցիալապես խոցելի խմբեր, փախստականներ, տեղահանվածներ և ներգաղթյալներ, հաշմանդամություն

ունեցող անձինք և վերջապես՝ քաղաքական ընդդիմություն. ահա այն բոլոր խմբերը, որոնց վերաբերյալ այս ձեռնարկը կօգնի ձեզ ավելի մասնագիտորեն իրականացնել լրագրողական գործունեությունը, ստեղծվող նյութով զոհ չդարձնել հերոսներին, չենթարկել տրավմայի և թիրախ չդարձնել ընթերցողի/լսարանի համար: Շատ հաճախ մարդկային անտարբերությունը, ապրումակցման պակասը, մասնագիտական անզգուշությունը լրագրության ոլորտում անդառնալի հետք է թողնում հասարակ մարդկանց կյանքում: Մեր խնդիրն է խուսափել այդ ամենից և պատրաստել նյութեր, որոնք թե՛ որակապես, թե՛ տեխնիկապես՝ ձևի առումով, որևէ կերպ չեն հակասում մարդու իրավունքների հիմնարար սկզբունքներին, հաշվի են առնում մշակութային առանձնահատկությունները և սոցիալական ամենատարբեր գործոնները, որոնք կարևոր դեր են կատարում հասարակության ինչ-ինչ խմբերի համար:

Մենք՝ լրագրողներս, պետք է գիտակցենք, որ չենք կարող խոսել մարդու իրավունքներից և ազատություններից, եթե ինքներս ենք կաղապարված կարծրատիպերով, հասարակությանը ճամբարների բաժանելու նկրտումներով, խտրական վերաբերմունք ունենք այս կամ այն անհատի կամ մարդկանց խմբի նկատմամբ, լուսաբանելիս հիմնվում ենք մեր անձնական պատկերացումների և համոզմունքների վրա: Մյուս կողմից՝ կարևոր է օբյեկտիվորեն գնահատել մարդկային սուբյեկտիվության հանգամանքը, քանի որ բոլորս էլ մարդ ենք և հետևապես՝ սխալական ենք: Այս ամենը հավասարակշռելու համար կարևոր է շարունակական կրթությունը և ժամանակի հետ զարգացող ու փոփոխվող լեզվի ուսուցումը, որի համար էլ մշակվել է այս ձեռնարկը:

Այս ձեռնարկը բաղկացած է 10 թեմատիկ բաժիններից, որոնցից յուրաքանչյուրն անդրադառնում է հասարակության ամենատարբեր խմբերի հետ աշխատելու մոտեցումներին և նրբություններին: Ձեռնարկի յուրաքանչյուր բաժին բաղկացած

է երկու հիմնական մասից, որոնցից առաջինն անդրադառնում է հարցազրույցի նախապատրաստման և վարման կանոններին, իսկ երկրորդը՝ դեպքերի ուսումնասիրություն է՝ վերցված հայաստանյան լրատվամիջոցներից, որտեղ առկա են դիտարկումներ, մեկնաբանություններ և հուշումներ: Դեպքերի ուսումնասիրության մեջ դուք կգտնեք բազմաթիվ խախտումներ, որոնք զոհ են դարձնում նյութում հիշատակված մարդկանց կամ խմբերին, խտրական վերաբերմունք և կարծրատիպային մոտեցում ձևավորում նրանց հանդեպ, ոտնահարում են մարդու հիմնարար իրավունքները, ոչ զգայուն և վիրավորական լեզու են օգտագործում, երբեմն էլ ատելության խոսք և անհանդուրժողականություն են տարածում, դրանով իսկ սրում են հասարակության խմբերի փոխհարաբերությունները և է՛լ ավելի են խորացնում կոնֆլիկտները հանրային խոսույթում:

Կարևոր է նշել, որ դեպքերի ուսումնասիրության մեջ ներառված նյութերն ուղիղ մեջբերումներ են աղբյուրներից, և դրանք որևէ կերպ չեն խմբագրվել այս ձեռնարկում, ներկայացված են այնպես, ինչպես հրապարակվել են լրատվամիջոցների կողմից: Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտը պահպանել է դեպքերի ուսումնասիրության մեջ ներառված նյութերի թվային արխիվները՝ դրանք մշտապես հասանելի պահելու նպատակով:

Եթե որևէ նյութի աղբյուր հնարավոր չէ գտնել, կամ տրված հիպերհղումները հասանելի չեն, ապա դիտարկված բովանդակություններին կարող եք ծանոթանալ ԲՏԻ ամպային տիրույթում՝ այս հղմամբ:

Եկեք միասին անցնենք այս ձեռնարկի բաժիններով և ուսումնասիրենք ժամանակակից լրագրության մոտեցումները և տեղական լրատվության վիճակը մարդու իրավունքների համատեքստում:

ՀԱՄԱՏԵՔՍՏ

Հայաստանում լրագրության նկատմամբ հանրային վերաբերմունքը և մասնագիտական համայնքի գնահատականը այնքան էլ գոհացուցիչ չէ: Կան բազմաթիվ լրագրողներ և լրատվամիջոցներ, որոնք իրենց գործունեությամբ հակասում են մասնագիտական էթիկայի պարզագույն նորմերին, դրանով իսկ նպաստում են նաև բացասական վերաբերմունքի տարածմանն ու ամրապնդմանը: Շատ հաճախ մենք ականատես ենք լինում մասնագիտության միջակության այնպիսի դեպքերի, որոնք վնասում են ոչ միայն նյութի հերոսին, այլև լսարանին և ոլորտին:

Մյուս կողմից, լրագրողների ամենօրյա աշխատանքը Հայաստանում բավական բարդ է. շուրջօրյա քաղաքական ցույցեր, կոնֆլիկտների լուսաբանում, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված մարդկանց պատմությունների վերհանում և անվտանգային բազմաթիվ ներքին և արտաքին մարտահրավերներ: 2018 թվականին տեղի ունեցած քաղաքական իրադարձությունները և դրանց հաջորդող տարիները բարդագույն փորձառություն էին բոլորիս համար: Դրանք շրջադարձային տարիներ էին Հայաստանի պատմության մեջ, որոնք անդրադարձ են ունեցել նաև լրագրողական համայնքի վրա: Իրադարձությունների ինտենսիվությունը և ամենօրյա խորացող ճգնաժամը հանգեցրել էին մասնագիտական այրման և տրավմաների, որոնք հաճախ արտացոլվում էին նաև լրագրողների պատրաստած նյութերում և բացասական ազդեցություն ունենում լսարանի վրա:

Հայաստանյան համատեքստում լրագրության էվոլյուցիայի փուլերը հասկանալու համար մենք պետք է անդրադառնանք ոչ միայն տեղական, այլ նաև տարածաշրջանային և գլոբալ զարգացումներին: Սկսած Covid-19 համավարակից մինչև Լեռնային

Ղարաբաղի կոնֆլիկտ, քաղաքական երկխոսությունից և պատերազմական լրագրությունից մինչև բնապահպանական և սոցիալական ճգնաժամեր, հեղափոխությունից մինչև տարերային աղետներ, տնտեսական և սոցիալական անհավասարությունից մինչև անվերջ ընթացող քաղաքական պայքարի իրադարձություններ, արտահերթ և հերթական ընտրություններ: Այս բոլոր թեմաները ժամանակակից լրագրության վերաձևավորման մաս են կազմում և ուղիղ կապ ունեն լրագրության հասարակության վստահության բարձրացման կամ նվազման գործընթացների հետ: Այս համատեքստում կարևոր է նաև միջազգային լրագրության փորձի ուսումնասիրությունը՝ հասկանալու, թե ինչպես են այլ երկրներում լրագրողները մոտենում նմանատիպ մարտահրավերներին, ինչ մեթոդներ են օգտագործվում մարդու իրավունքների, սոցիալական արդարության և բազմազանության լուսաբանման համար:

Եկեք մի փոքր անդրադառնանք անցյալին և ներկային, որպեսզի ավելի լավ պատկերացնենք ճգնաժամի խորությունը և ընդհանուր համատեքստը:

Հայաստանում շարունակվում են ակտիվ քննարկումները գենդերային հավասարությանն առնչվող հարցերի շուրջ: Ստամբուլյան կոնվենցիան, ընտանեկան բռնության դեմ և իրավահավասարության մասին օրենքների նախագծերը մեծ դիմադրության են արժանանում հասարակության պահպանողական հատվածի և քաղաքական ուժերի կողմից: Այդուհանդերձ, ընտանեկան և կանանց նկատմամբ բռնության դեպքերը շարունակական աճ են գրանցում: Չնայած՝ 2018 թվականին ամիսներ տևած ցույցերն ընդդիմության համար ավարտվեցին հաջողությամբ, և ակնկալվում էր մեկնարկել անցումային արդարադատության և լյուստրացիայի գործընթաց, այնուամենայնիվ, այն տապալվեց: Ի հայտ եկան բազմաթիվ նոր քաղաքական միավորներ և շարժումներ, որոնք կոշտ դիմադրություն էին ցուցաբերում իշխող կուսակցությանը: Այս ամենին զուգահեռ

հասունանում էին բազմաթիվ այլ ճգնաժամեր, ինչպիսին էր, օրինակ, Ամուլսարի հանքավայրի շահագործման դեմ ուղղված բողոքի ցույցերը:

Քանի դեռ Հայաստանում ներքին քաղաքական և սոցիալական անկայուն վիճակ էր, աշխարհում տարածվում էր Covid-19 համավարակը, որի առաջին դեպքը մեզ մոտ արձանագրվեց 2020-ի մարտ ամսին: Համավարակի ինտենսիվ և անկառավարելի տարածումը մեծ ճգնաժամ էր ինչպես Հայաստանի, այնպես էլ ամբողջ աշխարհի համար, որը տևեց շուրջ մեկուկես տարի: Պետական և համայնքային ենթակառուցվածքներն ու առողջապահական համակարգը ամբողջությամբ պարալիզացված էին: Ստեղծված իրավիճակից դուրս չեկած՝ հաջորդեց մյուս ճգնաժամը. 2020-ի սեպտեմբերին Ադրբեջանը լայնածավալ ռազմական հարձակում սկսեց Լեռնային Ղարաբաղի վրա: Պատերազմի հետևանքով Լեռնային Ղարաբաղի բնակչությունը հայտնվեց բլոկադայի մեջ, և ամիսներ շարունակ տևած հումանիտար աղետին հաջորդեց շուրջ 120,000 քաղաքացիների բռնի տեղահանումն ու տարագրումը Հայաստան: Ուկրաինայի և Ռուսաստանի միջև պատերազմը ևս հանգեցրեց արտերկրից բազմաթիվ անձանց Հայաստան ներգաղթին: Իսկ տնտեսական հանգամանքների բերումով էլ Հնդկաստանից հազարավոր քաղաքացիներ ներգաղթեցին Հայաստան՝ կրթական և աշխատանքային նպատակներով, ինչը էապես փոխեց ազգային և էթնիկ ծագմամբ փոքրամասնությունների ներկայացվածությունը մեր հասարակությունում: Ներգաղթած և տեղահանված քաղաքացիների նկատմամբ հասարակության անհանդուրժողականության դրսևորումները հայտնվեցին լրատվամիջոցների առաջին էջերում:

Խոսքի ազատության անկառավարելիությունը կրթական ցածր ցենզի պայմաններում և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ֆոնին, որտեղ նշանակալի դերակատարում ունեն արհեստական բանականության, բոտերի կողմից

մշակված վիզուալ և տեքստային բովանդակությունները, անսահման կեղծիքն ու ապատեղեկատվության անվերահսկելիությունը պարարտ հող ստեղծեցին լրատվամիջոց ներկայացող անդեմ կազմակերպությունների, էջերի և անհատների համար: Այս պայմաններում ատելությունը, անհանդուրժողականությունը, խտրականության և բռնության լեզուն ամրապնդվեց տեղեկատվական դաշտում:

Այսօր մեդիայում ամենուր կարելի է տեսնել բովանդակություններ, որոնք նվաստացնում են սեռական, կրոնական և ազգային փոքրամասնություններին, հասարակությունը բաժանում են խմբերի, օտարում միմյանցից, ստեղծում են ճամբարներ, կարծրատիպային են դարձնում հասարակության մեջ առանց այն էլ կարծրացած մշակութային և վարքագծային առանձնահատկություններն ու հատկանիշները: Մեր հասարակությունը երբևէ ականատես չէր եղել ապամարդկայնացնող (դեհումանիզացիա, նույնն է՝ դիվայնացում) բովանդակության այնպիսի ծավալների, որոնց մենք հիմա ականատես ենք լինում: Այս իրավիճակը խորացել է այնչափ, որ վիրավորական լեզուն և արտահայտությունները հաճախ նորմավորվել են այն աստիճանի, որ անգամ բացասական նկրտումներ և կանխակալ վերաբերմունք չունենալու դեպքում լրագրողները կամ քաղաքացիները կարող են շփոթվել և վրիպել:

Ստեղծված իրավիճակի հաղթահարման գործում լրագրողները մեծ դեր և նշանակություն ունեն: Առաջնահերթ պետք է գիտակցել, որ լրագրությունը միայն լրատվության մասին չէ, այն նաև կրթող և լուսավորող առաքելություն ունի, ինչի մասին շատերը մոռացել են: Եթե մենք առաջնորդվենք բարեխղճությամբ, էթիկայի սկզբունքներով, փորձենք ձերբազատվել կարծրատիպերից և պահպանել մարդկանց չվնասելու սկզբունքը, ապա որոշ ժամանակ անց նույն փոփոխությունը կտեսնենք հասարակության շրջանում: Այս ձեռնարկը հենց դրա մասին է:

Ընդհանուր խորհուրդներ բազմազանության մասին հրապարակումների վերաբերյալ

Լրագրողների կարևոր խնդիրներից մեկը հասարակության փոքր և խոցելի խմբերի մասին լուսաբանումն է: Հաճախ լրագրողի դերը տվյալ անձի դիրքորոշումները, գաղափարները կամ աշխարհայացքը ճշգրիտ կերպով ներկայացնելն է, նույնիսկ եթե այդ անձը տարբերվում է իր էթնիկ պատկանելությամբ, կրոնով, սեռով, սոցիալական կամ տնտեսական կարգավիճակով: Հատկապես այնպիսի տարածաշրջաններում, ինչպիսին հետսովետական երկրներն են, որտեղ սոցիալական և էթնիկ միավորները տարանջատվել են ամենատարբեր համայնքների ամբողջությունից, այդ նպատակին հասնելը կարող է դժվար լինել, բայց, այնուամենայնիվ, ո՛չ անհնար: Իրենց հասարակությունների ներսում հաշտեցմանն ու երկխոսությանը նպաստելու ցանկություն դրսևորելով՝ լրագրողները կարող են բազմազանության ըմբռնում ու հանդուրժողականություն խթանել, բայց ո՛չ երբեք կասկած ու թերահավատություն:

Խորհուրդներ տեղեկատվության աղբյուրներ գտնելու վերաբերյալ

Այստեղ թվարկված որոշ մեթոդներ հիմնականում վերաբերում են առանձնահատուկ խմբերի: Սակայն հետևյալ առաջարկությունները հավասարապես կիրառելի են բոլոր խմբերի համար:

- Էթնիկ, ռասայական, սեռական, կրոնական, սոցիալական, տնտեսական կամ այլ խմբերի փոքրամասնությունների մասին գրելիս չափազանց կարևոր է այդ խմբի

ներկայացուցիչների հետ հարցազրույցներ անցկացնել և վերջիններիս դիրքորոշումներն ընդգրկել նյութում: Հակառակ դեպքում նրանք հանդես կգան ոչ այնքան իբրև այդ հոդվածի «սուբյեկտներ», որքան «օբյեկտներ»: Ոչ մի հոդվածում չպետք է քննադատվեն մարդիկ կամ մի ամբողջ խումբ՝ առանց տվյալ անհատին կամ խմբի անդամներին սեփական տեսակետը ներկայացնելու և մեղադրանքին արձագանքելու հնարավորություն ընձեռելու:

- Շրջահայաց եղեք բառեր և արտահայտություններ գործածելիս: Դրանք վիրավորելու, ինչպես նաև սփոփելու մեծ ուժ ունեն: Լեզվի անփույթ գործածությունը կարող է սրել դոմինանտ և փոքրամասնություն հանդիսացող խմբերի միջև սոցիալական լարվածությունը, նույնիսկ եթե նման մտադրություն չունեք: Իրազեկ եղեք, թե ինչպես են փոքրամասնությունների ներկայացուցիչներն իրենք նախընտրում, որպեսզի անվանվեն այն լեզվով, որով գրում եք:
- Նյութեր հավաքելիս փորձեք գնահատել բոլոր հնարավոր կանխակալ կարծիքները, անգամ կարծրատիպերը: Իհարկե, դուք կարող եք ունենալ ձեր սեփական կարծիքը, սակայն լրագրության առաքելություններից մեկը սեփական և հասարակության կարծրատիպերը հարցականի տակ դնելն է, իսկ էթիկական սկզբունքը՝ զերծ մնալ սեփական կարծիքը նյութում արտահայտելուց:
- Ուշադիր եղեք այնպիսի արտահայտություններ գործածելիս, ինչպիսիք են՝ «ինչպես բոլորին հայտնի է...» կամ «ակնհայտ է, որ...»: Նախ՝ չկա մի բան, որ հայտնի է բոլորին, հետո էլ՝ նմանատիպ արտահայտություններով լրագրողները սովորաբար ներկայացնում են իրենց սեփական կամ իրենց սոցիալական խմբի կարծիքը, և այն, ինչը «բոլորին հայտնի է...», հավանական է, որ հիմնված է կանխակալ վերաբերմունքի վրա:

- Սոցիալական խմբերի միջև կոնֆլիկտ պարունակող շատ իրավիճակներ բավական խճճված են: Երկու կողմերն էլ, սովորաբար, ունենում են հիմնավոր դժգոհություններ և դիրքորոշումներ, իսկ լրագրողի ամենակարևոր խնդիրներից մեկը այդ դիրքորոշումներն անաչառ և պատշաճ ներկայացնելն է: Զգտեք բարդ սոցիալական խնդիրները սև-սպիտակի վրա չներկայացնել:
- Հանրության տարբեր շերտերից մարդկանց ներգրավումը միայն անաչառության և հավասարակշռության պահպանման խնդիր չէ: Այն գործնական տեսանկյունից ևս կարևոր է բազմազանության լուսաբանման համար: Շատ լրատվամիջոցներ սահմանափակում են իրենց հնարավոր լսարանը՝ ներկայացնելով միայն մեկ խմբի դիրքորոշումներ: Եթե նրանք փորձեն ընդլայնել շրջանակները՝ լուսաբանելու համար այլ համայնքներին ևս, կարող են ընդլայնել իրենց լսարանը նույնպես:
- Ապահովեք լուսաբանվող իրադարձության լայն համատեքստ: Մեծամասնության և մարգինալացված խմբերի ու փոքրամասնությունների միջև առճակատումները չեն կարող ծագել հենց այնպես՝ ոչնչից: Սովորաբար դրանց հետևում ընկած է լինում երկարատև կոնֆլիկտ, ընդ որում՝ յուրաքանչյուր կողմ միանգամայն յուրովի է մեկնաբանում անցյալը: Նախքան նյութն անաչառորեն ներկայացնելը պետք է հասկանալ, թե ինչ է տեղի ունեցել նախկինում, և միայն հետո որոշել, թե անցյալում կատարվածի որ մասն է անհրաժեշտ ընդգրկել, որպեսզի լսարանը կարողանա ըմբռնել խնդրի ողջ էությունը:
- Ընտրեք գրելու առանձնահատուկ եղանակ: Մի ամբողջ օր անցկացրեք անօթևան մարդու, լեսբիի կամ փախստականի հետ՝ հասկանալու համար, թե ինչպիսին է իրականում նրանց կյանքը: Ի՞նչ հույսեր և անհանգստացնող խնդիրներ ունեն նրանք: Եթե որևէ սոցիալական խումբ

դեմ է իր անդամներին բնորոշելու համար գործածվող որևէ կոնկրետ բառի, ապա ուսումնասիրեք դրա ստուգաբանությունը: Ի՞նչ պատկերացումների և գաղափարների հետ է զուգակցվում այն: Ինչո՞ւ են մարդիկ դեմ այդ բառին: Ինչո՞ւ են սոցիալական այլ խմբի անդամներ շարունակում գործածել այդ բառը:

- Ինֆորմացիայի աղբյուրներ փնտրեք այլ համայնքներում: Գտեք մարդկանց, որոնք կցանկանան տեղեկացնել ձեզ, թե ինչի մասին են մտածում, խոսում կամ մտահոգվում իրենց սոցիալական խմբի անդամները: Կապ հաստատեք այդ համայնքները ներկայացնող հասարակական կազմակերպությունների հետ և պարզեք, թե նրանց կյանքի որ կողմերն են մնացել չլուսաբանված: Այդ կազմակերպությունների միջոցով քաղաքական, հասարակական, տնտեսական և այլ զարգացումների մասին տեղեկություններ հայթայթեք, ինչն այլ կերպով իմանալը հնարավոր չէր լինի:
- Թերահավատ եղեք: Ստուգեք փաստերը: Դուք չպետք է անմիջապես հավատաք այն ամենին, ինչ լսում եք ձեր կամ այլ համայնքի որևէ անդամից: Զրուցելիս կամ հարցազրույց վարելիս հիշեք, որ յուրաքանչյուր ոք ունի իր տեսակետը և ուրույն շահերը: Դուք պետք է հաշվի առնեք նրանց դիրքորոշումները, բայց միևնույն ժամանակ հավասարակշռեք այն մյուսների ասածների և այն ամենի հետ, ինչն ինքներդ եք ուսումնասիրել:
- Փոքրամասնություններին մի վերաբերվեք իբրև միաձույլ միավորների: Արտաքուստ թվում է, թե համայնքի բոլոր անդամներն ունեն միևնույն մոտեցումը, սակայն իրականում ամեն ինչ այդքան էլ պարզ չէ: Երբ մի խումբը մյուսին դիտում է որպես գործող միասնական միավոր, դա կարող է մեծապես սրել լարվածությունը՝ հանգեցնելով վախի և ատելության: Զրուցեք հնարավորինս շատ մարդկանց

հետ այլ սոցիալական խմբերից և փորձեք պարզ և մանրակրկիտ ներկայացնել տեսակետների ամբողջ ներկապնակը:

- Շատ մարդիկ տարբեր սոցիալական խմբերի նկատմամբ ունեն ընդգծված բացասական վերաբերմունք: Եթե որոշ պաշտոնյաներ, քաղաքական և քաղաքացիական գործիչներ, հոգևորականներ կամ այլ անձինք կարող են իրենց թույլ տալ վիրավորական արտահայտություններ օգտագործել փոքրամասնությունների մասին խոսելիս, ապա դա չի նշանակում, թե դուք, իբրև լրագրող, պետք է ձեր նյութի մեջ ընդգրկեք նման արտահայտություններ: Անհրաժեշտության դեպքում վերաձևակերպեք միտքը: Եթե որոշեք այդ արտահայտությունները մեջբերել ուղղակիորեն, նկատի ունեցեք, որ տվյալ փոքրամասնության անդամները վիրավորական և զայրացնող են համարելու դրանք:

Խորհուրդներ սոցիալական տարբեր խմբերի անդամների հետ հարցազրույց անցկացնելու վերաբերյալ

- Եղեք նրբանկատ և խոհուն: Հասկացեք, որ ձեզանից և հասարակության մեծամասնությունից տարբերվող մարդիկ կարող են խուճապի մատնվել լրագրողի հետ զրուցելիս, եթե անգամ դա նրանց առաջին հարցազրույցը չէ: Նրանց ավելի անկաշկանդ դարձնելու համար կարող եք խոսակցությունը սկսել ընտանիքի, աշխատանքային կյանքի, հոբբիի և այլնի մասին փոքրիկ զրույցով: Դա կօգնի նրանց լիցքաթափվել: Նման մոտեցմամբ

կհասկանաք, որ դուք նրանց միայն իբրև փոքրամասնության ներկայացուցչի չեք դիտում, ավելին՝գիտակցում եք, որ նրանք կյանքի այլ կողմեր ևս ունեն:

- Հավաստիացրեք, որ հասկանում եք հարցազրույց տալու համար նրանց առաջադրած ցանկացած նախապայման: Պարզեք, թե արդյոք դեմ չե՞ն լինի, եթե նյութում նշեք իրենց անունը: Կամ գուցե նրանք չեն առարկի, որ գործածեք իրենց անունը, սակայն կնախընտրեն չնշել իրենց ազգանունը, քաղաքը կամ այլ մանրամասներ, որոնց միջոցով կարող է պարզ դառնալ իրենց ինքնությունը: Ապանձնավորումը շատ կարևոր է, եթե այդ մարդիկ ունեն վախեր և չեն ցանկանում թիրախավորվել մեծամասնության կամ անգամ իրենց համայնքի ներկայացուցիչների կողմից: Ընդառաջեք նրանց խնդրանքներին և մի փորձեք համոզել հակառակը:
- Հարցազրույցից առաջ հնարավորինս շատ ինֆորմացիա հավաքեք ձեր աղբյուրի մասին. պարզեք, թե ում մոտ եք գնում և ինչ ակնկալիքներով: Բայց միայն տեղեկացված լինելը բավարար չէ լավ հարցազրույց անելու համար, պետք է նաև կարողանաք ճիշտ հաղորդակցվել՝ զրուցակցին տրամադրեք խոսել և պատմել հնարավորինս անկեղծ, մանրամասն, կոնկրետ, պարզ և զգացմունքային:
- Եթե ունեք հարցազրույց անցկացնելու վայրն ընտրելու հնարավորության, ապա ընտրեք այն տեղը, որտեղ նրանք ավելի անկաշկանդ կզգան իրենց: Հաճախ ամենալավ տարբերակը մարդկանց հետ իրենց միջավայրում, օրինակ, իրենց տանը կամ գրասենյակում զրուցելն է, քանի որ հենց այստեղ է, որ նրանք հարմարավետության գոտում են: Դա նաև կօգնի ձեզ հասկանալ նրանց դիրքորոշումները, քանի որ այդպիսով հնարավորություն կունենաք շփվել նրանց հետ իրենց իսկ միջավայրում, և հնարավոր է, որ նրանք ավելի բացահայտ խոսեն, ինչը

չէին անի պաշտոնական կամ անծանոթ պայմաններում:

- Թույլ տվեք նրանց յուրովի ներկայացնել իրենց պատմությունը: Եթե նրանք ցանկանում են սկսել 10 տարի առաջ տեղի ունեցածից, ապա հնարավորություն տվեք, նույնիսկ եթե ձեր կարծիքով դա այնքան էլ չի առնչվում ձեզ հետաքրքրող հարցին: Փորձեք բավականաչափ ժամանակ տրամադրել նրանց, որպեսզի ստիպված չլինեք շտապեցնել՝ անցնելու բուն թեմային: Հաճախ մարդիկ ավելի անկաշկանդ են զգում իրենց համար հարազատ թեմաներից խոսելիս, երբ հանգամանորեն արտահայտվելու հնարավորություն են ունենում: Բայց նաև կասկածեք ձեր զրուցակցի ներկայացրած խոսքին, հարցեր տվեք նրան այնպես, ինչպես կանեիք ցանկացած այլ մեկի հետ, որպեսզի հստակ հասկանաք՝ որն է փաստ, որը՝ կարծիք:
- Նախօրոք կազմեք հարցաշար, սակայն օգտագործեք այն որպես ընդհանուր ուղեցույց, այլ ոչ թե խստորեն հետևեք դրան: Ձեր հարցերն ուղղելիս պետք է ուշադիր լսեք նրանց պատասխանները, որպեսզի հետագայում այլ դիրքորոշումներ ևս ճշտեք: Մի եղեք ձեր պատկերացումների գերին, այլ եղեք բաց, ճկուն և ուշադիր, որ կարողանաք որսալ այն պահը, երբ ձեր զրուցակիցը կարևոր խնդիր է նշում, որի մասին դուք նախապես գուցե տեղյակ էլ չէիք:
- Կարևոր չէ, թե նրանք որքան տարբեր են ձեզանից. նրանց ապրել մի սովորեցրեք: Եթե նրանց նկատմամբ քննադատական վերաբերմունք ցուցաբերեք, նրանք անմիջապես կզգան դա և հավանաբար ազատ չեն արտահայտվի կամ վստահ չեն լինի, թե դուք նրբանկատ կգտնվեք նրանց փոխանցած տեղեկատվության նկատմամբ:
- Ինքներդ ձեզ հարցրեք՝ որքանով եք անաչառ տվյալ խմբի նկատմամբ: Եթե կանխակալ կարծիք ունեք կամ կարծրատիպային մոտեցում, ավելի լավ է՝ հրաժարվեք

հարցազրույցից, քանի որ այդ վերաբերմունքը կազդի թե՛ ձեր հարցերի և թե՛ նյութի վրա:

- Հիշեք, որ ձեր զրուցակիցները փորձագետներ են: Պարտադիր չէ, որ փորձագետը բժիշկ կամ գիտնական լինի. Ձեր զրուցակիցները ունեն սեփական կյանքի փորձ: Ցույց մի տվեք, թե գիտեք՝ ինչ են նրանք պատմելու, քանի որ այդպիսով կփակեք անակնկալների ճանապարհը: Դուք ցանկանում եք, որ նրանք ներկայացնեն իրենց կյանքն ու փորձառությունը, իսկ ձեր խնդիրը դրանք լսարանին փոխանցելն է:
- Զրույցի վերջում հարցրեք՝ արդյոք նրանք ճանաչո՞ւմ են այնպիսի մարդկանց, որոնք ևս կցանկանային հարցազրույց տալ: Դա հետագա հոդվածների համար աղբյուրներ գտնելու հրաշալի միջոց է: Անշուշտ, որքան զգայուն լինեք նրանց հետ հարցազրույցի ընթացքում, այնքան նրանք ավելի ազատ կզգան մեկ ուրիշի անունը ձեզ առաջարկելիս:
- Ամեն ինչից զատ ուշադիր եղեք տեղեկատվությունն օգտագործելիս: Երբ ինչ-որ մեկը համաձայնում է զրուցել ձեզ հետ, դրանով մեծ ծառայություն է մատուցում ձեզ: Նրանց մասին գրեք զգուշությամբ և հոգատարությամբ: Դուք հեշտությամբ կարող եք վանել ձեր լսարանին, եթե այլ խմբի պատկանող մարդկանց մասին խոսեք՝ հիմնվելով կանխակալ վերաբերմունքի վրա, գործածեք զայրացնող կամ վիրավորող արտահայտություններ, օգտվեք ոչ ստույգ տեղեկություններից կամ կանխակալ վերաբերմունքի և կարծրատիպերի այլ դրսևորումներ ցուցաբերեք: Ի վերջո, ձեր դերն է՝ օգնել լսարանին հասկանալ և կիսել ուրիշների ապրումները և ոչ թե վախեցնել նրանց:
- Միշտ ձայնագրեք հարցազրույցը՝ անկախ այն բանից, թե ինչ հարթակում եք պատրաստվում օգտագործել: Պահեք այդ ձայնագրությունը վերջնական նյութի հրապարակումից հետո անգամ:

ԷԹՆԻԿ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Էթնիկ տարաձայնությունները, անշուշտ, իրենց ազդեցությունն ունեցան հետսովետական երկրներում վերջին տասնամյակներին տեղի ունեցած պատերազմների և ընդհարումների վրա: Չնայած՝ կրոնական և այլ գործոնները նույնպես սրում էին իրավիճակը, բայց հենց էթնիկ տարբերության ընկալումն էր, որ արթնացրեց ագրեսիվ կրքեր Հարավային Կովկասում. Աբխազիա, Լեռնային Ղարաբաղ, Հարավային Օսիա: Լրատվամիջոցները և լրագրողները հաճախ են հայտնվում զգայուն, երբեմն էլ՝ անելանելի իրավիճակներում: Որպես որոշակի էթնիկ համայնքի ներկայացուցիչ, նրանց համար հաճախ դժվար է լրագրողական օբյեկտիվ դիրքորոշում ունենալ: Նրանք ավելի շատ իրենց տեսնում են որպես որոշակի էթնիկ համայնքի շահերի պաշտպաններ, քան իրավիճակը խորքային ուսումնասիրող դիտորդներ: Այս կողմնակալ մոտեցումները հաճախ արտացոլվում են լրատվամիջոցներում, երբ էթնիկ խմբերը նկարագրվում են որպես անհանդուրժող, չար և հակամարտության միակ մեղավորներ: Կան լրագրողներ, որ շարունակ բացասական կարծրատիպեր են սերմանել հասարակության տարբեր խմբերի համար՝ անտեսելով ընդհարման սոցիալական և քաղաքական արմատները, չեն ջանացել լուսաբանել մեծամասնության տեսակետից տարբերվող որևէ այլ կարծիք և չեն ներկայացրել իրադարձությունը՝ լայն իմաստային համատեքստով ու պատմական ակնարկով: Ստորև առանձնացված են որոշ կարևոր առաջարկներ, որոնք կօգնեն լրագրողներին էթնիկ խմբերի նկատմամբ հարգալից վերաբերմունք և հանդուրժողականություն դրսևորել իրենց նյութերում.

- Երբեք հոդված մի գրեք՝ առանց քննարկվող նյութի վերաբերյալ տարբեր դիրքորոշումներ ունեցող մարդկանց

հետ հարցազրույց անցկացնելու: Միայն մեկ տեսակետի վրա հիմնված նյութը կողմնակալ կլինի: Եթե ձեր զրուցակիցը քննադատում է մի ամբողջ էթնիկ խմբի, ապա այդ խմբի ներկայացուցիչներին ևս պետք է հնարավորություն ընձեռվի՝ արձագանքելու քննադատություններին: Հակառակ դեպքում, լրագրողը պարզապես դառնում է մի կողմի քարոզչության խոսափող:

- Ուշադրություն դարձրեք ձեր բառերի և արտահայտությունների ընտրությանը: Խուսափեք այլ էթնիկ պատկանելություն ունեցող մարդկանց մասին սովորաբար գործածվող ոչ արժանապատիվ/վիրավորական արտահայտություններից: Եթե մեջբերում եք նման արտահայտություններ գործածող մարդկանց, ապա ուղղակի մեջբերման փոխարեն փորձեք այդ միտքն այլ խոսքերով արտահայտել: Որոշ բառեր կարող են մի լեզվով վիրավորական հնչել, իսկ մյուսով՝ ոչ: Նաև հիշեք, որ միևնույն բառի նկատմամբ մարդիկ տարբեր պատկերացումներ կամ ընկալումներ ունեն: Դուք լրագրող եք և պետք է հասկանաք բոլոր նրբերանգները: Եթե չգիտեք՝ արդյոք տվյալ արտահայտությունը վիրավորակա՞ն է, ապա հարցրեք այդ մասին հասցեատերերին, թե ինչպես են նրանք դա ընկալում:
- Ավելի լավ է ինֆորմացիայի աղբյուրներ գտնել ոչ թե ձեր, այլ ուրիշ էթնիկ խմբերում: Կապվեք նրանց շահերը ներկայացնող հասարակական կազմակերպությունների, քաղաքացիական նախաձեռնությունների հետ և հանդիպում խնդրեք նրանցից: Հարցրեք նրանց գործերի, հույսերի, սովորույթների և հոգսերի մասին: Որոշ ժամանակ անցկացրեք նրանց համար հավաքատեղի հանդիսացող մշակութային և հանրային վայրերում՝ համայնքային կենտրոններում, դպրոցներում, թատրոններում և այլուր, ինչպես նաև զրուցեք հնարավորինս շատ մարդկանց

հետ՝ ներառելով տվյալ էթնիկ խմբին պատկանող որքան հնարավոր է՝ շատ ենթախմբեր (կանայք, երեխաներ, գյուղաբնակներ կամ քաղաքաբնակներ և այլն): Նրանց տեսակետը հասկանալու ամենալավ տարբերակը նրանց միջավայրում հայտնվելն է, որքան էլ դա սկզբնական շրջանում բարդ լինի:

- Ձնենք ձեր ներաշխարհը և բացահայտեք ձեր կարծրատիպերն ու կանխակալ վերաբերմունքը: Գիտակցաբար, թե ոչ, մեզանից յուրաքանչյուրը կանխակալ կարծիք ունի այլ սոցիալական խմբերի անդամների մասին, ինչը որոշ դեպքերում կարող է հասկանալի լինել, բայց ոչ կիրառելի: Այդուհանդերձ, լրագրության արդյունավետությունը և բարեխղճությունը կախված է այդ կանխակալ կարծիքները բացահայտելու և մի կողմ դնելու կարողությունից: Իրականում սա է իրենց կյանքի և ապրումների մասին պատմող մարդկանց ունկնդրելու միակ տարբերակը:
- Համոզվեք, որ դեպքերն ու իրադարձությունները ներկայացնում եք համատեքստով, այլ ոչ թե ուղղակի կենտրոնանում այն բանի վրա, թե ինչ է կատարվել: Ոչինչ անսպասելիորեն չի պատահում: Երբ էթնիկ վեճեր և կոնֆլիկտներ են ծագում, լրագրողները շատ հաճախ յուրաքանչյուր միջադեպ լուսաբանում են առանձին: Բայց, սովորաբար, կողմերից յուրաքանչյուրը յուրովի է մեկնաբանում ստեղծված իրավիճակը: Նյութն անաչառորեն մատուցելու համար պետք է ըմբռնեք այդ պատմությունը, ինչպես նաև ներկայացնեք համապատասխան դրդապատճառները, որպեսզի ձեր լսարանը կարողանա ընկալել խճճված խնդրի բուն էությունը:
- Բացի իբրև առաջնորդ ներկայացող անձանցից, զրուցեք նաև երկու կողմերի «շարքային» անդամների հետ: Հաճախ տեղում գտնվող տղամարդիկ, կանայք և երեխաները բոլորովին այլ կարծիք են ունենում կատարվածի

մասին, քան մարդիկ, որոնք իրենց իրավունք են վերապահում խոսել կամ գործել ամբողջ խմբի անունից: Ի՞նչ են իրականում ցանկանում տեղացիները: Հարցրեք՝ արդյոք նրանց անունից իրականացվող գործողությունները, իրենց կարծիքով, նպատակին հասնելու ամենաարդյունավե՞տ տարբերակներն են:

- Ձեր ուշադրությունը կենտրոնացրեք էթնիկ բախումների ոչ միայն տեսանելի և ակնառու հետևանքների, այլ նաև խորքային պատճառների վրա: Հոգեբանական բնույթի ինչպիսի՞ տևական տրավմա է առաջացել: Ինչպիսի՞ն են կոնֆլիկտի հասարակական ու տնտեսական հետևանքները: Ինչպիսի՞ եզրակացություններ կարելի է անել ապագայի համար՝ ելնելով կատարվածից:
- Երկու կողմերի տեսակետները ներկայացնելիս փորձեք նախ գտնել դրանց ընդհանրությունները և ապա միայն լուսաբանել: Չափազանց հեշտ է գտնել մարդկանց, որոնք բացասաբար կարտահայտվեն էթնիկ այլ խմբերի անդամների մասին: Սակայն լրագրողը, որն ավելի խորությամբ և բազմակողմանիորեն է հետաքննում, կարող է բացահայտել, որ երկու կողմերի նպատակներն իրականում, ի վերջո, այնքան էլ տարբեր չեն, որքան մարդիկ են կարծում:
- Փորձեք կենտրոնանալ ինչպես հակամարտող կողմերի զգացմունքների, այնպես էլ ընթացիկ իրադարձությունների վրա: Ի վերջո, բոլորս էլ մարդ արարածներ ենք, և ցանկացած սոցիալական խմբի անդամների համար հաճախ ավելի հեշտ է կիսել քաղաքացիների հոգսերն ու վշտերը, քան ընդունել զորահրամանատարների ու քաղաքական գործիչների սադրիչ կամ ագրեսիվ հայտարարությունները: Շատ մարդիկ ունակ են կիսելու երեխայի կամ ծնողի մահվան վիշտը, օջախի կամ հույսի կորուստը:
- Հիշեք, որ ամենուր բազմակարծություն է, և մարդիկ

մտածում են տարբեր կերպ: Յուրաքանչյուր համայնքում կան մեծամասնության կարծիքը չկիսող անհատներ ու խմբեր: Հնարավոր է, որ որոշ մարդիկ չեն արտահայտվում՝ վախենալով հարևանների, քաղաքական գործիչների կամ այլոց ճնշումներից: Սակայն պետք է միշտ գիտակցել, որ նույնիսկ թվացյալ միատարր հասարակություններում առկա են տարակարծիք խմբեր, և պետք է ջանալ հայտնաբերել նրանց ու ներկայացնել վերջիններիս մոտեցումները:

- Փորձեք պատշաճ նկարագրել իրադարձությունները և մեջբերել տեղեկատվության ձեր աղբյուրների խոսքը՝ փորձելով հրաժարվել «վայրագ», «անմարդկային», «բարբարոս» և «թշնամի» բառերից: Լրագրողները հաճախ դիմում են դրանց օգնությանը՝ կողմերից մեկին դատափետելով և, միտումնավոր կամ գուցե ոչ, մյուս կողմին գրգռելով և այդպիսով բռնությունները շարունակական դարձնելով: Նման կերպ վարվելով՝ նրանք իրականացնում են հակամարտության կողմերից մեկի նպատակները և տարածում վերջինիս տեսակետները:
- Մի մոռացեք, որ պետք է թերահավատ լինեք: Հակամարտության կողմերից և ոչ մեկին թույլ մի տվեք օգտագործել կամ կառավարել ձեզ: Ստուգեք յուրաքանչյուր փաստ: Եթե դուք վստահ չեք փաստի ճշգրիտ լինելուն՝ կամ շրջանցեք այդ տեղեկատվությունը, կամ էլ այն վերագրեք համապատասխան աղբյուրին, բայց մի ներկայացրեք այն իբրև ճշմարտություն: Ձեր լսածը գնահատելիս հաշվի առեք անցյալում տվյալ աղբյուրի վստահելիությունը: Լսարանին հնարավորինս շատ մանրամասներ հայտնեք ձեր տեղեկատուի և նրա հիմնավորումների մասին, որպեսզի մարդիկ կարողանան ինքնուրույն դատել, թե որքանով են դրանք ստույգ:
- Անտեսեք իշխանությունների և այլոց կողմից արվող

«հավատարմություն» կամ «ազգային համերաշխություն» հանդես բերելու կոչերը: Ձեր դերը ծայրահեղական գործողություններ հրահրող ռասայական կարծրատիպերի ամրապնդումը, կողմերից մեկի ջատագով ու քարոզիչ հանդես գալը կամ չհիմնավորված ասեկոսների տարածումը չէ: Բարեխիղճ և ազնիվ եղեք ձեր աշխատանքում:

- Պաշտոնյաներն ու քաղաքական գործիչները, մեծ ու փոքր քարոզիչները կարող են տարբեր նպատակներով վիրավորական արտահայտություններ գործածել փոքրամասնությունների մասին խոսելիս, բայց հիշեք, որ դուք եք որոշում, թե նրանց խոսքից ինչը մեջբերեք, ինչը՝ վերարտադրեք, ինչը՝ անտեսեք: Նյութի տակ դուք եք ստորագրում, և ցանկացած վիրավորական արտահայտություն, անգամ եթե հնչել է ձեր զրուցակցի կողմից, ընկալվում է որպես ձեր խոսք, որովհետև դուք եք բերում այդ ձևակերպումը մեդիա դաշտ: Անհրաժեշտության դեպքում այդ միտքն այլ խոսքերով արտահայտեք: Ամեն դեպքում, եթե որոշեք այդ արտահայտությունները մեջբերել բառացի, ապա նկատի ունեցեք, որ տվյալ փոքրամասնության անդամները վիրավորական և սադրիչ են համարելու դրանք:

Դեպքերի ուսումնասիրություն

Այս և հետևյալ բաժիններում բերված օրինակները ներկայացնում են Հայաստանում «Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ – Հայաստան»-ի կողմից հավաքագրված հոդվածների վերլուծությունը: Հոդվածներն ուղեկցվում են նշումներով, որոնք մեկնաբանում են արդյունավետ կամ վիճահարույց լրագրողական պրակտիկան և առաջարկում բազմազանության վերաբերյալ հրապարակումների որակի բարելավման ընդունելի մոտեցումներ կամ ուղեցույցներ:

Այս հոդվածում արծարծվում են Հայաստանի ամենամեծ ազգային փոքրամասնության՝ եզդիների համայնքում կանանց իրավունքների հարցերը: Հոդվածը լեցուն է ոչ միայն կարծրատիպային ընկալումների վերարտադրությամբ, այլև դրանց ամրապնդմամբ՝ առանց ներկայացնելու «կանոնից շեղվող» պատմություններ, որոնք անշուշտ կան, և առանց լուծումներ առաջարկելու:

Մինչև ո՞ւր են ձգվում եզդի կնոջ իրավունքները[1]

Անորոշ ձևակերպում է. հասկանալի չէ, թե կոնկրետ ինչպիսի նորմեր են, և թե ինչպես են ՀՀ-ում ոտնահարվում եզդի կնոջ իրավունքները:

Ինչո՞ւ պետությունը չի կարող փոփոխություն անել: Հակառակը՝ պետությունը պարտավորություն ունի պաշտպանելու իր քաղաքացիներին, և եթե խոսքը տվյալ դեպքում եզդի կանանց՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված իրավունքների մասին է, ապա ավանդույթները դրանց պաշտպանության հարցում խոչընդոտ լինել չեն կարող:

Թեև միջազգային իրավունքի նորմերը պարտադրում են Հայաստանին թույլ չտալ կնոջ իրավունքների այնպիսի ոտնահարում, ինչպիսին այսօր Հայաստանում ապրող եզդի կանանց հանդեպ է դրսևորվում, սակայն մեր պետությունը չի կարող այս հարցում որևէ փոփոխություն անել, քանի որ սա կդիտարկվի որպես ոտնձգություն ազգային փոքրամասնությունների իրավունքների և ավանդույթների դեմ:

Ժամանակակից կյանքը թեև շատ փոփոխություններ է բերում բոլոր ազգերին, սակայն եզդիները շարունակում են մնալ նույնը. նրանք դեռ ամուսնանում են միայն իրենց ազգի ներկայացուցչի հետ՝ անպայման հաշվի առնելով, թե որ կաստայից է (շեխ, փիր, մրիդ), արգելում են իրենց աղջիկներին կրթություն ստանալ, անձամբ են որոշում իրենց երեխաների ճակատագիրը և ոչ մի դեպքում չեն խախտում իրենց ընդունած ներքին օրենքները, որոնք երբեմն պարզապես ապշեցնում են:

[1] https://www.1in.am/12167.html

Կրկին շատ ընդհանրական, չհիմնավորված պնդում է, որը ոչ միայն չի արտացոլում իրականությունը, այլև կարող է վիրավորական լինել շատ եզդիների համար, որոնք պահում են իրենց ազգային ինքնության շատ բաղադրիչներ, միաժամանակ կրթություն են ստանում, կրթության են տալիս իրենց երեխաներին և այլն:

«Սեր» կոչվածը եզդիների մոտ ընդհանրապես չկա: Մինչև այժմ էլ եզդի աղջիկներին, առանց նրանց համաձայնության, 14–16 տարեկանում ամուսնացնում են, և դրա դիմաց աղջկա ծնողները գումար են ստանում: Եզդի տղան էլ երբեմն մի ամբողջ կյանք հայ աղջկա է սիրում, բայց ամուսնանում է եզդու հետ: Կոպիտ ասած՝ եզդի հարսնացուները վաճառվում են՝ դեռ չհասած ամուսնության տարիքին, իսկ տղաները՝ անկախ կյանքում իրենց ունեցած ձեռքբերումներից, չեն ունենում իրենց ցանկությունն իրագործելու քաջություն:

Սա պնդո՞ւմ է, թե՞ կարծիք, և ո՞վ է դրա հեղինակը. հոդվածագի՞րը, նրա զրուցակիցներից ինչ-որ մե՞կը: Ընդհանրացումները շարունակվում են: Նույնիսկ տարածված երևույթները նկարագրելիս ցանկալի կլիներ օգտագործել «հաճախ», «սովորաբար», «երբեմն» կամ նմանատիպ մակբայեր՝ անհարկի ընդհանրացումից խուսափելու համար: Առհասարակ, եթե ստիպողաբար ամուսնացնում են, դա դեռ չի նշանակում, որ «սեր» զգացմունքը չկա. այն կարող է չարտահայտվել:Արդյոք եզդիական բոլոր ընտանիքներո՞ւմ է նույն կանոնը գործում: Սիմայի կարծիքը միանշանակորեն ընդունելու փոխարեն արժեր առանձին ուսումնասիրություն

«Կինն այստեղ բացարձակապես անտեսված է: Ամուսնությունից հետո եզդիների համար անպատվաբեր է համարվում կնոջ հասարակական գործունեությունը, ավելին՝ եզդի կինը տանը իրավունք չունի տղամարդու հետ միևնույն սեղանից հաց ուտելու»,- պատմում է ԵՊԲՀ-ի ուսանող, ազգությամբ եզդի, սակայն սեփական ավանդույթներին ընդդիմացող 24–ամյա Սիման:

Սիմայի պատմելով՝ շատ եզդիներ իրենց հարսներին արգելում են հիվանդանոցում ծննդաբերել՝ այդ գործողությունը կազմակերպելով տանը: Դատապարտվում է անգամ կնոջ հմայքի համար օգտագործվող ցանկացած կոսմետիկայի օգտագործումը: Ծննդյան տոների կամ առիթների ժամանակ տղամարդիկ առանձին են նստում, կանայք՝ առանձին: Եթե տանը շատ տղամարդ է լինում, միշտ ջահել տղաներն են սպասարկում: Իհարկե, լինում են նաև բացառություններ, ինչն ավելի շատ հանդիպում է մայրաքաղաքում բնակվող եզդի համայնքում, սակայն գյուղական վայրերում եզդիները մեկուսացված են իրենց «օրենքներով»:

անել կամ փորձել հակառակ օրինակը բերել:

Պետությունը և քաղհասարակությունը, անկախ կոնկրետ դեպքերում բողոքի առկայությունից, դարձյալ կարող են և պետք է փորձեն դիմագրավել խտրական պայմաններին: Լրագրողական նյութերում նման եզրահանգումները կարող են անելանելիության զգացողություն առաջացնել եզդի կանանց մոտ:

Եվ որքան էլ որ մեր երկրում կնոջ իրավունքների այսպիսի ոտնահարումն անցանկալի է, եզդի կանանց կողմից որևէ բողոք չկա, և նրանց մեղադրել էլ պետք չէ: Ցանկացած նման բան նրանց կողմից կդիտարկվի որպես քայլ ազգային ավանդների դեմ, և այս պարագայում եզդի կինը կմերժվի ազգակիցների կողմից:

«Ոչ մեկն էլ չի համարձակվի հեռանալ, որովհետև նրան այլևս եզդի չեն համարի: Ոչ մի բան հնարավոր չէ փոխել, մարդասպանություն կլինի, նրան դուրս կթողնեն իր կաստայից, մայրն ու հայրը երես կթեքեն, դա խայտառակություն է, իսկ իրենք կառչած են իրենց արմատներից»,- պատմում է եզդիական «Լալըշ» թերթի խմբագիր Օվսաննա Մադաթյանը:

Հետևյալ երկու նյութերը, ըստ էության, քրեական հանցագործությունների մասին պաշտոնական հաղորդագրություններ են: Լրատվամիջոցները բառացիորեն արտատպել են դրանք՝ առանց դեպքերի մասին սեփական ուսումնասիրությունն անելու: Բացի դրանից՝ վերնագրում առանց անհրաժեշտության շեշտվում է տուժածների կամ մեղադրյալների էթնիկ պատկանելությունը՝ այդպիսով շահագործելով հասարակությունում առկա որոշ կարծրատիպեր: Բացի դրանից՝ հոդվածներում ներկայացված են տուժածների կամ հարցազրույցին մասնակցողների անձնական տվյալները (անուն, համալսարան, մասնագիտություն), որոնք բավարար են անձի նույնականացման համար և կարող են թիրախավորել վերջիններիս:

Երևանում տղամարդը հարաբերություն է ունեցել ռուս կնոջ հետ, հետո հափշտակել նրա մոտ առկա ամբողջ գումարը, այդ թվում՝ իր վճարած[2]

Թեև այս հաղորդագրությունում նշվում է միայն ենթադրյալ տուժողի քաղաքացիությունը, սակայն լրատվակայքը վերնագրում, չգիտես ինչու, նրան «ռուս» է անվանում: Չէ՞ որ Մարիա Պ.-ն կարող էր լինել բազմազգ Ռուսաստանում բնակվող որևէ այլ ժողովրդի ներկայացուցիչ, այդ թվում, օրինակ, հայ: Եվ առհասարակ, նյութում չի հիմնավորվում, թե ինչ տեղեկատվական անհրաժեշտությունից ելնելով է շեշտվում տուժողի էթնիկ պատկանելությունը: Հոդվածում որևէ ակնարկ չկա այն մասին, թե հանցանքը տեղի է ունեցել ազգային հողի վրա:

ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Երևան քաղաքի վարչության քրեական հետախուզության բաժնում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ նույն օրը՝ ժամը 06:00-ից 07:00-ն ընկած ժամանակահատվածում, անհայտ անձը այցելել է Արամի փողոցի շենքերից մեկի բնակարան, որտեղ բնակվում է ՌԴ քաղաքացի 46-ամյա Մարիա Պ.-ն ու նրա նկատմամբ ոտնձգություն կատարել:

Գագիկ Շամշյանի հաղորդմամբ՝ Մարիա Պ.-ն հայտնել է, որ իր կողմից սեռական ծառայություն մատուցելու ժամանակ այդ «կլիենտ»-ը իրեն վճարել է 40 հազար դրամ, ապա սեռական ծառայությունից օգտվելուց հետո նա Մարիա Պ.-ի ներկայությամբ օգտագործել է թմրամիջոց, իր մոտ եղած ատրճանակի սպառնալիքի տակ կապել նրան, նրանից հափշտակել 700 ԱՄՆ դոլար, 320 լարի և իր վճարած 40 հազար դրամը, ապա արձակել է նրա ոտքերն ու ձեռքերը և սպառնալիքների ներքո իջեցրել շենքի բակ, նրան թողել միայնակ ու ավտոմեքենայով դիմել փախուստի:

«Գագիկ Շամշյանի հաղորդմամբ» արտահայտությունը հայաստանյան շատ լրատվամիջոցների համար տարիներ ի վեր հավաստիության ցուցիչ է: Կա տարածված ընկալում, որ այս լրագրողը սերտորեն համագործակցում է իրավապահ մարմինների հետ, հետևաբար, նրա տված տեղեկատվությունը կարելի է համարել պաշտոնական: Այդուհանդերձ, անհրաժեշտ է ստուգել ցանկացած տեղեկատվություն, անգամ պաշտոնականը:

2 https://armtimes.com/hy/article/275622

24-ամյա ռուս կինը Հայաստանում գումարի դիմաց շահագործել է հայ կանանց. ի՞նչ են բացահայտել իրավապահները[3]

Կրկին, ինչպես նախորդ նյութում, ՌԴ քաղաքացին վերնագրում ներկայացվում է որպես ռուս, թեև հաղորդագրությունում դրա մասին որևէ տեղեկություն չկա:

Ավարտվել է ՌԴ քաղաքացի հանդիսացող, 24-ամյա կնոջ կողմից կատարված կավատության դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:

ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչությունում իրականացված քննչական և վարութային գործողությունների արդյունքում ձեռք բերված փաստական տվյալներով հիմնավորվել է, որ 2022-2023թթ. հիշյալ 24-ամյա կինը, այլ անձանց հետ, խմբի կազմում, շահադիտական նպատակով տարբեր սեռական ծառայություններ մատուցող անձանց Հայաստանում ներգրավվել է պոռնկությամբ զբաղվելու մեջ, որոնց առաջարկվել է ՀՀ-ում զբաղվել պոռնկությամբ և դրա արդյունքում ձեռք բերված գումարները կիսվել խմբի մյուս անդամների հետ:

Այստեղ ասվում է սեռական ծառայություն մատուցող անձանց՝ Հայաստանում պոռնկությամբ զբաղվելու մեջ ներգրավելու մասին: Սակայն հաղորդագրությունում չի նշվում այդ անձանց քաղաքացիությունը կամ էթնիկ ծագումը:

Մասնավորապես, նրանք հեռահաղորդակցման հարթակներով նամակագրություններ են վարել ՌԴ մի շարք քաղաքացիների հետ, նրանցից պահանջել են էրոտիկ բնույթի լուսանկարներ: Ստանալով համաձայնություն՝ նրանց նկարներով անհատական էջեր են բացել էսկորտ ծառայությունների մատուցման նպատակ հետապնդող ինտերնետային կայքում, կազմակերպել նշված անձանց ժամանումը ՀՀ և Երևան քաղաքի Բուզանդի փողոցում գտնվող շենքում, օրական վարձավճարով, նրանց տեղավորել բնակարաններում:

3 https://armlur.am/1319239/

Այս հատվածում երևում է, որ ենթադրյալ հանցանքի զոհեր են նաև ՌԴ քաղաքացիներ, այնինչ, վերնագրում որպես զոհ են ներկայացվում միայն հայ կանայք: Ավելին, «հայ կանայք» ձևակերպումը ևս խնդրահարույց է, քանի որ գուցե ՀՀ քաղաքացիների մեջ կան էթնիկ այլ փոքրամասնությունների ներկայացուցիչներ:

Հիշյալ ինտերնետային կայքի միջոցով տարբեր հաճախորդներ կապ են հաստատել խմբի անդամների հետ, ովքեր, հաճախորդների հետ խոսակցություն վարելով, պայմանավորվել են սեռական ծառայությունների մատուցման ժամի և գումարի մասին և նրանց տվել բնակարանների հասցեները: ՌԴ-ից ՀՀ ժամանած վերոնշյալ կանայք, ստանալով հաճախորդների տվյալները, ընդունել են նրանց, իսկ ստացված գումարի 50 տոկոսը փոխանցել խմբի անդամներին:

Ամբողջ նյութի մեջ ոչ մի բառ չկա «ռուս կնոջ կողմից հայ կանանց շահագործման մասին», և հայտնի չէ, թե որտեղից է լրատվամիջոցը վերցրել նման տեղեկություն՝ վերնագրում շեշտելու համար:

Բջջային հեռախոսի զննությամբ ձեռք են բերվել վեջինիս կողմից կավատություն կատարելու վերաբերյալ փաստական տվյալներ, սեռական ծառայությունների մատուցման գովազդներ, սեռական ծառայություններ մատուցող անձանց հետ ամենօրյա հաղորդագրություններ, վաստակած գումարների հաշվարկներ և այլն:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա 24–ամյա կնոջը մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 298-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (4 դրվագ): Նրա նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է գրավը և բացակայելու արգելքը:

Վերջինիս վերաբերյալ մասն անջատվել է առանձին վարույթ, նախաքննությունն ավարտվել է, և քրեական վարույթի նյութերը, մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են դատախազին՝ հաստատելու և դատարան ուղարկելու համար: Խմբի մյուս անդամների մասով նախաքննությունը շարունակվում է:

Այս նյութը բացասաբար է ներկայացնում Հնդկաստանից եկած ներգաղթյալներին՝ անհարկի շեշտելով միջադեպի ենթադրյալ մեղավորների էթնիկ պատկանելությունը:

Արտակարգ դեպք Երևանում. հերթական անգամ վնասել են «Zhongtong» ավտոբուսը, որում եղել են մեծ թվով ուղևորներ. կասկածյալը, որին փնտրում են, ազգությամբ հնդիկ է[4]

Նյութի հենց սկզբում նշվում է՝ «հերթական անգամ վնասել են» համայնքի գույքը, բայց ոչ այս, ոչ էլ մյուս պարբերություններում չի հիշատակվում որևէ այլ նմանատիպ դեպք:

Ուշադրություն դարձրեք, որ մասամբ թաքցվում է հանցանքի մասին հաղորդում տվողի ինքնությունը, որն ակներևաբար հայաստանցի է: Հետագա շարադրանքից երևում է, որ նույնը չի արվել հանցանքի մեջ կասկածվողի դեպքում, որի անունը ներկայացվում է ամբողջությամբ:

Shamshyan.com-ի տեղեկություններով, Երևանում հերթական անգամ վնասել են Երևանի քաղաքապետարանի հաշվեկշռում հաշվառված մարդատար ավտոբուսը:

Նոյեմբերի 11-ին ՀՀ Ներքին գործերի նախարարության ոստիկանության Էրեբունու բաժին է դիմել Կոտայքի մարզի բնակիչ 41-ամյա Արման Խ.-ն, ով հայտնել է, որ ինքը աշխատում է «Երևան ավտոբուս» ՓԲԸ-ում և ինքը Zhongtong մակնիշի ավտոբուսը, որի մեջ եղել են ուղևորներ, Նուբարաշենի խճուղում վարելու ընթացքի ժամանակ անհայտ անձը քարով հարվածել և վնասել է ավտոբուսի ապակին:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, ահազանգով ժամանել են ոստիկանության Էրեբունու բաժնի օպերատիվ խումբը՝ համայնքային ոստիկանության բաժանմունքի տեսուչի գլխավորությամբ:

Տեղում Արման Խ.-ն ոստիկաններին հայտնել է, որ այդ արարքի հետևանքով Երևանի քաղաքապետարանին պատճառվել է 280 հազար դրամի նյութական վնաս:

Ոստիկանության Էրեբունու բաժնի

[4] https://shamshyan.com/hy/article/2023/11/16/1250267

Առհասարակ հասկանալի չէ, թե ինչու է անհրաժեշտ ենթադրյալ հանցագործի քաղաքացիությունը շեշտելը, եթե քաղաքացիությունը կամ էթնիկ պատկանելությունը հանցանքի շարժառիթի հետ ուղղակի կապ չունեն: Սա ավելորդ անգամ կարող է բացասական հույզեր առաջացնել ներգաղթյալների, մասնավորապես, Հնդկաստանից եկածների նկատմամբ:
Բացի դրանից, պետք է հաշվի առնել, որ Հնդկաստանում ևս տասնյակ էթնիկ-կրոնական խմբեր են ապրում, և նրանց բոլորին մեկ՝ «հնդիկ» անունով կոչելը կարող է ընդունելի չլինել տարբեր ազգությունների ներկայացուցիչների համար:

համայնքային ոստիկանության բաժանմունքի ծառայողները տաք հետքերով պարզել են ենթադրյալ կասկածյալի ինքնությունը, ով Հնդկաստանի Հանրապետության քաղաքացի 27-ամյա Սինգ Հարմադինն է:

Դեպքի փաստով ոստիկանության Էրեբունու բաժնում փաստաթղթեր են ձևակերպվել, որոնք փոխանցվել են Հայաստանի Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժին:

Ոստիկանությունը ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ՝ Սինգին հայտնաբերելու ուղղությամբ:

Այս հոդվածն անդրադառնում է հայալեզու մեդիայում հայ կնոջ և աֆրիկյան ծագմամբ նրա ամուսնու լուսանկարի քննարկմանը: Սոցցանցերում խտրական գրառումներին ու մեկնաբանություններին ի պատասխան, լրատվամիջոցը ներկայացրել է նմանատիպ գրառումներից մեկի հեղինակի պարզաբանումը, որն ինքնին ռասայական խտրականություն է պարունակում:

«Հայկական տարազով սևամորթ երիտասարդի ընտանիքի լուսանկարի տարածումը սադրանք էր»[5]

Անհասկանալի է «խփում են ազգային արժեքներին» արտահայտությունը: Սովորաբար նման արտահայտություններ են օգտագործվում, որպեսզի ավելի մեծ համախոհներ ունենան իրենց լսարանում, այնինչ, կապը հոդվածի բովանդակության և ազգային արժեքների միջև անհասկանալի է:

Թեև զրուցակիցն ասում է, թե որևէ ռասայի նկատմամբ բացասական վերաբերմունք չունի, այդուհանդերձ, նրա պատկերացումները խտրական են:

Հովհաննես Հովհաննիսյանի անվան թիվ 52 դպրոցի շախմատի ուսուցիչ Լևոն Ստեփանյանին աշխատանքից ազատման վտանգ չի սպառնում: Հիշեցնենք, որ սևամորթ երիտասարդի հետ ամուսնացած հայ կնոջ և նրանց երեխայի ընտանեկան լուսանկարի շուրջ ստեղծված աղմուկի շրջանակում Լևոն Ստեփանյանի facebook-յան գրառման պատճառով ՀԱԿ համակիր Լիզա Ճաղարյանը ստորագրահավաք է կազմակերպել նրան աշխատանքից ազատելու պահանջով: Լիզա Ճաղարյանը պնդում է, որ ուսուցիչը ռասիստական գրառում է կատարել:

«Այսօր առավոտյան մի կին է զանգել մեր դպրոց, ներկայացել կուսակցական, ենթադրում եմ՝ ՀԱԿ-ից, որովհետև Լիզա Ճաղարյանը ՀԱԿ-ի համակիր է, դժգոհել տնօրենին, նա էլ բացատրել է, որ իմ իրավունքն է, տարբեր թեմաներով գրառումներ եմ անում, այնպես որ տնօրինությունը նորմալ է վերաբերում դրան,

5 https://bit.ly/3XRnc6r

Ի տարբերություն մոտ ազգականների միջև ամուսնությունների, տարբեր ռասաների միջև կապերի վերաբերյալ որևէ գիտական հակացուցում չկա, և այս պնդումը որևէ կերպ հիմնավորված չէ, այն հենց ռասայական խտրականություն է: Զրուցակիցը կարող է իր պատկերացումներն ունենալ, սակայն լրագրողը պետք է քննադատական մոտեցում դրսևորի նման պնդումների նկատմամբ:

Աֆրիկացիներն ու աֆրիկյան ծագում ունեցող մարդիկ վիրավորական են համարում մի շարք լեզուներում գոյություն ունեցող «նեգր» անվանումը, և որքան էլ որ զրուցակիցը դրա մեջ խնդիր չտեսնի, պետք է հաշվի առնել այդ հանգամանքը և լրատվական նյութում ցույց տալ այն: Շատ կարևոր է հաշվի առնել, որ եթե ներկայացվում է թվացյալ գիտական հիմքեր ունեցող որևէ պնդում, պետք է ներկայացվեն գիտական հետազոտությունների արդյունքներ, որոնք կհիմնավորեն առաջ քաշվող պնդումը: Եթե նման հիմքեր չեն ներկայացվում, ապա կարող

որևէ խնդիր չկա: Ես որևէ ահացո նկատմամբ բացասական վերաբերմունք չունեմ: Ես ընդամենը գրել եմ, որ կողմ չեմ խառն ամուսնություններին, ինձ թվում է՝ հատուկ ինչ-որ մեկն այդ նկարը տարածեց, որ աղմուկ ստեղծվի:

Դա ավելի շատ սադրանք էր, աղմուկ հանեն, հետո հայի գեն ծաղրեն: Իսկ սադրանքը պետք է այն ուժերին, որոնք կոնկրետ խփում են ազգային արժեքներին՝ ընտանեկան բռնությունների մասին օրենք… պատահական չեն»,- Aravot.am-ին ասաց շախմատի ուսուցիչը:

Հիշեցնենք, որ Լևոն Ստեփանյանը հայուհու ու սևամորթի նկարի վերաբերյալ կարծիք էր հայտնել, թե «չկա ոչինչ ավելի զզվելի, քան օտարամոլ և պացիֆիստ հայը: Այդ տեսակը Հռոմի պապից ավելի կաթոլիկ է, Մայր Թերեզայից ավելի «մարդասեր», և, երբ դա համեմված է մարտնչող տգիտությամբ ու իր «ես»-ի մասին խիստ բարձր կարծիքով, ապա ուղղակի պետք է դրանց դեմն առնել, որ չտարածվեն մեր ազգի գլխին: Ինչ վերաբերում նեգրերին (իրերը կոչենք իր անուններով, նեգրը դա ահա է, իսկ ով չի հասկանում, ուրեմն իր խնդիրն է) և խառնամուսնություններին, ապա՝ Վրեժ Շահրիմանյանը ճիշտ է ասում.- «Ինչպես ազգականների միջև, այնպես էլ գենետիկորեն խիստ տարբեր անձանց ամուսնությունն անհաջող է: Երեխաներն այդպիսի ընտանիքներում ունենում են շատ ավելի ժառանգական հիվանդություններ, հաճախ հետ են մնում ընդհանուր զարգացումից, քան իրենց տարեկիցները: Այդ ֆենոմենը բացատրվում է նրանով, որ խառն ամուսնություններում կայացած գենետիկ խումբը քայքայվում է, իսկ նոր խումբը կենսաբանորեն ավելի թույլ է, քանի որ հազարամյակների հղկման միջով չի անցել: Դրա հետևանքով աճում են հիվանդությունները, երեխաների ահացություն

ենք հետևություն անել, որ ներկայացվող բովանդակությունն առնվազն հիմնավոր չէ: Ի՞նչ է նշանակում «պայթյունավտանգ»: Նյութի սկզբում մենք տեղեկանում ենք, որ Ստեփանյանը շախմատի ուսուցիչ է: Որևէ հուշում չկա այն մասին, որ նա գենետիկայի ոլորտում որակավորում ունի և կարող է գիտականորեն հիմնավորել իր ասածը:

Այս տեսակի պնդումները միանգամայն ռասիստական են, խտրական և հակասության մեջ են մտնում ոչ միայն էթիկական նորմերի հետ, այլև սովորաբար քրեական պատիժ են նախատեսում: Ոչ միայն օգտագործված բառապաշարը, այլև արտահայտված մտքերը նսեմացնում են միլիոնավոր մարդկանց արժանապատվությունը: Լրագրողը պարտավոր է իմանալ դրա մասին:

առավել շատանում է, իսկ կյանքի տևողությունը՝ կրճատվում: Սևամորթի ու սպիտակամորթի խառնուրդները ամենապայթունավտանգն են տարբեր հիվանդությունների համար: Դաժան բան եմ ասում, բայց իրականությունը այդ է, և գլխիս պոլիտկոռեկտություն չխաղաք: Բնությունը և պատմությունը արդեն ապացուցել են, որ նեգրերը, որպես կանոն, ունակ են լավ անել երեք բան՝ երգել, պարել և զբաղվել սպորտով: Դա ունի պարզ բացատրություն. նեգրերը ապրում են բնազդներով, իրենց մոտ զարգացած է մարմնի լեզուն, ինչը չես ասի իրենց մտավոր ընդունակությունների մասին: Իրենք ունեն այն, ինչին արժանի են: Մի փորձեք համոզել, որ նորմալ աչքով նայենք հայի և նեգրի խառնամուսնությունը: Եթե օվերտոնյան ոճով քարոզչություն եք տարածում, ապա պատրաստ եղեք, որ լինելու է դրա հակազդեցությունը: Եվ ընդհանրապես, իրավիճակը պատկերացրեք սեփական օրինակի վրա և հետո միայն սկսեք բողոքել»:

Շախմատի ուսուցչի սխալը տիրաժավորելու փոխարեն, լրագրողը կարող էր հիմնական կետերով փոխանցել գրածի իմաստն ու շեշտել այն ձևակերպումները (օրինակ՝ նեգր), որոնք հենց «աղմուկի» պատճառ են դարձել: Բացի դրանից՝ նյութը միակողմանի է. Լիզա Ճաղարյանի անունը նյութում չկա, ոչ էլ անգամ մեջբերում կա նրանից: Լրագրողի պարտականությունն է անաչառ ու բազմակողմանի ներկայացնել նյութը՝ պահելով էթիկական նորմերը:

ԿՐՈՆ ԵՎ ՀԱՄՈԶՄՈՒՆՔ

Կրոնի կամ համոզմունքի թեմայի լուսաբանումը զգայուն թեմա է ինչպես լրագրողի համար, որը պատրաստում է նյութը, այնպես էլ հասարակության համար, որն այդ նյութի հիմնական լսարանն է: Զգայունությունը ոչ միայն պայմանավորված է թեմայի առանձնահատկությամբ, այլև մեր հասարակության միատարրությամբ:

Աշխարհում առկա են բազմաթիվ կոնֆլիկտներ, որոնք ունեն տնտեսական և քաղաքական հիմքեր: Դրանցից որոշներին վերագրվում են կրոնական երանգներ, ինչը թույլ է տալիս կոնֆլիկտի մասշտաբները մեծացնել և պետությունների միջև անհամերաշխությունը վերածել առավել լայն՝ մարդկանց միջև անհանդուրժողականության: Օրինակ՝ Լեռնային Ղարաբաղի առաջին պատերազմի ժամանակը Ադրբեջանը փորձում էր կոնֆլիկտը, տարածքային վեճից բացի, ներկայացնել իբրև կրոնական խնդիր, ինչը վերջիններիս չհաջողվեց, բայց հակառակ դեպքում կօգներ միավորել մուսուլմանական աշխարհն ընդդեմ Հայաստանի:

Բազմաթիվ կոնֆլիկտների հիմքում բնավ կրոնը կամ էթնիկ պատկանելությունը չէ, մինչդեռ դրանց տրվում է համապատասխան երանգ, որպեսզի հասարակության տարբեր անդամների և խմբերի տրամադրեն միմյանց դեմ: Իրականում, այդ երկուսն իրարից տարբերակելը կարող է դժվար լինել, քանի որ հակամարտող էթնիկ խմբերը հաճախ տարբեր կրոններ են դավանում: Օրինակ՝ Կոսովոյում սերբերի և ալբանացիների միջև լարվածությունը հիմնված է էթնիկ պատկանելությա՞ն, թե՞ կրոնի վրա: Այս երկուսը իրարից անջատելը դժվար է: Անշուշտ, երկուսն էլ այստեղ դեր են խաղում: Նույնը կարելի է ասել նաև հակասեմականության

մասին: Հրեաների նկատմամբ ատելությունը որոշակիորեն ունի թե՛ էթնիկ և թե՛ դավանաբանական հիմքեր: Հրեաներին հաճախ համարում են «օտար ռասայի» ներկայացուցիչներ և բնորոշում որոշակի ֆիզիկական ու անհատական կարծրատիպերով, ինչպես, օրինակ, կեռ քիթը կամ կասկածելի ճանապարհով փող վաստակելու ունակությունը: Միևնույն ժամանակ, հակասեմականները մշտապես ծաղրել են հուդայականությունն իբրև կրոն և կեղծ ասեկոսեներ տարածել հրեաների մասին, ասենք, իբր նրանք քրիստոնյա երեխաների են առևանգում զոհաբերելու համար:

Կովկասում ևս այս խնդիրն առկա է: Ադրբեջանական քարոզչությունը հաճախ փորձել է Լեռնային Ղարաբաղի խնդրին տալ կրոնական երանգ՝ միավորելու մուսուլմանական աշխարհին ընդդեմ քրիստոնյաների: Այդուհանդերձ, նման մոլորությունները շատ են, ու դրանք ոչ միայն գեոպոլիտիկ դաշտում են արտահայտվում, այլև երկրների, այդ թվում՝ Հայաստանի ներքին կյանքում:

Հայաստանում, ինչպես և այլուր, կրոնին կամ համոզմունքին առնչվող թեմաները հաճախ լուսաբանվում են կողմնակալ կամ թեմայի շուրջ ոչ բավարար իմացության պատճառով՝ սխալ և ոչ համակողմանի: Կարևոր է, որ լրագրողներն իմանան, թե ինչպես լուսաբանել կրոնի կամ համոզմունքի, էթնիկ ու կրոնական տարբեր պատկանելություն ունեցող մարդկանց մասին, քանի որ ճիշտ և անաչառ լուսաբանումը կարող է կանխել հանրության տարբեր խմբերի միջև խնդիրները և խտրական մոտեցումների տարածումը, օգնել նվազեցնելու կեղծ ու վնասակար տեղեկությունների տարածումը, ինչն իր հերթին նպաստում է խաղաղ ու համերաշխ հասարակություն ունենալուն:

Այս բաժնում բերված դեպքերի ուսումնասիրություններում օրինակներ են, թե ինչպես կարող է հանրության մեջ առկա կարծրատիպերի հիման վրա ստեղծված նյութը վնասել կրոնական խմբի (օրինակ՝ Եհովայի վկաների) հեղինակությունը և

պառակտել հասարակությունը: Սակայն մինչ այդ եկեք դիտարկենք մի քանի խորհուրդ, որոնք կօգնեն լրագրողներին առավել զգայուն լուսաբանել կրոնին կամ համոզմունքին առնչվող թեմաներն ու իրադարձությունները.

- Անցյալի բացթողումները պարզելու համար հետադարձ հայացք նետեք այն փաստին, թե ձեր համայնքում կամ մարզում լրատվամիջոցներն ինչպես են անդրադարձել կրոնական տարբերության խնդիրներին: Արդյոք եղե՞լ են գերիշխող կրոնին չդավանող մարդկանց մոտեցումները ներկայացնող նյութեր: Արդյոք մյուս կրոնների կամ համոզմունքի հարող խմբերի մասին հրապարակումները եղե՞լ են անաչառ և կշռադատված, թե՞ ամրապնդել են կարծրատիպերը:
- Հիշեք, որ կրոնը կուռ կառույց է, համակարգված հավատալիքների և ծիսակատարությունների համակարգ՝ հիմնված սոցիալական-մշակութային առանձնահատկությունների, բարոյականության մասին պատկերացումների, արժեհամակարգերի և հոգևոր պատկերացումների վրա, որը ներառում է աստվածության կամ աստվածությունների պաշտամունք, ունի սրբազան գրքեր ու համայնքային ծեսեր: Համոզմունքը, սակայն, անհատական կամ խմբային համոզվածություն է ինչ-որ բանի ճշմարտության կամ գոյության մեջ և կարող է չունենալ ֆորմալ կառույցներ կամ ծեսեր: Կրոնը համակարգված և ֆորմալ բնույթ ունի, մինչդեռ համոզմունքը հաճախ անհատական է և ոչ ֆորմալ:
- Կրոնի կամ համոզմունքի մասին գրելիս մեծ ուշադրություն դարձրեք մարդկանց բնորոշելու համար ձեր կողմից գործածվող բառապաշարին: Հնարավոր է՝ որոշ բառեր ինքներդ նսեմացնող կամ խտրական չհամարեք, սակայն դրանց կիրառումը վիրավորական կարող է լինել տվյալ խմբի անդամների համար: Այդ պատճառով, եթե վստահ

չեք, թե տվյալ բառն ինչպես կընկալվի նրանց կողմից, անպայման նախապես ճշտեք:

- Ժամանակ հատկացրեք ձեր տարածաշրջանում նոր դավանաբանական ուղղություններ բացահայտելու համար: Օրինակ՝ մեկ օր անցկացրեք այդ խմբերից մեկի ներկայացուցիչների հետ: Հետևեք նրանց փոխհարաբերություններին այն մարդկանց հետ, որոնց փորձում են հաղորդակից դարձնել իրենց կրոնի կամ համոզմունքի հետ: Պարտադիր չէ կիսել նրանց հավատքը՝ նրանց մասին պատշաճ տեղեկատվություն փոխանցելու համար:
- Գրեք ձեր գործունեության տարածքում կրոնական բնագավառը կարգավորող օրենքների մասին: Արդյոք գերիշխող հավատքի համար պետությունը արտոնություններ է սահմանում, իսկ մյուսներին՝ վերաբերվում խստրականորեն: Եթե օրենքով հավասար պայմաններ են սահմանվում բոլորի համար, արդյոք իշխանությունները փաստացի այդպես էլ վարվո՞ւմ են, թե՞ կողմնակալ են՝ ի շահ իրենց հոգևոր ավանդույթների:
- Շրջահայաց եղեք, որպեսզի տուրք չտաք այլ կրոնական պատկանելություն ունեցող մարդկանց մասին առկա ընդհանուր կարծրատիպերին: Երբ բանը հասնում է կրոնին կամ համոզմունքին, ապա շատ ինքնակոչ «գիտակներ» այլ հոգևոր ավանդույթների մասին կարող են ասել մտքին եկածը՝ չփորձելով իսկ փաստերով հիմնավորել իրենց պնդումները: Քանի որ լրագրողներն իրենք էլ երբեմն կիսում են այդ կարծրատիպերը, արժե, որ նրանք հիշեն՝ իրենց անելիքը ոչ թե նման պնդումներն ընդունելն ու տարածելն է, այլ կասկածելն ու քննելը:
- Պարզեք, թե արդյոք ձեր տարածաշրջանում կա՞ն համալսարաններ, որոնք ունեն կրոնի ուսումնասիրության բաժիններ, կամ հասարակական կազմակերպություններ, որոնք ունեն փորձառություն այդ ոլորտում: Եթե այո՝

նրանց մասնագետներին դիտարկեք որպես հնարավոր աղբյուր ձեր նյութերի համար: Եթե նրանք օժտված են մեկից ավելի հոգևոր ավանդույթների մասին ընդհանուր փորձագիտական գիտելիքներով, ուրեմն հարմար թեկնածուներ կարող են լինել միջդավանական փոխհարաբերությունների վերաբերյալ բարդ հարցադրումներին պատասխանելու համար:

- Զգուշացեք այն աղբյուրներից, որոնք կրոնական թեմանների շուրջ իրենց պնդումները հիմնավորում են զուտ Աստվածաշնչից, Ղուրանից և այլ սուրբ գրքերից մեջբերումներով: Օրինաչափ է, որ շատ դարեր առաջ գրված բառերը կարող են տարբեր կերպ մեկնաբանվել, ինչը, օրինակ, պատճառ է դարձել տարբեր քրիստոնեական հարանվանությունների կամ միմյանցից էապես տարբերվող իսլամական ավանդույթների գոյության: Եթե քաղաքական գործիչը փորձում է կրոնական տեքստերն օգտագործել որպես իր քաղաքական հավատամքի հիմք, պարզեք, թե ինչպես են միևնույն տեքստը մեկնաբանում մյուսները, և դրա մասին հարցեր ուղղեք այդ քաղաքական գործչին:
- Առհասարակ, ուշադիր եղեք աղբյուրներին, որոնցից փորձում եք թեմային առնչվող հարցերի պատասխան ստանալ: Անհրաժեշտության դեպքում գտեք մի քանի աղբյուր, փորձեք համեմատել ձեր նույն հարցին տրված պատասխանները:
- Կրոնական խնդիրները քննեք այլ սոցիալական, քաղաքական և տնտեսական զարգացումների կամ միտումների համատեքստում: Եթե, օրինակ, տվյալ կրոնական խմբի անդամների շրջանում մեծ է գործազրկությունը, հավանական է, որ այն պայմանավորված լինի ոչ թե նրանց ծուլությամբ, այլ նրանց նկատմամբ գործատուների կողմից դրսևորած խտրականությամբ:
- Լրատվամիջոցները հաճախ «վատ կերպարով»

հոդվածներում շեշտադրում և նշում են հերոսի կրոնական պատկանելությունը, ինչը բերում է բացասական ընդհանրականացման ամբողջ կրոնական համայնքի նկատմամբ: Նույնը չի արվում մեծամասնության պարագայում: Օրինակ՝ սպանության վերաբերյալ նյութերում չեն նշում, որ մեղադրյալը կամ հանցագործը քրիստոնյա է կամ հետևում է Հայ Առաքելական եկեղեցուն, բայց փոքրամասնության պարագայում դա հաճախ շեշտվում է:

- Գրեք հոդվածներ, ուսումնասիրելով, թե արդյոք ընդհանուր կարծրատիպերն արտացոլո՞ւմ են իրականությունը: Կրոնի կամ համոզմունքի տարբեր խմբերի ներկայացուցիչներ կարող են ներկայացվել դրական ու բացասական կողմերով: Որոշ բաներ կարող են ունենալ ճշմարիտ հիմքեր, սակայն դա չի կարելի տարածել մյուսների վրա, առավել ևս պետք չէ կապել մարդու կրոնի կամ համոզմունքի հետ, քանի որ գործողությունների հիմքում կարող են լինել սոցիալ-տնտեսական միանգամայն այլ գործոններ:
- Գրեք այլ կրոնական ավանդական տոների մասին այնպես, ինչպես կլուսաբանեիք ձերը: Օրինակ՝ մասնակցեք ձեզ համար անսովոր կրոնական տոներին՝ հրեական Հանուկային, կամ մեկ օր անցկացրեք Ռամադանի ընթացքում ծոմ պահող մահմեդականների հետ:
- Կրոնական խմբի առանձին անդամին մի դատեք իբրև նրանց ամբողջի ներկայացուցիչ. օրինակ՝ եթե մի բուդդայական, արևին նայելով, մեդիտացիա է անում, դա չի նշանակում, որ բոլորն են այդպես անում: Ամեն մարդ ունի իր անհատականությունն ու իրավունք ունի արտահայտելու անհատական գաղափարներ կամ կարծիքներ և տարբեր տեսանկյունից մոտենալ իր հավատքին առնչվող հարցերին:
- Երբ հարցազրույց եք վերցնում այլ համոզմունք ունեցող մարդկանցից, մի կարծեք, թե նրանց կյանքը սկսվում ու ավարտվում է իրենց դավանանքով: Նրանց ուղղեք

նաև այլ թեմաներին վերաբերող հարցեր, քանզի նրանք էլ, ձեզ նման, ունեն կրոնի կամ համոզմունքի հետ առնչություն չունեցող հոգսեր, կարիքներ և զվարճանքներ: Հարցրեք ընտանիքի, հետաքրքրությունների, մասնագիտության և կյանքի այլ կողմերի մասին: Դա ուղղակի կօգնի ձեզ առավել լավ հասկանալ նրանց կյանքն ու մոտեցումները, ինչը չի նշանակում, որ դուք այդ ամենը պետք է ընդգրկեք ձեր հոդվածում:

Դեպքերի ուսումնասիրություն

Այս հոդվածում կրոնական կազմակերպության իրականացրած գործողությունը ներկայացվում է որպես դատապարտելի արարք, համարյա հանցանք՝ հիմնվելով հանրության մեջ տարիներ շարունակ տարածված կարծրատիպերի վրա: Որևէ փորձ չի արվում փաստերով ամրապնդելու այն տեսակետը, թե այս կամ այն կրոնական կազմակերպության, տվյալ դեպքում՝ «Եհովայի վկաների» գործունեությունն առհասարակ և հոդվածում նկարագրվող դեպքում՝ մասնավորապես վնասակար կարող է լինել:

«Հայ եկեղեցու պատմություն» առարկայի փոխարեն՝ «Եհովայի վկաների» ակտիվ քարոզ կրթօջախների մոտ[6]

Հայ եկեղեցու պատմությունը, որպես առանձին առարկա, հանվել է հանրակրթական դպրոցների ուսումնական ծրագրից:

Սակայն դրա փոխարեն՝ կրթօջախների

6 https://www.aravot.am/2023/12/18/1389421/

մատույցներում ակտիվ գործունեություն են ծավալում կրոնական տարբեր տեսակի կազմակերպությունները:

Տիգրան Մեծ պողոտայում, Հայաստանի բնության պետական թանգարանի շենքի առջև, որտեղ օրական տասնյակ ու հարյուրավոր աշակերտներ են այցելում Երևանի ու մարզերի դպրոցներից, և որի երկրորդ հարկում Բարսեղ Կանաչյանի անվան երաժշտական դպրոցն է, իսկ բակի կողմում՝ թիվ 2 ավագ դպրոցը, երեխաների աչքի առաջ քարոզչական ստենդները դրած, ողջ տարին անարգել «Եհովայի վկաներ» կրոնական կազմակերպության քարոզ է իրականացվում:

Իսկ քաղաքապետարանն ու իրավասու որևէ այլ կառույց այս կրթական հաստատությունների մոտակայքում իրականացվող այս հոգեորսությունը չի տեսնում կամ չտեսնելու է տալիս:

Ո՞րն է այս երկու փաստերի կապը: Հայաստանում տարիներ շարունակ կրոնական տարատեսակ կազմակերպություններ փողոցում քարոզ են արել, այդ թվում՝ այն ժամանակ, երբ «Հայ եկեղեցու պատմություն» առարկան դասավանդվում էր հանրակրթական դպրոցներում: Ինչո՞ւ է լրագրողը հիմա իր տեսածը կապում առարկան հանելու հետ:

Արդյոք քաղաքապետարանը «հոգեորսության» դեմ պայքարելու իրավասություն ունի՞: Առհասարակ, ո՞ր պետական կառույցը նման լիազորություն ունի: Եթե այդպիսին կա, պետք է նշել անունը, միջամտության հիմքը, փորձել զրուցել այդ մարմնի ներկայացուցիչների հետ և այլն: Բացի դրանից՝ որքանո՞վ է տեղին այստեղ կիրառել «հոգեորսություն» բառը, որն իրավական տերմին չէ և կարող է վիրավորական լինել կրոնական խմբի գործունեության համար:

Ոչ մի փորձ չի արվում հետաքննելու՝ արդյոք դպրոց հաճախող երեխաների շրջանում «քարո՞զ» է արվում: Այստեղ նաև պարզ չէ, թե քարոզ ասելով՝ ինչ նկատի ունի հեղինակը. ի՞նչ է քարոզը, ո՞ր դեպքում կամ ի՞նչ համատեքստում է դա ընդունելի, և որտե՞ղ/ո՞ր դեպքում՝ ոչ, ինչո՞ւ:

Ի՞նչ նկատի ունի լրագրողը՝ ասելով՝ «ողջ տարին անարգել». 365 օր ու գիշե՞ր: Եթե կոնկրետ օր կոնկրետ տեղում լրագրողը նկատել է «քարոզ անող» Եհովայի վկայի, կարող է կոնկրետ գրել: Եվ ավելի ճիշտ կլինի մոտենալ, զրուցել նաև նրանց հետ, հարցնել՝ օրենք կամ կանոն չե՞ն խախտում:

Այս լրատվական նյութում ամբողջությամբ մեջբերվում է ընդդիմադիր հանրային գործչի ֆեյսբուքյան գրառումը՝ առանց խմբագրության մեկնաբանության կամ հավելյալ ճշտումների կամ այլ տեղեկատվության: Ընդ որում՝ վերնագիրն ընթերցողին որևէ կերպ չի հուշում, որ դա ինչ-որ մեկի խոսքից մեջբերում է: Բովանդակությունն իրենից դավադրապաշտական տարբեր տեսությունների հակիրճ շարադրանք է ներկայացնում՝ վախ և բացասական տրամադրություն տարածելով ՀՀ-ում վաղուց ի վեր օրինական գրանցված կրոնական տարբեր կազմակերպությունների նկատմամբ:

«Կյանքի խոսքը», «Հիսունականները» և մնացած աղանդները հենց էս սատանիստական «կրոնի» ճյուղերն են[7]

Ո՞րն է այս պնդման աղբյուրը:

Հեղինակը հիշյալ կրոնական կազմակերպություններին անվանում է սատանիստական «կրոն»՝ առանց փաստարկների, ընդամենը ներկայացնելով իր ընկալումները, և լրատվամիջոցը նույնությամբ վերարտադրում է դրանք: Այս պարբերությունում կիրառված են բազմաթիվ վիրավորանքներ (սատանիստ, աղանդ, վաշխառուների որջ), որոնք խախտում են լրագրողական էթիկան ու վարկաբեկում են մարդու արժանապատվությունը:

Հայաստանի ազգային անվտանգության հայեցակարգում որպես ազգային արժեք է ամրագրվել Հայ Ավետարանական Եկեղեցին: Ով չգիտի ասեմ՝ Կյանքի Խոսքը, հիսունականները և մնացած աղանդները հենց էս սատանիստական «կրոնի» ճյուղերն են: Բուն ավետարանականները դեռ մոտ 200 տարի առաջ Հայ եկեղեցու կողմից գրավոր նզովքի արժանացած բողոքականների ճյուղավորումն է: Ավետարանականների հռչակված հիմնական նպատակը ավետյաց հողը, այսինքն Իսրայելը, վերակառուցելն է: Հիշյալ աղանդների գլխամասերը հենց Իսրայելում են, իսկ ավետարանականների ծննդավայրը վշխառուների որջն է՝ Լոնդոնը:

Բոլորիս շնորհավորում եմ՝ 2020 թվականին հայ ժողովուրդը իբր թե սեփական կամքով որոշեց պղծել այն ամենը ինչին իրենց կյանքն էին նվիրել Քրիստոսի առաքյալները, Մխիթար

7 https://iravunk.com/?p=116303&l=am

Ընդհանրապես, ցանկացած մարդու խոսք, միտք վերցնելը սոցիալական ցանցերից ու տարածելը լավ լրագրություն չէ, այսինքն՝ լրագրություն չէ: Եթե անգամ լրագրողը և/կամ լրատվամիջոցը վարչապետի կամ նախագահի խոսքն է տարածում, կարևոր է, որ իր մոտեցումն ավելացնի այդ խոսքին, տա հավելյալ ինֆորմացիա, մեկնաբանի, բերված օրինակների դեպքում՝ ճշտի: Այս օրինակում, եթե լրագրողը գնար և զրուցեր խոսքերի հեղինակի հետ, նրանից փաստեր պահանջեր, կարող էր լավ նյութ մշակել:

Գոշն ու Դավիթ Անհաղթը, Մաշտոցն ու Նարեկացին: Օձնեցին մեզ համար ժամանակ շահեց պավլիկյաններին ոչնչացնելով, բայց էդ էլ չոգնեց: Պավլիկ-պողոսները մոլախոտի պես վերաճեցին:

Thank you, U.S. Embassy Yerevan!

Այս պնդումները ուղղակի չեն համապատասխանում իրականությանը, որովհետև նշված կազմակերպությունների կենտրոնները գտնվում են այլ երկրներում: Այստեղ, նկատենք, շահարկվում է նաև հակասեմականութունը: Լրատվամիջոցը փորձ էլ չի արել ստուգելու տեղեկությունները:

Ի՞նչ կապ ունի այս ամենի հետ ԱՄՆ դեսպանատունը: Չէ՞ որ, ըստ հեղինակի, ՀՀ իշխանությունն է, որ անվտանգության ռազմավարության մեջ ավետարանական եկեղեցու մասին դրույթ է ներառել:

Այս լուրը սպանության դեպքով դատավճռի կայացման պաշտոնական հաղորդագրության բառացի արտատպում է հիշեցնում իր ձևով, թեև տեղեկատվության աղբուրի մասին որևէ հիշատակություն չկա: Այդուհանդերձ, տեղեկությունը վերարտադրող կայքը հարկ է համարել վերնագրում շեշտել, որ սպանությունը կատարած անձը «աղանդավոր» է, թեև դատապարտյալի կրոնական համոզմունքների և կատարած գործողության միջև պատճառահետևանքային կապ չի նշվում, իսկ կիրառված տերմինը վիրավորական է համարվում կրոնական փոքրամասնությունների կողմից:

Կնոջը սպանած աղանդավոր ամուսնու աչքին տեսիլքներ են երևացել[8]

Այստեղ վերարտադրվում է հայաստանյան հասարակությունում առկա ինքնցիան՝ ավանդական կրոնական համայնքներից, հատկապես ՀԱԵ-ից բացի, մյուս կրոնական կազմակերպություններին անվանել «աղանդավորական», ինչը հայերենում բացասական երանգ ունի: Առավել ևս, «աղանդավորական խմբակ»-ը ավելի է խտացնում այդ երանգը: Բացի դրանից, չի նշվում, թե ինչ պատճառահետևանքային կապ կա կատարված սպանության և այն փաստի միջև, որ դատապարտյալը որոշ ժամանակ այցելել է «Հիսուսականների» հավաքներին, մասնավորապես հասկանալի չէ՝ արդյոք տեսիլքները կապվա՞ծ են կրոնական հավաքներին այցելելու հանգամանքի հետ: Եթե մեղադրական եզրակացությունում դրա մասին հիշատակվում է, ապա լրատվամիջոցը պետք է մեջբերեր դա, մանավանդ որ այդ հանգամանքին այնքան կարևորություն է տվել, որ դրա մասին հիշատակվել է վերնագրում:

Նախորդ տարվա օգոստոսին Արմավիրի մարզի Մուսալեռ գյուղի 38-ամյա բնակիչ Արսեն Ա-ն իր եղբոր տանը դանակի հարվածներ հասցնելով կնոջը՝ Լուսինեին, սպանել էր: Այս դեպքում, սակայն, ի տարբերության ընտանեական մի քանի այլ դեպքերի, ամուսինն անմեղսունակ չի ճանաչվել: Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանը նրան մեղավոր է ճանաչել ՀՀ ՔՕ 104 հոդվածի 1-ին մասի (սպանություն) հատկանիշներով և դատապարտել 11 տարվա ազատազրկման:

Մեղադրական եզրակացության համաձայն՝ որոշ ժամանակ Արսեն Ա-ն հաճախել է «Հիսուսականներ» կոչվող աղանդավորական խմբակի հավաքներին, ինչի հետևանքով նրա մոտ նկատվել է վախի զգացում, աչքին աստղիկների տեսքով շարժվող տեսիլքներ են երևացել: Բուժման համար նա դիմել է Վաղարշապատի հոգեթերապևտիկ բաժանմունք: Այս ընթացքում ամուսինների միջև վիճաբանություններ են սկսվել, ամուսինն անգամ ծեծել է կնոջը՝ երեխաների աչքի առջև: Իսկ այն ժամանակ, երբ երեխաները փորձել են պաշտպանել իրենց մորը, Արսենը ծեծել է նաև նրանց:

8 https://armlur.am/248992/

Այստեղ դուք կգտնեք կարևոր աղբյուրներ, որոնք կօգնեն ձեզ առավել զգայուն և ճշգրիտ, նաև նախապատրաստված լուսաբանել կրոնին կամ համոզմունքին առնչվող թեմաներն ու իրադարձությունները:

1. Kronadaran.am[9] – Կրոնադարանը նպատակ ունի լրացուցիչ տեղեկություն, գիտելիք և մոտեցումներ հաղորդել կրոնի, խղճի և դավանանքի հարցերի մասին, խթանել Հայաստանում կրոնական հանդուրժողականությունը, ինչպես նաև անաչառ ու էթիկական լրագրությունը:
2. Ուղեցույց. Ազանգվածային լրատվության միջոցներում խտրականության դրսևորումները բացառելու և հանդուրժողականություն ապահովելու վերաբերյալ[10]:
3. Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիր[11]:

---

9 Կրոնադարան – https://kronadaran.am/

10 Երևանի մամուլի ակումբ, Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիր – https://ypc.am/wp-content/uploads/2016/01/Guidelines_Tolerance_arm.pdf

11 Երևանի մամուլի ակումբ, Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիր – https://ypc.am/wp-content/uploads/2014/06/Code-of-Ethics_arm.pdf

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում ժողովրդավարական զարգացումներին զուգահեռ փոփոխվել են հանրային հայացքները կանանց դերի, այդ թվում նաև նրանց քաղաքական դերակատարման ու ներուժի նկատմամբ: Այդուհանդերձ, առկա կարծրատիպերի հետևանքով կանանց կարողությունները շարունակում են թերագնահատվել սոցիալական, տնտեսական և քաղաքական կյանքի ամենատարբեր ոլորտներում: Հարկ է նշել, որ կանանց գործունեության ակտիվացմանը և տեսանելիության բարձրացմանը զուգահեռ, ակտիվանում են նաև նրանց նկատմամբ ամենատարբեր ճնշումները: Սոցիալական մեդիայում և լրատվամիջոցներում հրապարակումների հետնաֆոնին կանայք թիրախավորվում են անհատների, կեղծ օգտահաշիվներով օգտատերերի և որոշակի խմբերի կողմից: Կանանց վարքագիծն ու արտահայտած մտքերը վարկաբեկվում են ամենատարբեր եղանակներով, այդ թվում նաև ատելության խոսքի դրսևորումներով: Շատ կարևոր է, որ լրատվամիջոցները լուսաբանեն կանանց առնչվող հարցերն այնպես, ինչպես որ անում են տղամարդկանց դեպքում՝ չթիրախավորելով և չտարանջատելով նրանց, զերծ մնալով սեռով պայմանավորված խտրականությունից:

Ստորև ներկայացված մի քանի խորհուրդները կօգնեն ձեզ այդ հարցում.

- Կանայք չպետք է հայտնվեն միայն զուտ կանանց խնդիրներին վերաբերող պատմություններում: Փորձեք կանանց իբրև աղբյուր ընդգրկել հնարավոր ամեն տեղ: Եթե, օրինակ, գրում եք մշակույթի որևէ ուղղության մասին, ապա գտեք մեկ կամ երկու նկարիչ կանանց, որոնք մեկնաբանություններ կանեն այդ ուղղության վերաբերյալ: Կամ

եթե գրում եք ձեր համայնքում կամ մարզում քաղաքական բանավեճերի մասին, փորձեք վկայակոչել որևէ կին քաղաքական գործչի: Պետք չէ կանանց ներկայացվածությունը նյութերում արհեստականորեն ապահովել: Այդուհանդերձ, լրագրողը պետք է գիտակցի, որ կանանց անհրաժեշտ է հնարավորություն ընձեռել իրենց տեսակետներն արտահայտել հանրային մեծ խնդիրների վերաբերյալ, նրանց ձայնը լսելի դարձնել և խոսել ոլորտում իրենց ունեցած ներդրումների մասին: Չնայած տղամարդիկ գերակշռում են բիզնեսի, ինչպես նաև գիտական, քաղաքական և մշակութային կյանքում, միևնույն է, ավելի հեշտությամբ, քան կարող է թվալ, կարելի է գտնել կանանց, որոնք կարող են արժեքավոր տեղեկություններ տրամադրել ձեզ:

- Վերանայեք հերթական աղբյուրների և շփումների ցանկը, որոնց դուք ամեն անգամ անդրադառնում եք որևէ նոր նյութ պատրաստելիս: Եթե ձեր ցանկն ամբողջությամբ կամ գերակշիռ մասով ներկայացնում են տղամարդիկ, ապա գիտակցված քայլեր ձեռնարկեք այն ընդլայնելու ուղղությամբ:
- Կանանց ընդգրկելիս բնորոշեք և շեշտը դրեք նրանց մասնագիտական, փորձագիտական արժեքի և գործունեության վրա: Մի շեշտեք կանանց արտաքին տեսքը: Այդպես չեք անում տղամարդկանց դեպքում, ճի՞շտ է: Դուք սովորաբար չեք նկարագրում որևէ տղամարդ գործարարի կամ տղամարդ քաղաքական գործչի հագուստը կամ սանրվածքը, ապա կին գործարարի կամ կին քաղաքական գործչի հագուստն ու սանրվածքը ևս չպետք է քննարկել, եթե դա ինչ-որ ձևով չի առնչվում բովանդակությանը: Խուսափեք այնպիսի բառերից, ինչպիսին է, օրինակ, «կանացի» բառը, որը ասոցացվում է մի շարք բաների հետ և կարող է տարբեր կերպ մեկնաբանվել:

Նմանապես, մի օգտագործեք «կանացի երջանկություն» կամ «կարիերայի ձգտող կին» արտահայտությունները:

- Հիշեք, որ ժամանակակից լեզվում (ապրող, զարգացող և փոփոխվող) անընդունելի է «ուհի» վերջածանցի կիրառումը, այլապես ստացվում է, որ նորմը տղամարդն է, իսկ կինը՝ պոչը: Եթե համատեքստում դա կարևոր է, կարելի է ավելացնել «կին» կամ «աղջիկ» բառը, օրինակ՝ կին քաղաքական գործիչ կամ աղջիկ սովորող:
- Ուշադիր եղեք ձեր հոդվածում կանանց իրական դերի մասին մեկնաբանություններ անելիս: Լրագրողները հաճախ կրկնօրինակում են ու շրջանառում կանանց ու տղամարդկանց մասին հասարակության ունեցած կարծրատիպերը և նույնիսկ, առանց դիտավորության, ավելի ամրապնդում դրանք: Ոչ բոլոր կանայք են հետաքրքրվում նորաձևությամբ ու խոհանոցով (ինչպես և տղամարդիկ): Նրանցից շատերը լրջորեն զբաղված են ամենահրատապ հասարակական և քաղաքական հարցերով, իսկ մյուսները հաջողությամբ զբաղվում են բիզնեսով: Գտեք կանանց, որոնց կենսակերպը տարբերվում է կանանց մասին եղած ընդհանուր կարծրատիպային և խտրական պատկերացումներից:
- Հանդիպեք կանանց իրավունքներով և շահերով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ հենց նրանցից տեղեկանալով կանանց իրական խնդիրների, հոգսերի և շահերի մասին: Հնարավոր է, որ նրանք այնպիսի խնդիրներ կարևոր համարեն և բարձրաձայնեն, որոնց վերաբերյալ ո՛չ դուք և ո՛չ էլ ձեր խմբագիրները տեղեկացված չեք: Խրախուսեք նրանց զանգել ձեզ, երբ կարծում են, որ քննարկման արժանի ինչ-որ նորություն ունեն՝ տրամադրելով ձեզ հետ կապ հաստատելու համար անհրաժեշտ տվյալները:
- Պատմություններ գրեք այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք

են ընտանեկան բռնությունը, կանանց նկատմամբ բռնությունները կամ սեռական ոտնձգություններն ու բռնությունները, որոնք լայնորեն քննարկվել են Արևմուտքում, սակայն մեծ ուշադրության չեն արժանացել հետխորհրդային հասարակություններում: Սրանք չափազանց լուրջ խնդիրներ են, որոնք ընդհանուր առմամբ անտեսվում կամ թերի ուշադրության են արժանանում իրավական համակարգի, ինչպես նաև լրատվամիջոցների կողմից: Ընտանեկան բռնությունը սովորաբար համարվում է ներքին ընտանեկան խնդիր, այն էլ կենցաղային հողի վրա, այլ ոչ թե հանցանք, նույնիսկ երբ դրա հետևանքներն անմիջապես տեսանելի են լինում տուժողի համար: Ուսումնասիրեք, թե դրան ինչպես են վերաբերվում ձեր համայնքում կամ մարզում: Արդյոք օրենքը պաշտպանո՞ւմ է կանանց իրենց ամուսինների կամ զուգընկերների կողմից բռնության ենթարկվելուց: Ինչպե՞ս են դրան արձագանքում ոստիկանությունը, տեղական մարմինները կամ իշխանությունները: Կա՞ն արդյոք ապաստարաններ, որտեղ կանայք և երեխաները կարող են օգնություն խնդրել: Որո՞նք են ձեր մարզի ընտանեկան բռնությունից տուժածների համար նախատեսված աջակցման կենտրոնները, երբևէ կապ հաստատե՞լ եք այդ կենտրոնների սոցիալական աշխատողների և հոգեբանների հետ, որոնք բռնության ենթարկված կանանց և աղջիկներին աջակցման ծառայություններ են մատուցում: Արդյոք դուք ձեր հոդվածների վերջում տրամադրո՞ւմ եք համապատասխան տվյալներ, որոնք կարող են օգտակար լինել բռնության ենթարկված կանանց և աղջիկների համար, օրինակ՝ թեժ գծեր և այլն:

- Մեկ այլ խնդիր է աշխատավայրում սեռական ոտնձգությունը և բռնությունը, որը ևս մեծ ուշադրության է արժանացել Արևմուտքում: Մինչ որոշ մարդիկ դատարկ

կամ աննշան բան են համարում այս խնդիրը, փաստն այն է, որ բոլոր հասարակություններում կանայք հաճախ ստիպված են լինում դիմակայել տղամարդ գործընկերների կամ ղեկավարների սեռական ոտնձգություններին, որոնք փոխարենն առաջարկում են աշխատավարձի բարձրացում և առաջխաղացում կամ էլ վախեցնում են աշխատանքից ազատելով: Երբեմն նման հետապնդումը դրսևորվում է ոչ թե սեքսի ուղղակի պահանջով, այլ կնոջն ուղղված գռեհիկ, նվաստացուցիչ կամ ծաղրական սեքսուալ արտահայտություններով, անեկդոտներով կամ ուղղակի և անուղղակի առաջարկներով: Պարզեք, օրինակ, թե 2023 թվականին Աշխատանքային օրենսգրքի փոփոխված և լրամշակված հոդվածները, մասնավորապես՝ աշխատավայրում սեռական բռնության և ոտնձգությունների վերաբերյալ, ինչպե՞ս են կիրառվում առօրյայում, ինչպե՞ս են աշխատում մարզպետարանի կամ համայնքապետարանի համապատասխան բաժինները, ինչպե՞ս են արձագանքում ՄԻՊ-ի գրասենյակը և Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը: Արդյոք աշխատավայրերում ներդրվե՞լ են կանխարգելող և պաշտպանող կառուցակարգեր և կանոնակարգեր: Ինչպե՞ս են դրանք իրականում գործում: Ինչպե՞ս են կանայք պայքարում աշխատավայրում տեղի ունեցող ոտնձգությունների դեմ:

- Լրատվամիջոցների կողմից հրապարակվող նյութերի հիմնական խնդիրներից մեկը մարմնավաճառության կամ սեքս-աշխատանքի վերաբերյալ ոչ զգայուն գրված և մշակված բովանդակություններն են: Ակնհայտ է, որ այս թեմային անդրադառնալը կարևոր է, բայց միևնույն ժամանակ քննադատելի է, երբ փորձում են դատապարտել այն կանանց, որոնց համար դա կարող է ապրուստի միակ միջոցը լինել, կամ որոնք ստիպված և հարկադրաբար են

մտել այդ ոլորտ, այդ թվում՝ ոմանք անչափահաս տարիքում: Նույնիսկ եթե կինն ինքն է ընտրել մարմնավաճառությունը, և ոչ թե նրան ստիպել են, փորձեք նրա տեսանկյունից ընկալել աշխարհը: Ջանացեք վեր կանգնել կարծրատիպերից: Ոչ բոլոր մարմնավաճառներն են թմրանյութ օգտագործում, և ոչ բոլորն են վատ մայրեր: Մի դատեք: Եթե նրանք որևէ իրավիճակում եղել են զոհ, ապա ոչ զգայուն բովանդակությամբ կրկնակի զոհ մի դարձրեք մարդկանց: Կենտրոնում դիտարկեք մարդուն և հետևեք «մի՛ վնասիր» սկզբունքին:

- Կանանց թրաֆիքինգը ևս կարևոր խնդիր է դարձել վերջին տարիներին: Ուսումնասիրեք իրավիճակը ձեր տարածաշրջանում: Որտեղի՞ց են գալիս կանայք: Ինչո՞վ են նրանց գայթակղում հեռանալ հայրենի երկրից, և ինչպե՞ս են նրանց հարկադրում մնալ: Ջրուցեք այդ հարցով զբաղվող հասարակական կազմակերպությունների, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համապատասխան բաժնի աշխատակիցների հետ և նրանց միջոցով ստացեք անհրաժեշտ տեղեկություն, իսկ հնարավորության դեպքում՝ նրանց միջոցով կապ հաստատեք նման իրավիճակում հայտնված կանանց հետ:
- Կանանց նկատմամբ սեռական բռնության կամ սեռական հետապնդումների, կամ ընտանեկան բռնության դեպքերի մասին նյութեր գրելիս առավելագույնս զգույշ եղեք՝ զոհի մասնավոր կյանքը, անձնական տվյալները, առանց իր հստակ գրավոր տված համաձայնության, մի հրապարակեք: Ավելին, տրամադրեք ձեր տվյալները: Եթե նույնիսկ հարցազրույցից հետո բռնության ենթարկված անձը կապ հաստատի և չցանկանա, որ նյութը հրապարակվի, պետք է հետևել նրա խնդրանքին: Հարցազրույցի ժամանակ անձը կարող է

խնդրել դադարեցնել հարցազրույցը, սա ևս պետք է հաշվի առնեք. նա դրա իրավունքն ունի:

- Ձեր նյութում կենտրոնացեք բուն խնդրի վրա, ցույց տվեք, որ ընտանեկան բռնությունը և կնոջ նկատմամբ բռնությունը անհամաչափ ուժի և իշխանության դրսևորման հետևանք են: Այլ կերպ ասած, արեք ամեն ինչ, որպեսզի ընթերցողի (դիտողի, ունկնդրի) մոտ տպավորություն չստեղծվի, որ զոհն իր վարքով նպաստել է բռնությանը (բաց հագուստ է հագել, խոսակցության է բռնվել, ժամադրության է գնացել և այլն): Ցանկալի է, որպեսզի կանանց նկատմամբ բռնության դեպքերի լուսաբանումներն ուղեկցվեն իրազեկող ծանուցումներով, որտեղ նշված կլինի հնարավոր բռնության դեպքում աջակցության կենտրոններ կամ ոստիկանություն դիմելու կարգը և կապի միջոցները: Նյութը գրելիս օգտագործեք ճիշտ բառապաշար՝ այդպիսով նաև իրազեկելով և կրթելով հանրությանը:

Դեպքերի ուսումնասիրություն

Հայաստանյան մեդիայում ցավալիորեն շատ են հանրային գործունեության մեջ ակտիվ կանանց թիրախավորման դեպքերը, երբ կին քաղաքական գործչին քննադատելիս նշում են ոչ թե նրա քաղաքական դիրքորոշումը կամ կայացրած որոշման հետևանքը, այլ նրա կին լինելու հանգամանքի հետ կապված ինչ-ինչ հատկանիշներ: Հետևյալ երկու հոդվածները, որոնք հրապարակվել են միևնույն լրատվամիջոցում, նկարագրվածի վառ ապացույցն են: Հատկանշական է, որ դրանցից առաջինը լույս է տեսել ֆեմինիստական շարժման արդյունքում ստեղծված Կանանց միջազգային օրվա կապակցությամբ:

Հայկ Բաբուխանյան.
«Ֆեմինիզմը, դա քայքայիչ աղանդ է...»[12]

Մարտի 8-ի կապակցությամբ նման վերնագրով լրատվական նյութի թողարկումը առանձին ուշադրության է արժանի: Լրագրողը հարցազրույց է վերցրել հանրային, քաղաքական գործիչ Հայկ Բաբուխանյանից, որը նաև լրատվակայքի համահիմնադիր ղեկավարներից է: Նյութում միանգամայն կարծրատիպային, դավադրապաշտական կաղապարներով հիշատակվում է ֆեմինիզմը՝ առանց փորձ անելու ներկայացնել այդ շարժման պատմությունը, իրական նպատակները և հաջողությունները:

Ելույթ ունենալով i-TV յութուբյան ալիքով, «Ուժեղ Հայաստան Ռուսաստանի հետ. Հանուն նոր Միության» շարժման գործադիր կոմիտեի անդամ, ՍԻՄ կուսակցության նախագահ ՀԱՅԿ ԲԱԲՈՒԽԱՆՅԱՆԸ, անդրադառնալով կանանց ֆեմինիստական կազմակերպություններին, ասաց. «ֆեմինիզմը, դա քայքայիչ աղանդ է... Դրանք շատ են, Արևմուտքից անընդհատ մեծ փողեր են ստանում: Ինչ նպատակով է Արևմուտքը դրանց ֆինանսավորում: Քայքայելու համար: Հետո այդ կազմակերպության անդամ կինը գնում է դպրոց և մեր երեխաներին սուտ ու կեղծ արժեքներ է փոխանցում: Փողը, որը նրանց տրվում է, հայ ազգի ոչնչացման նպատակով է տրվում»,– նշում է քաղաքական գործիչը:

Այնուհետև բանախոսը սկսում է ավելի կոնկրետ օրինակներ բերել, թե ինչպիսին «պետք է լինի» և ինչպիսին «չպետք է լինի» կինը՝ իր պատկերացումները ներկայացնելով որպես բացարձակ ճշմարտություն, և հակառակը՝ իր պատկերացումներից դուրս գտնվող կանանց՝ որպես չարիք: Ընդ որում, գործիչը, առանց մեջբերած օրինակների վերլուծության փորձ

Տեքստին ուղեկցող տեսանյութում արդեն, Բաբուխանյանը մասնավորապես, ասում է.

Ցավոք սրտի, այսօր ունենք օրինակներ, երբ իբր թե հայ կանայք փորձում են ոչնչացնել մեր ազգային պատկերացումները, մեր ազգային արժեհամակարգը: Կան իբր թե հայ կանայք, որ բերում են լրիվ օտար արժեքներ: Դա ՔՊ-ական պատգամավորուհիներն են, որ ԱԺ-ում ելույթներ են ունենում և խոսում են լրիվ հակահայ թեմաներով... ես վստահ չեմ, որ նրանք հայ են, ազգությամբ չգիտեմ ինչ են, բայց դուք տեսեք՝ նրանց ասածը հակահայ է: Վերցրեք օրինակ այն կերպարը, Բաթոյան, որը եղել է նախարար, պատգամավոր է և այլն, տեսեք նրա

[12] https://iravunk.com/?p=278248&l=am

անելու, պիտակավորում է իր քաղաքական հակառակորդներին՝ որպես ապազգային և հակամարդկային տարրերի: Լրատվամիջոցը նույնությամբ վերարտադրում է նրա ասածները, զրուցավարը չի փորձում քննադատական մոտեցում դրսևորել ասածի վերաբերյալ և «հրավիրել» զրուցակցին հիմնավորելու ասածները:

Հաճախ մենք տեսնում ենք, որ նյութի ստեղծման ընթացքում լրագրողը մասնագիտական դերակատարում չի ունենում: Ո՛չ բացատրում է, ո՛չ հարցեր է տալիս, և օգտագործվում է ակնհայտ թիրախավորող և ծաղրական խոսքը լսարանին հասցնելու, կարծրատիպերն ավելի կարծրացնելու համար: Այսպիսի հարցազրույցներում լրագրողը պարտադիր պետք է սուր հարցեր տա, այնպիսի օրինակներ բերի, որից գոնե

ասածները... մեկը հանում է հայոց պատմությունը [դպրոցական ծրագրերից], դրա փոխարեն ինչ են մտցնում՝ սեռական իբր դաստիարակություն հինգերորդ դասարանի երեխաների համար: Այսինքն, մարդիկ եկել են քայքայելու հասարակությունը, և այդպիսի կանանց պետք է հեռու պահել, մենք նրանց չենք շնորհավորում, ոչինչ չենք մաղթում, այլ միայն այն, որ նրանք հեռանան... Մենք շնորհավորում ենք միայն այն կանանց, մենք ողջունում ենք այն կանաց, որոնք դաստիարակում են մեր հասարակության մեջ տրադիցիոն պատկերացումները լավի ու վատի մասին...

հասկանալի դառնա, որ Բաբուխանյանի ասածն ամենևին էլ միակ և վերջին աստիճանի ճշմարտություն չէ: Հոդվածը/նյութը ունի նաև բացում և փակում, և խմբագիրը կարող է գոնե շտկել այն, ինչը չի արել լրագրողը՝ ճիշտ ուղղություն տալով նյութի ընկալմանը, ասենք՝ փաստերով կոտրելով Բաբուխանյանի տարածած կարծրատիպերը:

Այստեղ ակնարկվում է ԿԳՄՍ նախարարության նախաձեռնությունը «Հայոց պատմություն» առարկան «Հայաստանի պատմություն» վերանվանելու մասին: Ինչ վերաբերում է սեռական դաստիարակությանը վերաբերող դասընթացներին, ապա այն տարիներ շարունակ քննադատվել է պահպանողական ուժերի կողմից՝ ներկայացվելով իբրև երեխաներին այլասերելու փորձ:

Անդոնն Անդրեասյան Ժաննայի հանդեպ զգացմունքներ ունի[13]

Վերնագիրն արդեն իսկ էթիկայի կանոններից դուրս է: Տարրական ու պարտադիր գործառույթներն արված չեն՝ փաստերի

Ադրբեջանից նոր Սահմանադրություն ընդունելու վերաբերյալ կոչերին արձագանքելով՝ Անդոնը մեղադրել է ընդդիմությանն ու հասարակությանը՝ պետական սխալ ընկալում ունենալու համար ու որպես իր խոսքերի

13 https://iravunk.com/?p=275286&l=am

ստուգում, փաստի ու կարծիքի տարանջատում:

Այս նյութում նույնպես անդրադարձ է կատարվում «Հայոց պատմություն» առարկայի վերանվանման հարցին:
Նախ՝ պատգամավոր Անդրանիկ Քոչարյանի անունն աղավաղվում է ակնհայտ վիրավորական եղանակով, ինչը ոչ միայն անընդունելի է քաղաքական գործունեության համատեքստում, այլև առավել ևս անթույլատրելի է լրատվամիջոցի համար:

«Պետոյի կնկա» արտահայտությունը գռեհիկ և ոչ էթիկական է, մինչդեռ կարող էր նշվել՝ «Պետրոսի կնոջ»:

Այնուհետև նյութի հեղինակը, ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանի մասին խոսելով, շեշտում է նրա՝ հայտնի հաղորդավարի կինը լինելու հանգամանքը, ինչը Անդրեասյանի պաշտոնի հետ ուղիղ կապ չունի: Արդյոք Անդրեասյանը կրթության ոլորտում իր գործունեությունը ծավալել է և նախարարի պաշտո՞ն է ստացել՝ շնորհիվ իր ամուսնու: Համենայնդեպս, եթե նման տեղեկություններ կան, լրագրողը պետք է

առհավատչյա վկայակոչել է Անդրեասյան Ժաննայի դեմ տեղի ունեցած բողոքները: Ըստ նրա՝ պատմության դասագրքերի խնդրում ոչ մի վտանգավոր բան չկա, քանի որ այն, ինչ որ արվում է, արվում է՝ պետականության հիմքերն ամրացնելու ու առաջ շարժվելու նպատակով: Անդոնին, մասնավորապես, անհանգստացրել է Հ1-ի Պետոյի կնկա հասցեին հնչող վիրավորանքները:

Անդրեասյան Ժաննային խորապես արժևորող ու նրա նկատմամբ նուրբ զգացմունքներ տածող Անդոնի հայտարարությունները վկայում են մեկ բանի մասին՝ այն կոլեկտիվ անպատասխանատվության, դավաճանության ու ստորության, որոնց այժմ ականատես ենք դառնում բոլորս: Անդոնը, փաստորեն, Անդրեասյան Ժաննային թուրքերի կողմից թելադրված ծրագրի համար պատասխանատու է հռչակում ոչ միայն իրեն, այլև՝ իր ամբողջ քաղաքական թիմին՝ տորագրելով այն ամենի տակ, ինչ որ անում է հիմա ԿԳՄՄՆ կոչվող կառույցը:

Ինչո՞ւ է կարևոր սա արձանագրել: Կարևոր է, քանի որ վաղը գուցե որոշ ՔՊ-ականներ կամ հենց Նիկոլը, ելնելով քաղաքական նպատակահարմարությունից, կարող են հիմա կատարվողի ամբողջ մեղքը բարդել նախարարի վրա՝ փորձելով ինքնամաքրվել: Բայց Անդոնը, փաստորեն, զրկում է իրեն ու իր վերադասին հեատագայում արդարանալու որևիցե հնարավորությունից՝ խոստովանելով, որ իրենց համար առաջանայինը թուրքերի ազգային շահերի բավարարումն է՝ ի հաշիվ սեփական ժողովրդի գոյության:

Անդոնը չի հասկանում, որ որքան թափանցիկ է դաձնում իրենց ազգադավ էությունը,

գրի դրա մասին, նշի իր տեղեկության աղբյուրը/ աղբյուրները կամ ինչ-որ այլ կերպ հիմնավորի նախարարի ամուսնու անձի հիշատակումը նյութում:

այնքան ավելի է խորանում հանրային այն հիասթափությունն ու ատելությունը, որ մի օր պայթելու է Երևանի կենտրոնում՝ քշել-տանելով անդոնների թուրքական իշխանությունը:

Եվս մի անթույլատրելի հնարք. երկու անձանց՝ պատգամավոր Անդրանիկ Քոչարյանի և ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանի հանրային գործունեությունը քննադատելու համար ոչ միայն ատելության խոսք է կիրառվում, այլև ակնարկ է արվում նրանց միջև իբրև թե գոյություն ունեցող ռոմանտիկ մտերմությունը:

Համեմատաբար վերջերս հրապարակված այս նյութը նույնպես նահապետական հասարակությունում կանանց պարտադրված դերի նկարագրության համախումբ է: Ընդորում, չկա հեղինակ, չի նշվում ոչ այս բոլոր «պետք է»-ների աղբյուրը, ոչ դրանց հիմնավորումը: Այս կանոնները սահմանված են օրենսդրությա՞մբ, միջազգային իրավունքո՞վ, հայտնի հոգեբանի խորհրդատվության արդյո՞ւնքն են, թե՞ նյութի հեղինակի պատկերացումները:

Ինչպիսին պետք է լինի իդեալական կինը[14]

Գաղտնիք չէ, որ տղամարդը ցանկանում է ամուսնանալ միայն ամենալավ կնոջ հետ: Որպեսզի նա լինի և գեղեցկուհի, և խելացի, և լավ տնային տնտեսուհի, և անկողնում լինի անհավանական: Եվ դեռ կարելի է հարյուրավոր որակներ նշել, որոնցով, ըստ տղամարդկանց, պարտավոր է օժտված լինել իդեալական կինը: Բայց ահա ներկայացնում ենք դրանցից ամենագլխավորները:

14 https://mediamag.am/idealakan-kin/

Սա «կնոջ տեղը խոհանոցում է» հազարամյա ու արդեն գրոտեսկային կարծրատիպի արտահայտություն է մի դարում և մի երկրում, որտեղ կան բազմաթիվ կանայք, որոնք «խոհանոցից դուրս» են ապրում: Եվ անգամ եթե կինը սիրում է խոհարարությամբ զբաղվել (խոհարարության նկատմամբ հետաքրքրությունը չի կարող պայմանավորված լինել սեռով), ամենևին պարտադիր չէ, որ նա դա անի տղամարդուն չբարկացնելու և առավել ևս՝ նրան չկորցնելու համար:

1. Իդեալական կինը կարողանում է պատրաստել

Նա հասկանում է, որ սոված տղամարդը՝ միշտ բարկացած է: Այդ պատճառով նա կարողանում է ապուր պատրաստել նույնիսկ կացինից և շատ գեղեցիկ մատուցել այն: Կնոջ տեղը՝ իհարկե գազօջախի մոտ չէ: Բայց ամուսնուն ապահովել նախաճաշով, ճաշով և ընթրիքով՝ նա պարտավոր է: Այլապես դա կանի մեկ ուրիշ կին.

Դարձյալ, չգիտես թե ինչ անհրաժեշտության վրա հիմնվելով, նյութի հեղինակը տղամարդու հետ սեռական հարաբերությունը ներկայացնում է որպես կնոջ պարտականություն, որից նա կարող է հրաժարվել միայն հարգելի պատճառներով:

2. Իդեալական կնոջ մոտ գլուխն անընդհատ չի ցավում

Նա չի հրաժարվում մերձեցումից, եթե միայն պատճառը իրոք հարգելի չէ: Իդեալական կինը չի խուսափում սեքսից: Նա ուրախ է բավարարել իր ամուսնուն և գնալ հետաքրքիր փորձարկումների: Սեքսը ծածկոցի տակ՝ նրա համար չէ:

Այստեղ ևս ընդգծվում են կնոջ և տղամարդու՝ ընտանիքում դերերի բաշխման՝ սեռով պայմանավորված և կարծրատիպային մոտեցումներ:

3. Նա չի ձգտում դառնալ ընտանիքի գլուխը

Նա հաճույքով այդ դերը զիջում է իր ամուսնուն: Չէ՞ որ դա ամուսնու բնական դիրքն է, ինչը ընդունված է անհիշելի ժամանակներից: Իդեալական կինը հասկանում է, որ տղամարդը ընտանիքի համար պատասխանատվությունը պետք է վերցնի իր վրա: Նա չի ձգտում դառնալ մայրիկ, ով պաշտպանում է տղամարդուն: Խելացի կինը ամուսնուն հնարավորություն է տալիս իրեն իսկական տղամարդ զգալ:

4. Իդեալական կինը մարդկանց առաջ չի ստորացնում ամուսնուն

Տանը նա կարող է ամուսնու դեմքին ասել այն ամենը՝ ինչ մտածում է: Բայց այլ մարդկանց առաջ նա երբեք չի վիրավորի և չի հակաճառի ամուսնուն: Վեճերը տնից դուրս հանելը՝ վատ

Երեխաների դաստիարակության մաս կարող է կազմել, օրինակ, այն, որ ընտանիքում մաքրությամբ և կարգուկանոնով պետք է զբաղվեն ընտանիքի բոլոր անդամները, և ամենևին ոչ միայն մայրիկը, այլ կերպ ասած, ընտանեկան և ծնողական պարտականությունները կարող են և պետք է հավասարապես բաշխվեն:

սովորություն է: Դա սպառնում է բաժանումով: Կամ էլ չափազանց լուրջ վեճերով, ընդհուպ մինչև հարաբերությունների պարզաբանմամբ:

5. Իդեալական կնոջ տանը միշտ մաքրություն ու կարգ ու կանոն է տիրում

Նա կարողանում է աշխատել, դաստիարակել երեխաներին և այդ ամենի հետ մեկտեղ, ինչ-որ հրաշքով իդեալական մաքրություն պահպանել տանը: Լվացարանը և զուգարանակոնքը՝ միշտ մաքուր է, իսկ կահույքի վրա չկա և ոչ մի փոշու հատիկ: Նաև ծաղիկներն են միշտ ջրված:

6. Արտաքինին հետևելը չի անցնում երկրորդ պլան

Հարսանիքից հետո, իդելական կինը չի վերածվում անխնամ խրտվիլակի: Նա շարունակում է հետևել իր արտաքինին և կազմվածքին: Ֆիթնեսով զբաղվելը, կոսմետիկ պրոցեդուրաները և մանիկյուրը դառնում են ավանդական ծիսակատարություն: Եվ իդեալական կինը երբեք ամուսնուն աշխատանքից չի դիմավորում քրքրված խալաթով և բիգուձիները գլխին:

7. Իդեալական կինը կարողանում է ճիշտ վարվել փողի հետ

Նա չի մսխում փողը, կարողանում է ճիշտ հաշվարկել: Իդեալական կինը ամուսնու ամբողջ աշխատավարձը չի ծախսի նոր պայուսակի կամ ոսկե օղի վրա: Նա հստակ հաշվարկում է ծախսերը և թույլ չի տալիս անիմաստ ծախսեր:

Հաջորդիվ ևս կնոջ դերի մասին ավանդական կարծրատիպերի թվարկում է: Ամեն ինչից զատ, պետք է ընդունել, որ կանայք, ինչպես և առհասարակ մարդիկ, տարբեր են լինում, և եթե մի կնոջ դուր է գալիս մի կենսակերպը, մյուսին կարող է լրիվ ուրիշ բան դուր գալ: Եվ լրատվամիջոցը պետք է փորձի բացահայտել այդ բազմազանությունը՝ տարբեր նախասիրություններն ու տարբեր կարիքները՝ բոլորին և ամեն ինչ մի կաղապարի մեջ տեղավորելու փոխարեն:

8. Նա ղեկավարում է ամուսնուն այնպես, որ նա նույնիսկ գլխի էլ չի ընկնում այդ մասին

Չի բղավում, չի պահանջում և չի ցածրանում մինչև սպառնալիքներ: Իդեալական կինը գործում է իմաստորեն: Նա ուղղորդում է ամուսնուն անհրաժեշտ մտքին: Ամուսնուն թվում է, որ այդ մտքերը իրենից են գալիս: Բայց իրականում ամեն ինչ կառավարում է կիսաշրջազգեստով մոխրագույն կարդինալը:

9. Իդեալական կինը կարողանում է գաղտնիքներ պահել

Եթե ամուսինը կիսվել է իր ամենանվիրական գաղտնիքով, նա չի շտապում ընկերուհիների մոտ և չի քննարկում նրանց հետ այդ գաղտնիքը: Խելացի կինը գիտի, որ գաղտնիքներ պահել կարողանալը շատ է գնահատվում ամուսնական կյանքում: Այդ պատճառով էլ լեզուն պահում է ատամների արանքում:

Այստեղ էլ հայելային կերպով տեսնում ենք կարծրատիպային պատկերացումներ տղամարդկանց վերաբերյալ: Նման պնդումներ անելիս լրագրողը առնվազն պետք է հիմնավորի, ներկայացնի հետազոտություններ կամ վիճակագրական վերլուծություններ, որոնց համաձայն՝ «տղամարդիկ ամուսնանում են հարմարավետության համար»:

10. Նա բարեդրացիական հարաբերություններ է ստեղծում ամուսնու ընտանիքի և ընկերների հետ

Դիվանագիտություն է դրսևորում, գտնում է փոխզիջումային տարբերակներ և չի բողոքում վատ սկեսուրից: Ընդհակառակը, նա կարողանում է լեզու գտնել նույնիսկ չափազանց մռթմրթան և ամեն ինչից դժգոհ սկեսրոջ հետ: Խելացի կինը կարողանում է պայմանավորվել:

Մեծամասամբ տղամարդիկ ամուսնանում են հարմարավետության համար: Ինչպես տանը, այնպես էլ հոգում: Առանց կնոջ, տղամարդու մոտ կարծես ինչ-որ բան պակասում է: Իհարկե նա կարող է վարձել աղախին, սնվել

ռեստորաններում և գնել սեր: Բայց այդ ամենը այն չէ: Յուրաքանչյուր տղամարդուն հարկավոր է տան օջախի պահապան, հարազատ և սիրելի կին:

Եթե լրատվամիջոցների կողմից լուսաբանումը զգայուն չէ, ապա մեդիան, շրջանառելով եղած կարծրատիպերը, ամրապնդելու է վտանգավոր խոսույթները, արդարացնելու է կարծրացած պրակտիկաները և խտրական վերաբերմունքը, իսկ զգայուն և գրագետ լուսաբանման դեպքում իրազեկելու և կրթելու է հանրությանը՝ նպաստելով գենդերային հավասարության խոսույթների տարածմանը, նոր՝ արժեքահեն խոսույթների շրջանառմանն ու նորմալացմանը, որոնք արժևորում են կնոջը, նրա դերն ու տեղը հանրային կյանքի բոլոր ոլորտներում:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ՄՏԱՎՈՐ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ

Լրատվամիջոցները հաճախ են անտեսում ֆիզիկական կամ մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց խնդիրները: Իսկ եթե անգամ անդրադառնում են նրանց, ապա իրադարձային դեպքերում կամ իբրև կարեկցանքի արժանի մարդկանց մասին, երբեմն էլ անզգուշաբար վիրավորում և թիրախ են դարձնում: Լրագրողները հաճախ նրանց խնդիրները քննարկում են բժիշկների, այլ մասնագետների կամ կառավարության անդամների, բայց ոչ հենց իրենց՝ հաշմանդամություն ունեցող անձանց հետ, հետևաբար շատ քիչ են տեղեկանում և լուսաբանում, թե ինչ են այդ մարդիկ զգում և մտածում: Որոշ դեպքերում լրագրողներն արդարանում են, թե դժվար է գտնել հաշմանդամություն ունեցող անձանց հարցազրույցի համար: Հաշմանդամություն ունեցող մարդիկ երբեմն որոշ ժամանակ մեկուսացած են եղել կա՛մ տներում, կա՛մ հաստատություններում, որովհետև նրանց ընտանիքները ամաչել են (կարծրատիպային) նրանցից կամ ցանկացել են պաշտպանել նրանց հասարակական խտրականությունից: Խնդիրներից մեկն էլ պայմանավորված է այն հանգամանքով, որ հասարակությունը քիչ ջանքեր է գործադրել հաշմանդամություն ունեցող անձանց համար կրթության բնագավառում, աշխատավայրում և ենթակառուցվածքներում հավասար հնարավորություններ ապահովելու նպատակով, ինչպես, օրինակ, փողոցների կամ հանրային շինությունների կահավորանքը: Լրացուցիչ բարդություն է առաջանում, եթե հաշմանդամություն ունեցող անձինք այլ համայնքների (օրինակ՝ էթնիկ) մաս են կազմում, որոնք առանց այդ էլ կարծրատիպային հանրության կողմից դրականորեն չեն ընկալվում:

Հաշմանդամություն ունեցող անձանց մասին գրելիս հաշվի առեք ստորև բերվածը.

- Նախ՝ անպայման լուսաբանեք այս թեման և լուսաբանելիս անպայման զրուցեք հաշմանդամություն ունեցող անձանց հետ: Այն, ինչ ուրիշներն են պատմում ձեզ նրանց մասին, նույնիսկ եթե խոսում են կարեկցանքով, պետք է պարզապես մեկնարկային կետ ծառայի ձեր նյութի համար: Դուք պետք է կապ հաստատեք հենց հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց ներկայացնող կազմակերպությունների հետ և հարցնեք՝ արդյոք ձեր ունեցած տեղեկությունները համապատասխանո՞ւմ են այն ամենին, ինչ նրանք իրականում զգում են: Հակասությունների դեպքում կարող եք կապ հաստատել ոլորտի փորձագետների հետ:
- Հաշմանդամություն ունեցող անձանց մասին մի գրեք միայն իրենց հաշմանդամության համատեքստում: Նրանք ևս բոլորի նման ունեն հետաքրքրություններ, կարիերա և ընտանիք: Եթե հանդիպեք հաշմանդամություն ունեցող այնպիսի մարդկանց, որոնք հաջողությունների են հասել որպես նկարիչներ, քաղաքական գործիչներ կամ այլ մասնագետներ, ապա կարող եք շատ լավ նյութ պատրաստել: Հաշմանդամությանն անդրադառնալու կարիք կարող է չլինել, հատկապես երբ անձը չի նախընտրում խոսել այդ մասին: Սակայն որոշ դեպքերում կարող է հետաքրքիր լինել հաշմանդամություն ունեցող անձի՝ որպես մասնագետի յուրահատուկ փորձը: Ժամանակ անցկացրեք նրանց հետ՝ պարզելու համար, թե ինչպես են հաղթահարել իրենց հաջողության ճանապարհին եղած դժվարությունները:
- Ուշադրություն դարձրեք ձեր բառապաշարին: Ամեն լեզվում էլ կան հաշմանդամությունը բնորոշող հատուկ բառեր, որոնց մի մասը վիրավորական է, իսկ մյուսը՝ ոչ:

Հնարավոր է՝ դուք կարծեք, թե կոնկրետ այս կամ այն բառը կամ արտահայտությունը վիրավորական կամ խնդրահարույց չէ, սակայն չեք կարող վստահ լինել: Եթե հաշմանդամություն ունեցող անձինք ասեն, որ նախընտրում են, որպեսզի իրենց այլ կերպ դիմեն, ապա պետք է հաշվի առնել նրանց մոտեցումները:

- Հաշմանդամություն ունեցող անձանց մասին լրագրության ամենակարևոր կողմերից մեկը նրանց հնարավորությունների շրջանակի խնդիրն է: Գրեք այն մասին, թե արդյոք հասարակությունը ջանո՞ւմ է թույլ տալ նրանց մասնակցել կարևոր հանրային միջոցառումներին: Եթե այդպես չէ, ապա ինչո՞ւ: Արդյոք գումարն ու միջոցնե՞րն են պատճառը, քաղաքական կամքի բացակայությու՞նը, խորապես արմատացած կարծրատիպե՞րը, թե՞ մեկ այլ խնդիր: Ինչպիսի՞ կրթական կամ մասնագիտական հնարավորություններ են բաց կամ փակ նրանց համար:
- Ուսումնասիրեք, թե արդյոք հաշմանդամություն ունեցող մարդիկ կազմո՞ւմ են խմբեր կամ համագործակցու՞մ են այլ հասարակական կազմակերպությունների հետ՝ իրենց իրավունքները պաշտպանելու համար, և ինչպե՞ս: Բազմաթիվ վայրերում տարբեր հաշմանդամություն ունեցող անձինք և նրանց ընտանիքները պահանջում են առավել մատչելի և արդյունավետ առողջապահական, կրթական և այլ հնարավորություններ: Պարզեք, թե այդ առումով ի՞նչ է կատարվում ձեր տարածաշրջանում:
- Լրագրողը պետք է ընկալի տարբերությունը հաշմանդամություն ունեցող անձանց հանդեպ ապրումակցման և խղճահարության միջև: Եթե դուք կիսում ենք նրանց ապրումները, նշանակում է՝ հարգում եք իրենց որպես անհատ, քանի որ զրուցում ու ժամանակ եք անցկացնում նրանց հետ, անմիջականորեն ծանոթանում եք նրանց կյանքին: Խղճահարությունը հաճախ մի տեսակ ներողամիտ

վերաբերմունք է ենթադրում, կարծես թե դուք նրանցից ավելի լավ գիտեք իրենց կարիքները: Եթե դուք հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց խնդիրների մասին կարծիք եք կազմել՝ հիմնվելով ոչ թե նրանց, այլ ուրիշների ասածների վրա, ուրեմն, ավելի շուտ խղճահարություն եք զգում և դեռևս պատրաստ չեք հաշմանդամություն ունեցող անձանց հուզող հարցերի մասին գրելու:

- Քանի որ հաշմանդամություն ունեցող անձինք հաճախ մեկուսացած են հասարակությունից, հնարավոր է՝ դժվար լինի գտնել նրանց զրուցելու համար: Ամենահարմար սկիզբը նրանց ներկայացնող խմբերի և հասարակական կազմակերպությունների հետ կապվելն է: Զրուցեք կազմակերպիչների հետ՝ հաշմանդամություն ունեցող անձանց հոգսերի մասին ընդհանուր գաղափար կազմելու համար, և նրանց միջոցով կապ հաստատեք համայնքի անդամների հետ: Դուք պետք է անպայման զրուցեք նաև խմբում չընդգրկված մյուս անձանց հետ, որոնք կարող են այլ դիրքորոշում ունենալ կամ ավելի անկեղծ ու շիտակ մտքեր և կարծիքներ արտահայտել:
- Երբեմն պարզվում է, որ կարծրատիպերը ճշմարտության տարր են պարունակում: Ֆիզիկական հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում կարելի է տեսնել շատ մուրացկանների և անտուն մարդկանց, սակայն դրա պատճառը հիմնականում այն է, որ հասարակությունը նրանց այլ տարբերակ չի առաջարկում: Նման զուգորդական կապերի ձևավորման պատճառը հաճախ արտացոլում է հասարակության ընդհանուր խնդիրները, և ոչ մի պարագայում լրագրողի դերը չէ՝ մեղադրել մարդկանց:

Դեպքերի ուսումնասիրություն

Հայաստանյան մեդիամիջավայրում բազմաթիվ են դեպքերը, երբ հանրային բանավեճի ընթացքում ընդդիմախոսին վիրավորելու համար նրան հոգեկան հիվանդություն են վերագրում՝ այն ներկայացնելով որպես արատի, մեղքի, երբեմն անգամ՝ հանցանքի հոմանիշ: Շատ հաճախ լրատվամիջոցները բառացիորեն վերարտադրում են այդ խոսույթը՝ առանց խմբագրման կամ առանց հավելյալ պարզաբանման՝ արմատավորելով գոյություն ունեցող կարծրատիպերը: Հետևյալ մի քանի օրինակները դրա մասին են:

Մի շարք վարձու գրչակներ փորձում են տեղի ունեցածը կապել «Սիլ գրուպի» հետ. խոսնակ[15]

2022 թ. օգոստոսին Երևանի առևտրի կենտրոններից մեկում պայթյուն և փլուզում տեղի ունեցավ, որի հետևանքով տասնյակ մարդիկ զոհվեցին: Այդ օրերին ողբերգական դեպքի մասին տարածված տարբեր դավադրապաշտական տեսություններից մեկն այն էր, թե իբր պայթյունը կազմակերպել է հայտնի պատգամավոր-գործարարը՝ տարածքում բնակելի շենքեր կառուցելու համար: Նրա ներկայացուցիչը ստիպված էր անդրադառնալ այդ բամբասանքին, սակայն դա անելու համար նա ընտրեց ոչ լավագույն բառապաշարը: Տասնյակ լրատվակայքեր տարածեցին խոսնակի՝ խտրական խոսք պարունակող գրառումը, և անգամ այն բանից հետո, երբ նա, տեղի տալով քննադատությանը, խմբագրել էր այն, լրատվականներում շարունակում էր մնալ նրա խոսքի նախնական տարբերակը:

[15] https://radar.am/hy/news/social-pages-2521146783/

«Սիլ գրուպ» ընկերության խոսնակը բամբասանքներից պաշտպանվելու համար դրանք տարածողներին բավական կոշտ վիրավորանքներ է ուղղում, այդ վիրավորական պիտակների թվում օգտագործելով նաև «հոգեկան հիվանդներ»-ը: Որքան անընդունելի է նման բառապաշարը, առնվազն նույնքան անընդունելի է դրա ուղիղ վերարտադրությունը մամուլում: Լրագրողներն ու խմբագիրները նման դեպքերում, անգամ ուրիշի խոսքը մեջբերելիս, պետք է ուշադիր լինեն՝ խտրական ու ատելության խոսքի տարածումը կանխելու համար:

«Սիլ» գրուպի մամուլի խոսնակ Աննա Մկրտչյանը «Ֆեյսբուքի» իր էջում գրել է.

«Երեկվա ողբերգությունից ժամեր անց մի շարք հոգեկան հիվանդներ և վարձու գրչակներ, մի քանի սրբապիղծ տականքների հատուկ հրահանգով փորձում են տեղի ունեցածը կապել ՍԻԼ գռուպի հետ: Պարզապես բառեր չեմ գտնում նկարագրելու՝ մարդ ինչ աստիճանի պղծված պետք է լինի, որ տեղի ունեցած ողբերգությունից էլ փորձի քաղաքական դիվիդենտներ քաղել և մրոտել մյուս հայ քաղաքացուն:

Տականքներին պատասխանելու և մեկնաբանելու կարիք չկա: Թող իրավապահները պարզեն պայթյունի իրական պատճառն էլ, սուտ լուրեր տարածողների մոտիվացիան էլ: Ցավակցում եմ զոհվածների հարազատներին»:

Այս լուրին անդրադարձել է հաշմանդամության խնդիրներով զբաղվող մի կազմակերպություն («Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների օրակարգ» ՀԿ) և Հայաստանի լրատվամիջոցների էթիկայի դիտորդ մարմինը: Արձանագրվել է, որ խախտվել է քաղաքացու, որին հոգեկան առողջության խնդիրներ են վերագրվում, անձնական տվյալների պաշտպանության իրավունքը, ինչպես նաև հաշմանդամության խնդիրների լուսաբանման մի շարք այլ կանոններ:

Արտակարգ դեպք Երևանում. տղամարդը ասում էր, որ փրկել է Թրամփին, ու երկնքից իրեն տեղեկություններ են փոխանցվել Հայաստանը փրկելու համար. ոստիկաններն ու բժիշկները նրան ձեռնաշղթայված տեղափոխեցին «Ավան» հոգեկան առողջության կենտրոն. ՖՈՏՈՌԵՊՈՐՏԱԺ, ՏԵՍԱՆՅՈՒԹ[16]

Սա լրատվության տարածված ձև է Հայաստանում. լուրի հենց սկզբում նշվում է, որ դրա մասին տեղեկացնում են լրատվամիջոցի սեփական աղբյուրները, ապա հետևում է, ըստ էության, ոստիկանության պաշտոնական հաղորդագրության շարադրանքը:

Լուրին ուղեկցող տեսանյութում երևում է ոչ հոժարակամ հոսպիտալացվող անձի դեմքը, ինչը անձնական տվյալների պաշտպանության սկզբունքի խախտում է:

ԴՄ-ը արձանագրել է, որ նյութում չկա կոնկրետացում՝ արդյոք անձը վտա՞նգ էր ներկայացնում, արդյոք մեկուսացումն անհրաժեշտությո՞ւն էր, տվյալ անձն ունի՞, թե՞ չունի խնամող, գուցե ահազանգած հարևանն ուզում էր նրանից ազատվե՞լ: Այս հարցադրումների

SHAMSHYAN.com-ի տեղեկություններով՝ օրեր առաջ արտակարգ դեպք է տեղի ունեցել Երևանում:

Արտակարգ իրավիճակների նախարարության Փրկարար ծառայության 911 և Ոստիկանության Երևան քաղաքի վարչության օպերատիվ կառավարման կենտրոններ ահազանգ է ստացվել, որ Արաբկիր վարչական շրջանի Արամ Խաչատրյան փողոցի շենքերից մեկի բնակիչը գտնվում է հոգեկան անհավասարակշիռ վիճակում և նրա հետ է նաև իր շունը:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, ահազանգով ժամանել են ԱԻՆ ՓԾ հրշեջ փրկարարական ջոկատից 1 մարտական հաշվարկ և Ոստիկանության Արաբկիրի բաժնի օպերատիվ խումբը, ովքեր տևական ժամանակ բանակցություններ են վարել այդ տղամարդու հետ, որպեսզի նա իրենց հետ մեկնի «Ավան» հոգեկան առողջության կենտրոն, սակայն վերջինս չի ենթարկվել: Ոստիկաններն ու փրկարարները տեսնելով, որ «բանը բանից անցնում է», դիմել են «Ավան» հոգեկան առողջության կենտրոնի բժիշկներին, ովքեր նույնպես ժամանել են նշված հասցե:

Ի վերջո ոստիկանները հատուկ միջոց են կիրառում և այդ տղամարդուն ձեռնաշղթայված

16 https://shamshyan.com/hy/article/2021/07/27/1192338/

պատասխաններն անհրաժեշտ էին, որպեսզի հանրությունը հասկանար արարքի վտանգավորության աստիճանը և հանրային շահերի պաշտպանության անհրաժեշտությունը: Այսինքն՝ խախտված է տեղեկատվության ամբողջականության սկզբունքը:

Տեսանյութում մեջբերվում են նաև բժշկի խոսքերը, որն ասում է, թե մարդը հոգեկան առողջության խնդիրներ ունի և նոր է դուրս գրվել հոգեկան առողջության կենտրոնից: Անձնական կյանքի ու բժշկական գաղտնիքի պահպանման անհրաժեշտությունից ելնելով, խմբագրությունը պետք է զերծ մնար նման պնդումը ցուցադրելուց:

իջեցնում են ու մոտեցնում շտապօգնության ավտոմեքենային:

Տղամարդն այդ ընթացքում բղավում էր, որ ինքը առողջական ոչ մի խնդիրներ չունի, պահանջում էր ոստիկաններին, ասում, որ ինքը «տիեզերքից հատուկ ինֆորմացիաներ ունի ստացած, պետք է դա հայտնի Ազգային անվտանգության ծառայությանը, որպեսզի Հայաստանը փրկվի»:

«Ես փրկել եմ նաև Թրամփին»,- բղավում էր նա:

Նրան տեղափոխեցին «Ավան» հոգական առողջության կենտրոն, որտեղից շաբաթներ առաջ էր նա դուրս գրվել:

Ծանուցում. *Ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:*

Անձը հոգեկան առողջության խնդիրների կամ այլ պատճառով կարող է բացականչել տարբեր բաներ: Լրատվամիջոցը պետք է դրանք հեռարձակելուց առաջ քննի՝ արդյոք դրանք որևէ հանրային կարևորություն ունե՞ն: Պետք չէ արտասովոր թվացող բացականչությունները հեռարձակել զուտ լսարան ներգրավելու համար:

Վերջում տեղադրված ծանուցումը հուշում է, որ հրապարակման հեղինակը ենթադրաբար առողջական խնդիրներ ունեցող անձին նույնականացնում է հանցագործի հետ, ինչն անընդունելի է:

Այս հոդվածի ու դրան ուղեկցող հարցազրույցի բովանդակությունն ամբողջության մեջբերելու կարիք չկա: Մենք ցույց կտանք միայն այն հատվածը, որտեղ զրուցակիցը քաղաքական գործընթացում իր անհամաձայնությունը

արտահայտելու համար ընդդիմախոսին բնորոշում է «մտավոր հետամնաց» արտահայտությամբ, իսկ լրատվամիջոցը նույնությամբ վերարտադրում է այդ խոսքը:

Պատերազմը չի կասեցվում սահմանազատմամբ, շատ վտանգավոր է. վարչապետն էլ ասաց՝ սրա այլընտրանքը պատերազմն է. Միքայել Հայրապետյան. ՏԵՍԱՆՅՈՒԹ[17]

Մտավոր հաշմանդամությունը ներկայացվում է որպես արգահատելի, դատապարտելի երևույթ, որի մասին կարելի է հիշել քաղաքական ընդդիմախոսներին քննադատելիս: Սա մի կողմից ավելի է սրում քաղաքական պայքարի լեզուն ու նպաստում հասարակության բևեռացմանը, մյուս կողմից արմատավորում է հաշմանդամության տարբեր դրսևորումների նկատմամբ բացասական կարծրատիպերը:

Լրագրողը ոչ միայն չի փորձում տեղում զրուցակցին դիտողություն անել, այլև նույնությամբ վերարտադրում է նրա ասածը:

Նիկոլ Փաշինյանը Հանրայինի եթերում հայտարարեց, թե Ադրբեջանի հետ սահմանազատման գործընթացը, ինչպես նաև Ադրբեջանի հետ կարգավորման գործընթացը պետք է դիտարկել ֆորպոստի կարգավիճակից ազատվելու տրամաբանության մեջ: Նշում է, թե պետք է Հայաստանն ապրի հարևանների հետ՝ առանց արտաքին հովանավորության: Միքայել Հայրապետյանին հարց ուղղեցինք՝ սա՞ էր այն գլխավոր եզրահանգումը, որ Հայաստանը պետք է աներ վերջին 4 տարիների անկայուն և պատերազմական իրադարձություններից հետո:

«Իհարկե՝ ոչ: Ես ափսոսում եմ, որ այդ գաղափարն արտահայտելու համար մեջբերում եք Նիկոլ Փաշինյանին, ավելի խելացի մարդիկ կան, ինչպես Ռաֆայել Իշխանյանը: Նա ասում է, թե պատերազմ չլինելու երաշխիքը լեգիտիմությունն է: Առնվազն մտավոր հետամնաց պետք է լինես՝ այդպիսի երաշխիքին վստահելու համար: Ինչ երաշխիքի մասին է խոսքը, երբ փլուզվում է աշխարհակարգը»,- նշում է Հայրապետյանը:

[17] https://factor.am/769297.html

Ցավոք, նման դեպքերը եզակի չեն: Մեկ այլ դեպքում, լրատվամիջոցը տեսանյութի վերնագրում վերարտադրել է դատավոր Ռշտունու խոսքը. **«Պիտի մտավոր հետամնաց լինես, որ մտավախություն չունենաս. Ռշտունին՝ լիազորությունները դադարեցնելու մասին»**:[18]

Հաջորդ լրատվական նյութը կարելի կլիներ մեջբերել որպես հաշմանդամության խնդիրների բազմակողմանի և կոռեկտ լուսաբանման օրինակելի նմուշ, եթե չլիներին մի քանի փոքր, բայց կարևոր նրբություններ, որոնք պետք է հաշվի առնել նման զգայուն խնդրի լուսաբանման ժամանակ:

Ցրված սկլերոզով հիվանդներն ահազանգում են՝ թանկարժեք ու անհասանելի բուժման պատճառով գամվում են սայլակին, փակվում տանը[19]

Նախ՝ վերնագրի «գամվում են սայլակին» արտահայտությունը չափազանց էմոցիոնալ փոխաբերություն է, որը, որքան էլ դիպուկ թվա, կարող է խորացնել անելանելիության զգացողությունը, որն առանց այդ էլ, հնարավոր է, տանջում է հաշմանդամություն ունեցող անձին: Նման դեպքերում գուցե ավելի ճիշտ կլինի խուսափել գույները խտացնող արտահայտություններից:

Մելանյա Սուլյանը տնից տարիներով դուրս չի գալիս, մաքուր օդ շնչելու համար 14 հազար դրամ է պետք, տեղափոխման ծառայությունը հենց այսքան արժե՝ 7 հազար դրամով նրան սայլակով կիջեցնեն 4-րդ հարկից, 7 հազարով կբարձրացնեն:

«Իմ ամեն մի քայլը շատ թանկ արժե»,– նշեց Սուլյանը:

Արդեն տասը տարի 50-ամյա կինը սայլակի վրա է՝ ցրված սկլերոզ ախտորոշմամբ: Այս հիվանդությունը հիշողության հետ ոչ մի կապ չունի, կենտրոնական նյարդային համակարգի քրոնիկ ախտահարում է. անհրաժեշտ բուժում չստանաս՝ հաշմանդամության հեռանկարն

18 https://www.youtube.com/watch?v=QIOy8VOR5Fo
19 https://www.azatutyun.am/a/31904253.html

անխուսափելի է: Սկզբում տիկին Մելանյայի ոտքերը թուլացան՝ նստեց սայլակին, բայց տան գործերը դեռ անում էր, նույնիսկ մի կերպ իջնում էր հատակին ու սիրելի գործով էր զբաղվում՝ նկարում էր:

«Շարժունակ էի, մտածում էի՝ լավ, հետո լավ կլինեմ, բայց գնալով հակառակ պատկերը ստացվեց»,– ներկայացրեց նա:

Հիմա արդեն ձեռքերն էլ են թույլ՝ ոչ միայն վրձին չի կարող բռնել, նաև ինքնուրույն հյուրասենյակից սայլակով խոհանոց անցնել չի ստացվում, թևերը ուժ չունեն:

Տարեց մոր ու երիտասարդ դստեր հետ է ապրում: Լիլիթը գլուխ չի հանում՝ աշխատի, փոող վաստակի մոր բուժման համար, թե՞ մորը խնամի:

«Դե որ ինքը նայող չունի, մեծ մասամբ ես եմ իրա կողքին, ստացվում ա, որ էդ գումարն էլ մենք չենք կարա հասցնենք, էդ հնարավորությունը չկա»,– նշեց Լիլիթը:

Դուստրն ասում է՝ հաշմանդամության առաջին կարգ ունեցող մայրը պոլիկլինիկայից որոշ դեղեր ստանում է, բայց պետության կողմից տրամադրվող անվճար դեղերի ցանկում չկա այն դեղորայքը, որ կմեղմեր ցրված սկլերոզի գրոհները, կդանդաղեցներ հիվանդության զարգացումը.– «Այդ թանկ դեղորայքը մենք չենք կարա ձեռք բերենք, որովհետև եթե ամեն ամսվա կտրվածքով ա, հաստատ էդքան գումար չկա. էլի»:

Տիկին Մելանյան ասում է՝ պետությունը պետք է վերջապես ուշադրություն դարձնի այս հիվանդների վրա: Երբեմն նրան հաջողվում է Կարմիր խաչի վերականգնողական կենտրոն հասնել՝ բուժական պրոցեդուրաների համար, ասում է՝ վերջին տարիներին այնքան շատ են

Նույն արտահայտությունը տեսնում ենք այստեղ. այս անգամ հաշմանդամություն ունեցողները ոչ միայն «գամված են սայլակին», այլև «դատապարտված են»: Նման կտրական արտահայտությունները, որոնք գուցե լրագրողին օգնում են ավելի շատ ուշադրություն սևեռել խնդրի վրա, այդուհանդերձ, կարող են խորացնել դատապարտվածության զգացողությունը: Եթե սայլակ օգտագործելու հարցը չափազանց կարևոր է, ապա այդ աջակցող սարքը պետք է դիտարկել նախևառաջ որպես մարդուն հնարավորություններ, անկախություն ընձեռող միջոց: Սայլակների նկատմամբ բացասական կամ որպես վերջին տեղում դիտարկման ենթակա լուծումների ընկալումը խորացնում է

խարանը: Հնարավորինս չեզոք ձևակերպում են «սայլակով է տեղաշարժվում» կամ «սայլակ է օգտագործում տարբերակները:

Որքանո՞վ է տեղին խնդրի լուսաբանման համատեքստում հիշատակել ինքնասպանության հնարավորությունը: Չէ՞ որ, եթե տիկին Մելանյան կամքով ուժեղ է և մերժում է այդ ճանապարհը, ուրիշները կարող է՝ պակաս ինքնավստահ լինեն: Նման մեջբերումներն անելիս ևս արժե խորհրդակցել մասնագետների հետ:

Արդյոք հաշմանդամությունն արժե՞ ներկայացնել պետությանը օգտակար լինելու կամ պետության վրա բեռ դառնալու համատեքստում: Տոտալիտար հասարակություններին էր հատուկ «պետությանը օգտակար լինելու» անհրաժեշտության հայեցակարգը, որն իր ծայրահեղ դրսևորումներին հասավ նացիստական Գերմանիայում: Ժամանակակից սոցիալական, ժողովրդավարական հասարակությունը ջանում է առավելագույնս ապահովել բոլոր քաղաքացիների կարիքները՝ անկախ նրանց «օգտակարության» աստիճանից:

հանդիպում այս ախտորոշմամբ մարդիկ՝ հիմնականում երիտասարդներ, որ դատապարտված են ապրել փակ սենյակներում, անշարժ գամված սայլակներին:

«Մի ընկերուհի ունեմ, ասում է՝ «Մելան, ես քո տեղը լինեի, հիմա կախվել էի», ասում եմ՝ «հենց էդ ա, ես էլ կախվողներից չեմ»,– նշեց Մելանյան:

«Սա երիտասարդների հիվանդություն է. և նա ստանում է մի ախտորոշում, որ մի բժիշկ էլ կարող է ասել՝ «հորիզոնի վրա նստասայլակն է, դու հասկանո՞ւմ ես», և լրիվ հիասթափված գա ու ասի՝ «բժիշկ ջան, էլ ինչի՞ համար ենք պայքարում, ինչի՞ համար ենք անում, եթե ես մեկ է՝ դառնալու եմ հաշմանդամ»,– ասաց ԵՊԲՀ նյարդաբանության ամբիոնի վարիչ Հովհաննես Մանվելյանը:

Հովհաննես Մանվելյանը, որ նաև նյարդաբանության կլինիկայի ղեկավար է ու Նյարդաբանների ասոցիացիայի փոխնախագահ է, շեշտում է՝ ցրված սկլերոզ ախտորոշվում են հիմնականում 20–40 տարեկանները: Ամեն շաբաթ միայն այս կլինիկայում 2–3 նոր դեպք է գրանցվում: Պետությունն, ըստ նրա, պետք է քայլեր ձեռնարկի:

«Ինչի ենք մենք պնդում ցրված սկլերոզի համար մանավանդ՝ որովհետև սրանք երիտասարդներն են, իրենք դեռ պետք է հասցնեն պետությանն էլ օգտակար լինեն, ոչ թե բեռ լինել պետությանը: Եթե մենք նրանց օգնում ենք առողջ լինել, բեռ չեն դառնում պետությանը, չի դառնում սոցիալական խնդիրների լուծման հարց, կարողանում ենք օգնել»,– ընդգծեց Մանվելյանը:

Պրոֆեսոր Մանվելյանի տեղեկացմամբ՝ Առողջապահության նախարարության հետ

քննարկում են սկսել, որպեսզի Հայաստանի հիվանդների համար էլ անվճար դառնա այն դեղորայքը, որ արդյունավետ է միջազգային չափորոշիչներով: Այն գրանցված է երկրում, բայց գնի պատճառով հասանելի է քչերի համար:

«Աստված ոչ անի, եթե ես հայտնվեմ սայլակի վրա, իհարկե, ես դրա մասին չեմ մտածում, չեմ էլ ուզում տենց բան լինի, հաստատ ես չեմ կարողանալու տնից դուրս ու ներս անեմ»,– ասաց Էլինա Պապյանը:

Էլինան այն հաջողակներից է, որ աշխատանք ունի, միայն թե գործի գնալ-գալիս անպայման օգնական պիտի ունենա. աջ կողմը՝ ոտքն ու ձեռքը թույլ են: Հիվանդության առաջին նշանը 8 տարի առաջ էր՝ աջ կողմը միանգամից թուլացավ.– «Տանը զգացի, որ դանակ-պատառաքաղ չէի կարողանում նորմալ օգտագործել: Էդ պահին բանի տեղ չդրեցի, մի երկու օր անցավ, ինքն իրան անցավ, ուղղակի զգացի, որ ես չեմ կարողանում կրունկի վրա կանգնել, նույնիսկ քայլել»:

Ցրված սկլերոզ՝ ախտորոշումից հետո տևական սթրեսն էր.– «Գիշերները լացելով էի անցկացնում, խորը դեպրեսիա տարա, մինչև որ հետո ես հասկացա, որ տենց ես ավելի վնաս եմ տալիս»:

Վիճակը սկզբում կայուն էր, հետո սկսեց բարդանալ, անհրաժեշտ դեղի մեկ դոզան 2 միլիոն 700 հազար էր՝ պետք է ստանա 6 ամիսը մեկ:

«Տարվա մեջ 5 միլիոն 400 հազար ես պետք է ունենամ, որ կարողանամ ստանալ, ու ես դա ստանում եմ ոչ թե իմ վիճակը լավացնելու, այլ ստանում եմ՝ իմ վիճակը կայուն պահելու համար: Այսինքն եթե ժամանակին ստանայի այդ

դեղը, ես հիմա չէի հասնի այս վիճակին»,– ներկայացրեց նա:

Էլինայի ընկերները դրամահավաք կազմակերպեցին ու առաջին երկու փուլերի համար գումարը հավաքվեց, մի քանի ամսից երրորդ փուլն է՝ գումարի հարցը անորոշ: Էլինան իր շուրջն է համախմբել ցրված սկլերոզով ապրող բախտակիցներին, բոլորով դիմելու են Առողջապահության նախարարությանը.– «Առաջինը, որ ցրված սկլերոզ հիվանդությունը մտնի պետծրագիր և ֆինանսավորվի պետության կողմից, այսինքն այդ նույն դեղորայքը, որ ամբողջ աշխարհում ստանում են անվճար, նույնը մենք ունենանք հնարավորություն անվճար ստանալու»:

«Հիվանդությամբ տառապել» արտահայտությունը վաղուց արմատավորված լեզվական կաղապար է, որից արժե հրաժարվել՝ առավելություն տալով, օրինակ, «հիվանդություն ունենալ» ձևին՝ կրկին ճգտելով հնարավորինս ճշգրիտ արտահայտել իրողությունները: Ընդհանրապես, գոյների խտացումը լավ լրագրություն չէ, ինչպես, ասենք, «սարսափելի» բառը՝ «հենց այստեղ էլ սայլակի հեռանկարը է՛լ ավելի սարսափելի է թվում». եղած խնդիրների նկարագրությունն արդեն իսկ բավական է:

Էլինայի ընկերներից մեկն էլ է հիվանդ՝ ողնաշարի ոսկրացումով, ինչպես ասում է՝ «ոսկրանում է ողնաշարս»: Ինքն ասում է, որ ինքը ոչ մի բանից կտրված չեմ, ես աշխատում եմ, հանդիպում եմ ընկերներիս հետ, գնում եմ համերգներ, թատրոն»:

Շենքը, որտեղ ապրում է, բոլորովին հարմարեցված չէ հենաշարժողական խնդիր ունեցողի համար: Էլինան ինքն է նախաձեռնել, որ բազրիքի պես մի բան սարքեն ու ինքը կարողանա պատերին հենվելով մի կերպ հասնել վերելակին, հենց այստեղ էլ սայլակի հեռանկարը է՛լ ավելի սարսափելի է թվում: Էլինան չափել է՝ ոչ մի սայլակ այդ վերելակի մեջ չի տեղավորվի:

ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԽՈՑԵԼԻ ԽՄԲԵՐ

Սոցիալապես խոցելի խմբերում մենք դիտարկում ենք թմրամոլների, քրեակատարողական հիմնարկներում գտնվող բանտարկյալների, անօթևան մարդկանց, հաշմանդամություն ունեցող անձանց, տարեցների, ազգային փոքրամասնությունների, փախստականների, տեղահանվածների, գործազուրկների և այլոց: Քանի որ վերոգրյալ խմբերից որոշների մասով այս ձեռնարկում կան համապատասխան բաժիններ, այս համատեքստում անդրադարձն առավել նեղ կլինի:

Փակ, տոտալիտար հասարակություններում, սոցիալապես խոցելի խմբերի՝ թմրամոլների, բանտարկյալների, անօթևան մարդկանց և գործազուրկների գոյությունը կա՛մ պաշտոնապես չի ընդունվել, կա՛մ էլ այդ խմբերը համարվել են պետության թշնամիներ: Որպես հետևանք՝ նրանց կյանքը, հոգսերը և խնդիրները հետաքրքրություն չեն ներկայացրել, չեն լուսաբանվել և չեն ուսումնասիրվել լրատվամիջոցների կողմից: Ժողովրդավարական հասարակություններում մարդիկ եկել են այն համոզման, որ նման խմբերի ներկայությունն անտեսելը վնասակար է ոչ միայն նրանց, այլև ընդհանրապես, ամբողջ հասարակության համար: Այն հասարակությունները, որոնք նախկինում կարծում էին, որ կապիտալիզմին վերագրվող հասարակական չարիքներն իրենց չեն վերաբերում, այժմ հասկացել են, որ խնդրի գոյությունը չնկատելը չի վերացնում խնդիրը: Իրականում, խոցելի խմբերին պատկանող քաղաքացիների մեծ և հետզհետե աճող թիվը ապացուցում է ճիշտ հակառակը. ձևացնելը՝ իբր նրանք գոյություն չունեն, ի վերջո, միայն ավելի է վատթարացնում իրավիճակը:

Հայաստանում սոցիալապես խոցելի խմբերի վերաբերյալ լուսաբանումներն արդիական են արդեն մի քանի տասնամյակ,

քանի որ բարձր են աղքատության և ծայրահեղ աղքատության մակարդակները, ինչը հետևանք է նաև տեղի ունեցած աղետների (երկրաշարժ, ջրհեղեղ), ղարաբաղյան պատերազմների և բռնի տեղահանության:

Ահա սոցիալապես խոցելի խմբերի մասին լրագրության բարելավմանն ուղղված որոշ խորհուրդներ.

- Պարզեք, թե որ խոցելի խմբերն են բնորոշ ձեր համայնքին կամ մարզին: Առկա՞ է արդյոք գործազրկության խնդիրը, որը կարող է, օրինակ, համայնքում աշխատող գործարանի փակման կամ որևէ բնական աղետի հետևանք լինել: Մե՞ծ է արդյոք ներքին կամ արտաքին գործոններով պայմանավորված ունեցվածքի բռնագրավման կամ որևէ այլ պատճառով անօթևան դարձած մարդկանց թիվը: Ինչպիսի՞ն է պատերազմի մասնակիցների, բռնի տեղահանվածների վիճակը: Իսկ թմրամոլների՞նը, ծերանոցում ապրող տարեցների՞նը, կամ մանկատան երեխաների՞նը: Այնուհետև ուսումնասիրեք, թե արդյոք լրատվամիջոցները գրե՞լ են այդ խմբերի մասին, և եթե՝ այո, գնահատեք այդ նյութերը և պարզեք, թե ինչ բացթողումներ են արվել:
- Անպայման հարցազրույց վերցրեք գործազուրկներից, ազատազրկվածներից, թմրամոլներից, պատերազմի մասնակիցներից և մյուսներից, որոնց մասին գրում եք: Խոցելի խմբերին պատկանող անձինք, եթե անգամ երբևէ հայտնվում են մամուլում, ապա սովորաբար՝ հանցագործությունների հետ կապված, և հաճախ նրանց տեսակետները լուսաբանումներում չեն ներկայացվում. իրավապահ մարմինների պաշտոնյաները և «փորձագետներն» իրենց իրավունք են վերապահում պատեհ-անպատեհ արտահայտել իրենց դիրքորոշումը: Եվ քանի որ լրագրողները հաճախ կիսում են այդ կարծրատիպերը, նրանք կարող են

դրանք պարզապես փոխանցել ընթերցողներին՝ առանց ֆիլտրելու:

- Կապ հաստատեք հասարակական կազմակերպություն-ների հետ, որոնց առաքելությունը գործազուրկներին, թմրամոլներին, անօթևան մարդկանց, ծերանոցներում բնակվողներին, մանկատան երեխաներին և սոցիալա-պես այլ խոցելի խմբերին պատկանող անձանց օգնելն է: Վստահեք այդ մարդկանց՝ իբրև հուսալի աղբյուրնե-րի: Հասարակական կազմակերպություններին խնդրեք կապ հաստատել ձեզ հետ, եթե ցանկանում են՝ որևէ թեմա լուսաբանվի: Պարզեք, թե որոնք են այն ամենա-կարևոր խնդիրները, որոնց հետ նրանք աշխատում են: Խնդրեք նրանց ձեզ օգնել, որպեսզի դուք որոշ ժամանակ անցկացնեք նրանց կողմից պաշտպանվող խմբերի ան-դամների հետ:
- Գործազուրկների, թմրամոլների և մյուսների հետ հար-ցազրույց անցկացնելիս, մի սահմանափակվեք միայն այդ թեմաներին վերաբերող հարցերով: Փորձեք ամբողջա-կան պատկերացում կազմել նրանց կյանքի մասին, գտ-նել մի բան, ինչով նրանք ապրում են: Հարցրեք նրանց հետաքրքրությունների, հոբբիների, ընտանիքի անդամ-ների, սիրած կենդանիների և այն ամենի մասին, ինչը թույլ կտա ձեզ ընկալել նրանց իրականությունը և ոչ թե դիտել նրանց զուտ իրենց խնդիրների պրիզմայով: Ջա-նացեք փոխանցել, թե ինչպիսին են այդ մարդիկ իրա-կանում՝ հարուստ անցյալով և բարդ ներաշխարհով, և ոչ թե ցույց տվեք նրանց սոսկ որպես սոցիալապես խոցելի խմբի ներկայացուցիչներ:
- Համատեքստում քննեք սոցիալական խնդիրները: Եթե վերջին ժամանակներում թմրամոլությունը մեծ խնդիր է դարձել, ապա ուսումնասիրեք, թե ինչ գործոններ են ընկած դրա հիմքում: Տնտեսական անկու՞մը, թե՞

թմրանյութերի առավել մատչելիությունը: Եթե աճում է գործազրկությունը, փորձեք պարզել, թե ինչու են փակվում աշխատատեղերը: Եթե գրում եք նախկինում դատապարտվածների մասին, որոնք կրկնահանցագործներ են, հետազոտեք, թե նախկին բանտարկյալների համար աշխատանք գտնելը հեշտ է, թե՞ դժվար, վերասոցիալականացման ի՞նչ ծրագրեր են իրականացվում: Եթե դուք ներկայացնեք դեպքերի ամբողջական պատկերը, դա կօգնի ընթերցողին հասկանալ մյուսների դրությունը:

- Նկարագրեք այդ խմբերի անդամներից որևէ մեկին, որն ինչ-որ ձեռքբերում է ունեցել կամ արտառոց բան է արել: Արդյոք մեկը, որ չի կարողացել աշխատանք գտնել մի բնագավառում, ջանացել և հաջողությա՞ն է հասել մեկ այլ բնագավառում: Եղե՞լ է արդյոք մեկը, որ թողել է թմրամոլությունը և կազմակերպություն է ստեղծել նմանատիպ իրավիճակում գտնվող մյուս մարդկանց օգնելու համար: Արդյոք որևէ նախկին բանտարկյալ լիովին վերափոխվել և ճանաչո՞ւմ է գտել, ասենք, որպես նկարիչ:
- Չնայած այդ մարդկանց հետ ժամանակ անցկացնելը վճռականություն է պահանջում, սակայն դա չի նշանակում, որ նրանց ասած յուրաքանչյուր բան պետք է միանշանակ ընդունեք: Անկասկած, շատ ճնշող պատմություններ կլսեք նրանցից, սակայն, եթե համոզված չլինեք դրանց ճշմարտացիության մեջ, ապա նյութում պետք է նշեք, որ տվյալ տեղեկատվությունը վերագրում եք ձեր աղբյուրին: Օրինակ, եթե թմրամոլն ասում է, որ շաբաթական միայն մեկ անգամ է թմրանյութ օգտագործում, դուք պետք է գրեք՝ նա ասում է, թե շաբաթական միայն մեկ անգամ է թմրանյութ օգտագործում, քանի որ չեք կարող վստահ լինել՝ դա ճիշտ է, թե ոչ: Կամ եթե գործազուրկն ասում է, թե ինքը 10 անգամ աշխատանքի մերժում է ստացել, ուրեմն դուք պետք է հայտնեք, որ նա ասում է, թե 10 անգամ աշխատանքի

մերժում է ստացել, այլ ոչ թե ներկայացնեք դա իբրև փաստ: Լավագույն դեպքում դուք պետք է ճշտեք այդ փաստերը, ասենք, ստուգեք՝ կա՞ն աշխատանքի դիմելու հայտեր կամ մերժման փաստեր էլեկտրոնային փոստում:

Դեպքերի ուսումնասիրություն

Այս լրատվական նյութը ոստիկանական հաղորդագրության արտատպում է: Լրատվակայքի աշխատակիցները վերնագրում շեշտել են գողության մեջ կասկածվողի՝ իբր թմրամոլ լինելու հանգամանքը՝ կարծես ակնարկելով, թե թմրանյութեր օգտագործելու փաստն ուղղակիորեն պայմանավորում է նաև հանցագործության հակումներ ունենալը:

Գողը նաև թմրամոլ էր. Մուղնիում բնակարաններից մեկից գողացել էր լվացքի մեքենա և սառնարան[20]

Իրականում պետք է հասկանալ, որ թմրանյութերից կախում ունեցող ոչ բոլոր մարդիկ են հակված հանցագործության: Իհարկե, չի բացառվում, որ առհասարակ, ինչ-որ թմրամոլ իր կախվածությունը բավարարելու համար գնա հանցանքի, կամ թմրանյութի ազդեցությունը որևէ պատճառահետևանքային կապ ունենա գործած հանցանքի հետ: Սակայն ոստիկանական հաղորդագրության մեջ նման կապ

Ապրիլի 14-ին ոստիկանության Աշտարակի բաժնում բնակարանային գողության վերաբերյալ հաղորդում տվեց Մուղնիի մի բնակչուհի. ապրիլի 10-ից 14-ն ընկած ժամանակահատվածում տեխնիկական միջոցների գործադրմամբ մուտքի դուռը բացել, մտել էին տուն և գողացել սառնարան ու լվացքի մեքենա:

Ոստիկանությունից NEWS.am-ին հայտնում են, որ վնասի չափը 500 հազար դրամի էր: Նույն օրը Աշտարակի քրեական հետախույզները նաև օպերատիվ տեղեկություն ստացան: Տեղեկության համաձայն՝ Ներսես Աշտարակեցու փողոցի 30-ամյա մի բնակիչ կատարել էր

20 https://news.am/arm/news/819457.html

չի մեջբերվում, և լրագրողն էլ չի փորձել իր սեփական հետաքննությունը վարել: Հետևաբար, նյութի վերնագրում ուղղակի վերարտադրվել է «թմրամոլ-հանցագործ» կարծրատիպային մոտեցումը:

Մեկ ուրիշ հատկանշական բան. ոստիկանական հաղորդագրության մեջ չի ասվում, որ ձերբակալվածը թմրամոլ է, այլ ասվում է, որ նա «ապօրինի պահում և օգտագործում էր թմրամիջոց»: Արդյոք թմրամիջոց պահող և օգտագործող յուրաքանչյուր ոք կարո՞ղ է համարվել թմրամոլ: Սա հարց է, որը լրագրողը պետք է տա նախ ինքն իրեն, հետո՝ մասնագետին, բնորոշումները հստակեցնելու և ընդհանրացումներից խուսափելու համար:

բնակարանային գողություն, ինչպես նաև ապօրինի պահում և օգտագործում էր թմրամիջոց: Երիտասարդը ձերբակալվեց և տեղափոխվեց բաժին:

Անձնական խուզարկությամբ նրա մոտ հայտնաբերվեցին 4 գրամից ավելի կանեփանման զանգված և կաթուցիչ:

Բացատրական աշխատանքի շնորհիվ երիտասարդը խոստովանեց, որ նշված բնակարանային գողությունը կատարել է ինքը, իսկ սառնարանն ու լվացքի մեքենան նույն օրը 60 հազար դրամով վաճառել էր անծանոթ անձի:

Երիտասարդը և կազմված փաստաթղթերը ներկայացվել են Արագածոտնի մարզային քննչական վարչություն: Նախաձեռնվել է քրեական վարույթ: 30-ամյա երիտասարդը տեղափոխվել է ձերբակալվածների պահման վայր:

Այս հոդվածը պատմում է սարսափելի հանցանքի մասին, և, առանց խորամուխ լինելու դրա դրդապատճառների մեջ, հոդվածագիրը վերնագրում շեշտում է, որ դրա հեղինակը մանկատան սան էր՝ ավելի խոցելի վիճակի մեջ դնելով առանց այդ էլ խոցելի խմբի ներկայացուցիչներին:

Մանկասպան մայրը մանկատան սան էր[21]

Նյութը պատմում է մեկ օր առաջ տեղի ունեցած դեպքի մասին, հետևաբար, չէր կարող դեպքի վերաբերյալ ուժի մեջ մտած դատավճիռ լինել: Մինչդեռ լրագրողը, նյութում խոսելով ենթադրյալ հանցանքը գործած կնոջ մասին, մի քանի անգամ նրան «մանկասպան» է անվանում՝ խախտելով անմեղության կանխավարկածը:

Նյութում նշվում են ողբերգական դեպքի մասնակիցների անունները, ինչը խախտում է անձնական տվյալների գաղտնիության սկզբունքը: Եթե անգամ դեպքի մանրամասները հանրային հետաքրքրություն են ներկայացնում ողբերգության սոցիալական պատճառները վերհանելու տեսանկյունից, այնուհանդերձ, և՛ զոհերը, և՛ ենթադրյալ հանցագործը անձնական տվյալների պաշտպանության իրավունք ունեն: Լրագրողը նման զգայուն նյութեր լուսաբանելիս պետք է հաշվի առնի դա:

Նախորդ օրը՝ ժամը 23.30-ին, ոստիկանության Արարատի բաժնում մի կնոջից ահազանգ է ստացվել, որ 34-ամյա Ռոզա Ալոյանը տանը վնասել է իր 2 դեռահաս երեխաներին և փակելով դուռը՝ հեռացել է: Նշված բնակարանում հայտնաբերվեց 6-ամյա Վարդան և 4-ամյա Հայկ Ալոյանների դիակները՝ խեղդամահ վիճակում:

Ոստիկանության Արարատի քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ՝ Արարատ քաղաքի դեռահասներ Վարդան Ալոյանի և Հայկ Ալոյանի սպանության դեպքի առթիվ: Մեզ հաջողվեց որոշ մանրամասներ պարզել: Մայրը՝ Ռոզա Ալոյանը, ծնվել է Արարատ քաղաքում՝ 1977 թ. սեպտեմբերի 24-ին: Վերջինիս մայրը՝ Շողիկ Ալոյանը, տարբեր ամուսնական հարաբերություններից ունեցել է 2 դուստր: Դեռևս մանկահասակ տարիքում մանկասպանի հայրը լքել է ընտանիքը: Այնուհետև նրա մայրը, երրորդ անգամ ամուսնանալով Հ. Թադևոսյանի հետ, ունեցել է ևս 2 երեխա: 1989 թ. Հ. Թադևոսյանը սպանել է մանկասպանի մորը՝ տանը կացնահարելով նրան, որից հետո Ռոզա Ալոյանը հարազատների կողմից տեղավորվել է Գավառի մանկատուն և այնտեղ մնացել մոտ 7 տարի: 1995 թ. մանկասպան մայրը ընդունվել է Երևանի «Էրեբունի» բժշկական քոլեջ և 1997 թ. ավարտելով այն՝ ստացել բուժքրոջ որակավորում: Հիշյալ քոլեջում ուսանելու ընթացքում նա ամուսնացել է և ամուսնու ծնողների հետ անհաշտության և կենցաղային խնդիրներ ունենալու պատճառով ամուսնու հետ տեղափոխվել ու վարձով բնակվել է Երևանի տարբեր մասերում:

21 https://www.aravot.am/2011/09/08/336154/

Ամուսնական կյանքում եղել է անհաշտ, հաճախակի վիճել ամուսնու հետ: 2003 թ., որպես մանկատան սան, նրան բնակարան է հատկացվել Արարատ քաղաքի Շահումյան 69/7 հասցեում:

Ի՞նչ կապ ունի Ալոյանի եղբայրն այս նյութի հետ, ինչո՞ւ է պատմության կեսից՝ առանց համատեքստի և մեկ նախադասությամբ, հիշատակվում Ալոյանի եղբոր ինքնասպանության դեպքը. պարզ չէ:

Շուրջ 6 տարի առաջ բանակում կախվելու միջոցով ինքնասպան է եղել Ռ. Ալոյանի խորթ եղբայրը: Համատեղ ամուսնական կյանքի ընթացքում Ալոյանի ամուսինը հաճախ է լքել ընտանիքը, իսկ երեխաները մնացել են Ռ. Ալոյանի խնամքին, սակայն նրանց կարիքները հոգալու համար Ռ. Ալոյանի ամուսինը պարբերաբար ֆինանսական օգնություն է ցույց տվել ընտանիքին: Նախաքննությամբ պարզվել է, որ 2011 թ. սեպտեմբերի 6-ին՝ առավոտյան, Ռ. Ալոյանն երեխաներին կերակրել է, որից հետո որոշել է խեղդամահ անել նրանց, այնուհետև վերջ տալ իր կյանքին՝ պատճառաբանելով, որ իրեն միայնակ է զգում և իր կյանքն անիմաստ է համարում: Այդ նպատակով սեպտեմբերի 6-ին՝ ժամը 12:00-ի սահմաններում, Ռ. Ա.-ն շարֆը կապելով խոհանոցի դռան վերևում գտնվող ջրատար խողովակին, դրա վրա հանգույց անելով, ավագ որդուն՝ Վ. Ալոյանին կախելով այդ հանգույցից, խեղդամահ է արել: Այնուհետև խոհանոցի պատին ամրացված կախիչից ամրացնելով սավանից պատրաստված մեկ այլ օղակ՝ դրանից կախել և խեղդամահ է արել նաև կրտսեր որդուն՝ Հ. Ալոյանին: Այս ամենից հետո երեխաների դիակները տեղափոխել է մահճակալի վրա, պառկել նրանց կողքին, սավանը փաթաթել իր պարանոցին և փորձել իր կյանքին վերջ տալ, սակայն իր մտադրությունը չի իրագործել: Երեխաներին վերմակով ծածկել է և տնից հեռացել՝ ավտոբուսով մեկնելով Երևան: Սեպտեմբերի 6-ին ուշ երեկոյան մանկասպանը հայտնաբերվել և ձերբակալվել

Ի՞նչ իմաստ ունի այստեղ ներկայացնել ենթադրյալ հանցագործի անվան սկզբնատառերը, եթե վերևում արդեն նշվել է նրա ամբողջական անունը:
Ի՞նչ կարևորություն են ներկայացնում այս բոլոր մանրամասները: Լրագրողը չպետք է տրվի սարսափելի նկարագրությունները շարադրելու գայթակղությանը, եթե դա հանրային շահի տեսանկյունից անհրաժեշտ չէ՝ մանավանդ որ այդ մանրամասները դեռ ապացուցման կարիք ունեն:

է: Նախաքննությամբ պարզվել է, որ Ռ. Ա.-ն «Արարատ քաղաքի պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի հոգեբուժական և նարկոլոգիական կաբինետներում հաշվառված չէ: Որոշ տեղեկություններով՝ նրա տանը բազմաթիվ կրոնական գրքեր են հայտնաբերվել:

Նույնը վերաբերում է կրոնական գրքերի առկայության հիշատակմանը՝ «որոշ տեղեկություններով»: Արդյոք այդ չհաստատված փաստը որևէ կապ ունի՞ հանցանքի հետ: Եթե այո, ապա դրա մասին նյութում պետք է նշվի, այլապես ընթերցողի մոտ կարող է տպավորություն ձևավորվել, որ կրոնական գրքեր կարդացողները հակված են նման սարսափելի քայլերի:

ՏԱՐԵՑՆԵՐ ԵՎ ԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐ

Տարեցները և թոշակառուները ևս համարվում են խոցելի խումբ, քանի որ վերջիններս թիրախավորվում են սոցիալ-տնտեսական հիմքով և ինչ-որ կերպ հանդիսանում կամ ներկայացվում են որպես հասարակության «թույլ օղակ»: Քանի դեռ տարեցների թոշակները նվազ են և չեն ապահովում բավարար կենսամակարդակի պայմանները, սոցիալ-տնտեսական փոփոխությունները նրանցից շատերին ստիպում են նվազագույն կարիքներն ապահովելու համար հավելյալ գումար վաստակելու այլ միջոցներ գտնել: Գնաճը երբեմն այնքան է գերազանցում գնողունակությանը, որ նրանք հաճախ ստիպված են լինում դիմել ծայրահեղ քայլերի և փողոցներում ողորմություն խնդրելու տարատեսակ միջոցների:

Լրագրողները հազվադեպ են անդրադառնում տարեցների խնդիրներին, եթե համատեքստում չկա իրադարձություն: Տարեցները գրեթե միշտ մամուլում հայտնվում են տատիկի տեսքով՝ կռացած և պատռված շալի մեջ փաթաթված, որը գանգատվում է, թե ինչպես է ամեն ինչ փոխվել: Հազվադեպ է պատահում, որ տարեց մարդկանց նկարագրեն որպես կայացած, գրավիչ, իրենց իրավունքների համար պայքարող մարդանց: Այստեղ պետք է ուշադրություն դարձնել նաև տարեցների խնամքի կենտրոններում ապրող շահառուներին, որոնք կիսափակ հաստատություններում կարող են լինել խոցելի և ծանր իրավիճակներում:

Ահա մի քանի խորհուրդ տարեցների վերաբերյալ լուսաբանումների համար.

- Պարզեք, թե արդյոք ձեր համայնքում կամ մարզում գոյություն ունե՞ն տարեցներին աջակցող կազմակերպություններ: Նրանց հետ խոսեք տարեցների առջև ծառացած

խնդիրների մասին: Եղեք այն զբոսայգում կամ համայնքային կենտրոնում, որտեղ հաճախ են այցելում տարեցները: Վերջիններիս հարցրեք իրենց խնդիրների և հաջողությունների մասին:

- Անշուշտ, ֆինանսական հոգսերը կարևոր են, սակայն դրանք ուսումնասիրության միակ առարկան չեն: Օրինակ՝ դուք կարող եք ուշադրությունը կենտրոնացնել տարեցների առջև ծառացած առողջական խնդիրների վրա. ո՞ր հիվանդություններն են տարածված նրանց շրջանում, կամ որտե՞ղ կարող են նրանք բուժում ստանալ, ինչպե՞ս են նրանք բուժվում հիվանդանոցներում, արդյոք գտնվո՞ւմ են պետության հոգածության ներքո:
- Իրենց զավակների և թոռների հետ տարեցների հարաբերությունները փոխվել են վերջին տասնամյակների ընթացքում: Շատ երիտասարդներ հեռացել են ծնողներից և երկրից՝ իրենց կյանքն ավելի լավ դասավորելու ակնկալիքով: Որոշ ընտանիքներ մասնատվել են պատերազմի հետևանքով, իսկ մի մասն էլ փորձում է վերապրել կորուստները կամ հաշմանդամությունը: Գրեք այս հարցերի մասին: Ինչպե՞ս են տնտեսական և սոցիալական փոփոխություններն ազդել ընտանեկան վիճակի վրա:
- Մեկ օր անցկացրեք փողոցում մուրացող մեկ կամ ավելի տարեց մարդկանց հետ և գրեք նրանց մասին. ինչպիսի՞ վերաբերմունքի են նրանք արժանանում, ի՞նչ են այդ մասին մտածում իրենք՝ տարեցները, որքա՞ն գումար են նրանք օրական հավաքում և ինչպե՞ս են ծախսում, ինչպե՞ս են նրանք որոշում, թե որ անկյունը կամ տեղանքն ընտրել: Զուգահեռ փորձեք չձևավորել կարծրատիպ՝ իբրև տարեցների միակ զբաղմունքը կարող է լինել մուրացկանությունը:
- Մեկ օր էլ անցկացրեք փողոցում շոկոլադ, օծանելիք, բանջարեղեն կամ այլ բան վաճառող տարեց կնոջ կամ

տղամարդու հետ: Ուսումնասիրեք նրանց սոցիալական դրությունը. որտեղի՞ց են նրանք հայթայթում ապրանքները, որքա՞ն են ստիպված լինում վճարել և որքա՞ն են վաստակում, ի՞նչ խնդիրներ են ունենում իշխանությունների հետ:

- Այցելեք տարեցների խնամքի կենտրոններ, փորձեք հասկանալ իրենց կենսաձևն ու առօրյան: Հարցրեք՝ ի՞նչ խնդիրների են բախվում, ինչպե՞ս են անցկացնում օրը, արդյոք զբաղվո՞ւմ են մշակութային կյանքով, ինչի՞ց են զրկված, ո՞րն է սիրելի զբաղմունքը, ինչո՞վ կուզենային զբաղվել:
- Ներկայացրեք յուրօրինակ զբաղմունք ունեցող տարեց մարդկանց: Արդյոք ձեր շրջապատում կա՞ որևէ հայտնի դերասան, որը շարունակում է աշխատել թոշակի անցնելուց հետո, կամ գուցե որևէ իրավաբան, բժիշկ կամ այլ մասնագետ: Գտեք այնպիսի տարեցների, որոնք ունեն հետաքրքիր հոբբիներ կամ օժտված են յուրահատուկ հմտություններով ու տաղանդով, կամ էլ զբաղվում են սպորտով կամ որևէ այլ ֆիզիկական գործունեությամբ: Արդյոք հատուկ հետաքրքրություն ունենալը նրանց օգնո՞ւմ է երիտասարդ զգալ:
- Գրեք տարեց մարդկանց նկատմամբ խտրականության խնդրի մասին: Տարեցների նկատմամբ առկա կարծրատիպերին և խտրականությանը վերաբերող խնդրի քննարկումն աշխարհի զարգացած երկրներում ավելի ու ավելի է տարածում գտնում: Արդյոք նմանատիպ ընկալում կա՞ ձեր համայնքում: Արդյոք տարեցներին խտրականությա՞մբ են վերաբերվում, օրինակ, աշխատավայրում կամ այլուր:

Դեպքերի ուսումնասիրություն

Այս նյութը ոստիկանության պաշտոնական հաղորդագրությունն է ինչ-որ կենցաղային հանցանքի մասին: Ինչպես նախորդ գլուխներում, այստեղ ևս ուշագրավ է այն, որ անհարկի շեշտվում է հանցանքը կատարած անձի պատկանելությունը այս կամ այն սոցիալական խմբին: Ի՞նչ կարևորություն ունի ենթադրյալ հանցագործի տարիքը դեպքի համատեքստում՝ չի նշվում, մինչդեռ լուրը հայտնող պետական գերատեսչությունը դա շեշտել է վերնագրում, իսկ լուրը տարածող տասնյակ լրատվամիջոցները նույնությամբ վերարտադրել են այն՝ առանց խորամուխ լինելու դեպքի հանգամանքների մեջ:

Գրպանահատը վաթսունն անց կին էր. Սպիտակի ոստիկանների բացահայտումը[22]

Փետրվարի 3-ին ոստիկանության Սպիտակի բաժնում մի կին հաղորդում էր տվել, որ ժամեր առաջ Սպիտակ քաղաքի Ալեք Մանուկյան փողոցի սուպերմարկետի դրամարկղի մոտ վերարկուի գրպանից գողացել են դրամապանակը, որի մեջ մոտ 100 հազար դրամ էր: Գաղտնի հափշտակությունը բացահայտվեց հաղորդումից րոպեներ անց՝ քրեական հետախույզների արագ և օպերատիվ արձագանքման շնորհիվ: Անհետաձգելի միջոցառումներով նրանք պարզեցին, որ տուժողի դրամապանակը գողացել է Երևանում հաշվառված

22 https://www.police.am/news/view/grpan070222.html

65-ամյա մի կին: Ժամը 17-ի սահմաններում կասկածվողը Ապարան քաղաքի Գայի փողոցում հայտնաբերվեց ու բերման ենթարկվեց ոստիկանության Սպիտակի բաժին: Նա տվել է խոստովանական բացատրություն: Գողոնը հայտնաբերվել է: Դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ:

Ուշագրավ է, որ նյութի վերջում սովորականի նման նշվում է ծանուցում, որ հանցանքի մեջ մեղադրվողը մինչև դատարանի վճիռը համարվում է անմեղ, սակայն վերնագրում ամեն ինչ միանշանակ է՝ «գրպանահատը», ոչ թե «գողության մեջ մեղադրվողը»:

Ծանուցում. *Ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:*

Այս հոդվածը, որը ներկայացնում է հեղինակի պատկերացումները ավագ սերնդի նկատմամբ հարգանքի դրսևորման մասին, որոշ խնդրահարույց կետեր է պարունակում:

Շքեղ ծերանոց՝ խղճուկ տան փոխարեն. երբ է ծերերի աչքերում կորչում ուրախության փայլը[23]

Արդյոք խոր ծերության հասած մարդիկ, որոնք հատուկ խնամքի կարիք ունեն, և որոնց տեղափոխում են խնամքի կենտրոն, «անպե՞տք» են դառնում: Անգամ չակերտների մեջ վերցված, այս ձևակերպումը անհասկանալի է և հարցեր է առաջացնում:

Ե՞րբ են ծնողներն «անպետք» դառնում: Sputnik Արմենիայի սյունակագիրը մտորում է ծերանոցների և այն մասին, որքան են դրանք արդիական Հայաստանի համար:

Վիդեոսյուժե. Թամանյանի արձան: Հին (ուղղակի ու անուղղակի իմաստով) երևանցիները գրկախառնվում են, համբուրվում, լուսանկարվում՝ որպես հիշատակ: Արդեն դժվար ճանաչելի դեմքեր, բայց անմոռանալի անուններ՝

23 https://bit.ly/3XSFT9V

Հարյուրամյակներ շարունակ քաղաքակիրթ հասարակությունները մարդու կյանքի որոշակի փուլում և որոշակի պայմաններում անհրաժեշտ լուծում են համարում խոր ծերության հասած մարդկանց խնամքի հատուկ կենտրոններում հյուրընկալելու պրակտիկան՝ շարունակաբար ձգտելով բարելավել պայմանները այդ հաստատություններում: Արդյոք հեղինակը համաձա՞յն է ծերերի խնամքի կենտրոնին տրված այս ծայրահեղ կոշտ ձևակերպմանը՝ «աղբանոց ծերերի համար»:

Սարգիս Հովիվյան, Ջավեն Սարգսյան, Գոգա, Կոլյա Ղազարյան... Հիշում ենք:

«Газета Ру» պարբերական, «Աղբանոց ծերերի համար»: Հեղինակն այնհայտ լրագրող Գեորգի Բովտն է: Նա ընթերցողին հասցնում է այն մտքին, որ «երբ գալիս է սեպտեմբերը», ուզած-չուզած պետք է ծնողներին հանձնես ծերանոց: Մտածում ենք...

Դեռ կվերադառնանք տեսանյութին, իսկ հիմա ներկայացնենք հարգելի գործընկերոջ փաստարկները՝ ծերացած մայրերի ու հայրերի բնակավայրը փոխելու օգտին:

Ալցհեյմեր, պարկինսոն, տարիքային դեմենցիա... «Այսպիսի մարդիկ կարող են ոչ միայն կորցնել հիշողությունը՝ մշտապես պահանջելով, որ տանը որևէ մեկը լինի, այլ կարող են նաև չմոտիվացված ագրեսիա դրսևորել, ու դուք, վերապատրաստվելով որպես բուժքույր կամ բուժեղբայր, պետք է հետևեք նրանց առողջական վիճակին»,- զգուշացնում է Գեորգի Բովտը:

Իսկապես, ինչ անել, եթե ծնողների մոտ ալցհեյմեր, պարկինսոն կամ տարիքային դեմենցիա են ախտորոշել, իսկ դուք չեք ուզում անշնորհակալ սրիկայի համբավ ձեռք բերել: Նորմալ գնով դայակ վարձե՞լ, նրանց ծերանո՞ց տանել: Առաջինն ընդունելի է, երկրորդը պարզաբանումներ է պահանջում: Հայաստանում հարմար պարզաբանում գտնելը հեշտ չի լինի:

Մեկ այլ ուշագրավ հանգամանք. ավանդաբար տարածված «ծերանոց» հասկացության փոխարեն, որը լեզվում իր արմատացած տեղն ունի, մասնագիտացված կառույցները խորհուրդ են տալիս ավելի շատ օգտագործել «տարեցների խնամքի կենտրոն» բառակապակցությունը՝ բացասական երանգը չեզոքացնելու համար:

Այնպես է ստացվել, որ ավելի քան մեկ տարի Դետրոյթի մոտակայքում եմ ապրել, այսպես կոչված «nursing homes»-ից՝ մեր լեզվով ծերանոցից երկու քայլ այն կողմ: Երկհարկանի շենք էր, որը զուրկ չէր ճարտարապետական նրբություններից, գազոնով ու կայանատեղիով: Բազում մեքենաներ կային, բայց հանգստյան կամ

Հեղինակը պնդում է, թե տարեց ծնողներին խնամքի կենտրոններ ուղարկող զավակներն անպայմանորեն «անշնորհակալ սրիկաներ» են, թեև բազմաթիվ դեպքերում այդ լուծումը բխում է ոչ միայն ավելի երիտասարդ սերնդի, այլև հենց տարեցների լավագույն շահից:

տոն օրերին, կարելի է ասել, ոչ մի հատ չէր մնում: Տատերն ու պապերը գնում էին երեխաների ու թոռների մոտ: Խոստովանում էին, որ դրանք իրենց կյանքի լավագույն ժամերն են: Փոխանցում եմ նրանց խոսքերը.«Սպասում ենք՝ երբ ենք մերոնց տեսնելու, կամ երբ են գալու, որ տեսնեն մեզ: Առանձնապես ոչինչ, վերջին օրերն ենք ապրում»:

Թեև աշխատանքային օրերին էլ այստեղ զբաղմունք կա. ուտելիքը հիանալի է, բուժսպասարկում կա, կա նաև գեղարվեստական ինքնագործունեություն՝ պարեր և այլն, բայց աչքերի մեջ փայլ չկա:

Անցնենք հաշվարկների: Ասում են՝ յուրաքանչյուր մարդ վեր է թռչում, երբ նրան առաջին անգամ ծեր են անվանում: Այստեղ իմ հայ հասակակիցները ևս մեկ անգամ վեր կթռչեն: Ծերանոցում երկու մարդու համար մեկ օրն արժե միջինը 227 դոլար: Անհատական կացությունը մոտ տասը տոկոս ավելի շատ արժե: Թանկ է:

Հետագա շարադրանքում հեղինակը համեմատում է ԱՄՆ-ում և Ռուսաստանում գործող տարեցների խնամքի մեկական կենտրոններ, այնուհետև գեղարվեստական շարադրանքի ձևով համեմատում է Երևանում (Հայաստանում) առկա վիճակը, որտեղ, իբր, ավանդական պատկերացումները ոչ արդիական են դարձնում ծերանոցների գոյության խնդիրը: Ինչը, նախևառաջ, չի համապատասխանում իրականությանը. Հայաստանում տասնյակից ավելի տարեցների խնամքի կենտրոններ կան, որտեղ հարյուրավոր մարդիկ են ապրում: Գուցե լրագրողական տեսանկյունից ավելի

Արդյո՞ք ծերերի համար առանձին բնակավայրերում ապրելու հնարավորություն կա: Կա: Բայց դա արդեն 60-ից մինչև 120 հազար դոլար, հետո էլ՝ 500-ից 3000 ամսական պահպանման համար:

Ավելի թանկ է: Թեև ծախսերի մեծ մասը հոգում է բժշկական ապահովագրությունը:

Հիմա Ռուսաստանը: Մասնավոր ծերանոցում մեկ ամիսը Ռուսաստանում միջինը արժե մոտ 60 հազար ռուբլի: Թանկ է: Մոսկվայում ու դրա մոտակայքում այդ թիվը հասնում է ամսական 100 հազարի: Ու ոչ մի ապահովագրություն: Շատ թանկ է:

Սակայն երևակայելի բաներից ամենաթանկը Հայաստանում է: Այստեղ էլ է փրկում ապահովագրությունը. ապահովագրությունն

արդյունավետ կլիներ քննել դրանցում առկա պայմանները և ձգտել ցույց տալ բարելավման ուղիները՝ հասարակությունում առկա կարծրատիպերը ամրապնդելու փոխարեն:

այն է, որ այստեղ ոչ մի բացատրությունով ու ոչ մի հանգամանքում ծնողներին ինտերնատ չեն հանձնում. մորը կամ հորը ուրիշի խնամքին հանձնելը նշանակում է ընդմիշտ խայտառակ լինել: Այսպես էր ու դեռ այսպես է: Պաշտպանված է սերնդեսերունդ փոխանցվող՝ սերունդների համերաշխության ավանդույթով:

Երեխաները մեծանում են, սկսում են խնամել ծնողներին, ու պարտադիր չէ, որ նույն տանիքի տակ ապրեն: Այստեղ կարևոր է, որ թոռները դա տեսնում ու սովորում են: Նրանք օրինակ են վերցնում ու հետագայում անում են այնպես, ինչպես տեսել են: Ու եթե դա մեզ այդպիսի «անիծված» անցյալ է տանում, որը համարում են նախնադարյան, ավատատիրական, խորհրդային, թող տանի:

Վերադառնում ենք երևանցիներին, որոնք ամեն աշուն Կասկադ են գալիս լուսանկարվելու: Ասում են՝ծերունիները դանդաղ են քայլում ոչ թե այն պատճառով, որ ոտքերը ցավում են, այլ որոհետև նրանք գնալու տեղ չունեն: Սա այն դեպքն է, որ գնալու տեղ կա:

Խաղաղություն ձեր տներին ու երկար կացեք:

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐ, ՏԵՂԱՀԱՆՎԱԾՆԵՐ ԵՎ ՆԵՐԳԱՂԹՅԱԼՆԵՐ

Պատերազմների պատճառով փախստական դարձած մարդկանց մի մասը սահմաններ է հատում և ապրում օտար երկրներում անմարդկային պայմաններում: Ոմանք տեղահանվելուց հետո այլևս չեն կարողանում գտնել տուն ու ազատ կյանք: Շատերին հաջողվում է միասնական պահել իրենց ընտանիքները, մինչդեռ մյուսները կորցնում են ծնողներին, ամուսիններին կամ երեխաներին ռազմական հարձակումների, համավարակների և այլ մարդածին կամ բնական աղետների պատճառով: Տեղահանված անձանց և փախստականների մեծ թիվը, անխուսափելիորեն, հանգեցնում է սոցիալական, տնտեսական և քաղաքական բարդությունների այն տարածաշրջաններում, որտեղ նրանք հանգրվանել են: Շատ տեղերում հնաբնակները, որոնք իրենք էլ դժվարությամբ են գոյատևում, առանձնապես չեն ողջունում «նորեկներին»: Քաղաքական գործիչներն ու պաշտոնյաները, ինչպես նաև նրանց հետ կապ ունեցող սոցցանցային ակտիվիստները իրենց ժողովրդականությունը բարձրացնելու նպատակով հաճախ փորձում են բացասական կամ դրական զգացմունքներ հարուցել ներգաղթյալների նկատմամբ՝ կախված հանրության մեծամասնության տրամադրություններից: Լրագրողները կարող են կարևոր դեր ունենալ տեղաբնակների և նորեկների միջև լարվածությունը մեղմելու, այլ ոչ թե սրելու հարցում: Հայաստանյան համատեքստում շատ կարևոր է դիտարկել նաև 2023-ի սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված մոտ 120,000 քաղաքացիների Հայաստան ներմուտքը՝ անդրադառնալով մի կողմից ինտեգրման խնդիրներին, նրանց առջև ծառացած մարտահրավերներին, և մյուս կողմից՝

հնարավորություններին և հաջողության պատմություններին: Անշուշտ, պետք է հատուկ ուշադրություն դարձնել բոլոր ներգաղթյալների խնդիրներին: Օրինակ՝ երկար տարիներ բնակչության էթնիկ կազմի տեսակետից Հայաստանը եղել է միատարր երկիր, բայց աշխարհում տեղի ունեցող զարգացումներն ու իրադարձությունները, այդ թվում նաև պատերազմն Ուկրաինայում, գնային և շուկայական հնարավորությունների փոփոխությունները նպաստել են մեծաթիվ քաղաքացիների ներգաղթին Ռուսաստանից և Հնդկաստանից դեպի Հայաստան:

Ահա մի քանի խորհուրդներ փախստականների, տեղահանվածների և ներգաղթյալների մասին լուսաբանման համար.

- Ուսումնասիրեք, թե ձեր լրատվամիջոցն ինչպես է անդրադարձել փախստականների, տեղահանվածների և ներգաղթյալների խնդիրներին՝ նախկինի հնարավոր բացթողումները շտկելու համար: Օրինակ՝ արդյոք նրանք հայտնվո՞ւմ են միայն հանցագործությունների մասին հոդվածներում: Արդյոք պատրաստվե՞լ են նյութեր այն մասին, թե ինչպես են նրանք փորձում բարելավել իրենց վիճակը կամ սատարել մեկը մյուսին: Եղե՞լ են արդյոք նյութեր, որտեղ քաղաքական գործիչները կամ տեղի բնակիչները գանգատվում են նրանց հետ կապված խնդիրներից՝ առանց վերջիններիս պատասխանելու հնարավորություն տալու:
- Փախստականների, տեղահանվածների և ներգաղթյալների մասին լուրերի զգալի մասն անխուսափելիորեն կենտրոնացած է սոցիալ-տնտեսական հարցերի, այդ թվում նաև հանցագործությունների վրա: Հանցավորությունը, իհարկե, խնդիր է, բայց դրա մասին գրելիս շատ կարևոր է համապատասխան ենթատեքստ ապահովել. ինչպիսի՞ն է գործազրկության վիճակը նրանց շրջանում, ի՞նչ տրամաներ ունեն նրանք, քանի՞ երեխա են կերակրում: Սա չի

նշանակում, որ դուք պարտավորված եք արդարացում գտնել նրանց հանցանքների համար, բայց պետք է փորձեք նկարագրել այն հուսահատ իրականությունը, որում նրանք ստիպված են ապրել:

- Որոշ ժամանակ անցկացրեք նրանց կողմից բնակեցված տարածքներում և զրուցեք հնարավորինս շատ մարդկանց հետ: Պատրաստեք նյութ ձեր տեսածի մասին. ինչպիսի՞ն են պայմանները, ինչպիսի՞ տներում են մարդիկ ապրում, արդյոք օգտվո՞ւմ են հոսող ջրից, արդյոք նրանց երեխաներն ի վիճակի՞ են դպրոց հաճախել, ինչպե՞ս են սնվում:
- Կապ հաստատեք տեղական կամ միջազգային հասարակական կազմակերպությունների հետ, որոնք աշխատում են փախստականների, տեղահանվածների և ներգաղթյալների հետ և ներկայացնում նրանց շահերը: Պարզեք, թե որքանով են օգնում նրանց: Հարցրեք, թե որոնք են ձեր տարածաշրջանում փախստականների, տեղահանվածների և ներգաղթյալների առջև ծառացած հիմնական ընթացիկ խնդիրները: Այդ կազմակերպությունների միջոցով մեկ օր անցկացրեք որևէ ընտանիքի հետ, որպեսզի իրական պատկերացում կազմեք նրանց կյանքի մասին:
- Գտեք մեկ կամ մի քանի փախստականի, տեղահանվածի կամ ներգաղթյալի, որոնք կարողացել են հաղթահարել բոլոր դժվարությունները. ինչպե՞ս են կարողացել աշխատանք, բնակարան կամ սնունդ գտնել, կրթության ինչպիսի՞ հնարավորություններ ունեն նրանց երեխաները: Հարցրեք նրանց, թե ինչպես են հաղթահարել խոչընդոտները, և արդյոք կարո՞ղ են այլ ընտանիքներին որևէ խորհուրդ տալ:
- Գրեք նրանց մասին, ովքեր իրենց նվիրել են նույն իրավիճակում գտնվող այլոց կյանքը բարեփոխելուն: Գուցե որևէ մեկը կրթական նախաձեռնությամբ է հանդես եկել: Եթե այո՝ մեկ օր անցկացրեք նրա հետ և նկարագրեք

նախաձեռնությունը. կա՞ մեկը, որ օգնում է նրանց աշխատանք գտնել, արդյոք որևէ մեկն օգնո՞ւմ է նրանց գտնել պատերազմի քաոսում կամ տեղաշարժերի հետևանքով անհետ կորած իրենց հարազատներին:

- Գրեք այն փախստականների, տեղահանվածների և ներգաղթյալների հոգեբանական և առողջական խնդիրների մասին, որոնք փորձում են ինտեգրվել հասարակությանը: Հարցրեք բժիշկներին, թե նրանցից քանիսն են տառապում հետտրավմատիկ սթրեսային խանգարումով և այլ հուզական խնդիրներով:
- Գրեք նաև նրանց հաջողության պատմությունների մասին՝ ինչպես են անկոտրում շարունակում իրենց կյանքը, գործը, ուսումը նոր միջավայրում:
- Այս ամենից զատ, շփվեք նրանց հետ՝ մարդը մարդու հետ սկզբունքով: Փորձեք հասկանալ անցյալի, ներկայի և ապագայի մասին պատկերացումները, զրուցեք հետաքրքրությունների մասին և անդրադարձեք ցանկացած թեմայի, որն իրենց հետաքրքրում է:

Դեպքերի ուսումնասիրություն

Անկախությունից ի վեր Հայաստանը փախստականների երեք խոշոր ալիք է ընդունել. 1990-ականների սկզբին՝ Ադրբեջանից ներգաղթած մի քանի հարյուր հազար հայերը, այնուհետև 2011-ին՝ Սիրիայում սկսված քաղաքացիական պատերազմի հետևանքով ներգաղթած մի քանի տասնյակ հազար սիրիահայ փախստականները, և 2020 թ. 44-օրյա պատերազմից և հատկապես 2023-ի սեպտեմբերին Արցախում Ադրբեջանի ռազմական գործողությունների հետևանքով տեղի ունեցած էթնիկ զտումից հետո Հայաստանում հանգրվանած քաղաքացիները: Այս բոլոր ալիքների

ժամանակ և՛ պետությունը, և՛ քաղաքացիական հասարակությունը, փոփոխական հաջողություններով, փորձել են աջակցել փախստականներին և/կամ տեղահանված անձանց: Այդուհանդերձ, յուրաքանչյուր դեպքում զգալի խնդիրներ են եղել փախստականների հանդեպ հանրային վերաբերմունքի ձևավորման հարցում: Մեդիան երբեմն ակամա կամ որոշակի ուղղորդված (այդ թվում՝ իշխող քաղաքական շրջանակներից) ձևով փորձել է փախստականներին ներկայացնել որպես սոցիալ-քաղաքական լարվածության աղբյուր: Հետևյալ օրինակներում կներկայացնենք հատկապես ամենաթարմ՝ Արցախի բնակչության բռնի տեղահանությունից հետո ի հայտ եկած մի քանի օրինակներ:

Civic.am-ը հայցում է ընթերցողների, հատկապես արցախցիների ներողամտությունը[24]

2023-ի սեպտեմբերի 19-ին Ադրբեջանը լայնամասշտաբ հարձակում սկսեց Լեռնային Ղարաբաղի վրա, որը երկու օր անց հանգեցրեց դե ֆակտո հանրապետության լուծարմանը և տեղի բնակչության հարկադիր գաղթին: Այս իրադարձությունները բուռն հակակառավարական բողոքի ակցիաներ հարուցեցին Երևանում, որոնց մասնակիցների թվում բազմաթիվ տեղահանվածներ կային: Հակադարձելով բողոքի ցույցերին՝ լրատվության մի քանի միջոցներ, որոնք չեն թաքցնում իրենց կապը գործող իշխանության հետ, սկսեցին ատելության և խտրական խոսք տարածել ցույցերին մասնակցող տեղահանվածների հանդեպ: Մի քանի օր անց նրանք հեռացրին խտրական բովանդակությունը և զղջման տեքստեր հրապարակեցին, որոնցից մեկը ներկայացնում ենք ստորև.

24 https://bit.ly/3XTQa5D

Civic.am-ի հարգելի ընթերցողներ՝ հատկապես արցախցիներ, 2 օր առաջ՝ սեպտեմբերի 21-ին, մեր կայքի ֆեյսբուքյան էջում հրապարակվել են երևանյան ցույցերի ժամանակ մեքենաներ ջարդող ցուցարարների մասին տեսանյութեր, որոնց վերնագրերում շեշտվել է նրանց արցախյան ծագումը:

Ամենևին նպատակ չունենալով հակաարցախյան տրամադրություններ ստեղծել, առավել ևս՝ ատելություն տարածել մեր արցախցի հայրենակիցների հանդեպ, այնուամենայնիվ ընդունել ենք, որ ակամա թիրախավորել ենք այսօր Արցախում ողբերգություն ապրող մեր հայրենակիցներին, ինչի համար խորը ափսոսանք ենք հայտնում և ներողություն ենք խնդրում բոլոր արցախցիներից և մեր մյուս ընթերցողներից:

Ուզում ենք նաև հիշեցնել, որ նույն օրը բոլոր տեսանյութերի վերնագրերից հեռացվել է «ղարաբաղցի» բառը և այդ մասին որևէ գրառում:

Civic.am-ի խմբագրակազմ

Civic.am-ը, Araratnews.am-ը, Medianews.am-ը և մի շարք այլ՝ քաղաքական իշխանության հետ առնչվող ռեսուրսներ բողոքի օրերին հետևյալ վերնագրերով նյութեր էին տարածում համացանցում. «Ղարաբաղցի ուղևորները հերթական մեքենայից իջեցրին ուղևորին և հարձակվեցին վրան», «Պատերազմից խուսափած ղարաբաղցի երիտասարդը հոխորտում է պատերազմին կամավոր մասնակցած քաղաքացու վրա», «Ղարաբաղցի երիտասարդները հարձակվեցին հերթական մեքենայի վրա», «Ղարաբաղցի ջարդարարները շարունակում են հարձակվել մեքենաների վրա»:

Նախ՝ այդ օրերին հազարավոր մարդիկ էին մասնակցում ցույցերին և, ակներևաբար, նրանց մեծ մասը ԼՂ-ից չէին եկել: Համենայնդեպս, հակառակը պնդող որևէ վիճակագրություն չի եղել: Իսկ ձախ սյունակում ներկայացված վերնագրերը տպավորություն են ստեղծում, թե անկարգությունները կազմակերպել են բացառապես տեղահանվածները՝ առանց կրկին դրա մասին փաստական ապացույցներ ներկայացնելու:

Նման դեպքերում, նույնիսկ եթե առերևույթ տվյալներ կան, ապա լրագրողները պետք է ջանան պահպանել անմեղության կանխավարկածը և չսրել լարվածությունը՝ բացասական տրամադրություններ ստեղծելով որևէ խմբի նկատմամբ:
Ուշագրավ է, որ լրատվամիջոցը զղջում է իր գործելաոճի համար և հայտնում է, որ խնդրահարույց վերնագրերը խմբագրվել են կամ հեռացվել: Սակայն դա արվել է հրապարակումներից 2 օր հետո, իսկ ինֆորմացիոն հեղեղի մեր դարում դա մեծ ժամկետ է. խնդրահարույց լուսաբանումը հասցրել է իր ազդեցությունը թողնել:

Առեղծվածային դեպք Դիլիջանում. «Mobile Centre»-ում Արցախի ԱԱԾ-ի աշխատակիցը սպանել է իր քենուն, ապա ինքնասպան եղել[25]

Այս հոդվածը նախորդ գլուխներից ծանոթ երևույթ է պատկերում, երբ քրեական պատմությունը ներկայացնելիս լրատվամիջոցը անհիմն շեշտում է ներգրավված անձանց՝ այս կամ այն խմբի անդամ (տվյալ դեպքում՝ արցախցի) լինելու հանգամանքը:

Հոդվածում նախ ոստիկանության պաշտոնական հաղորդագրության ոճով պատմվում է հանցագործության մասին:

Այսօր՝ ապրիլի 3-ին, առեղծվածային դեպք է տեղի ունեցել Տավուշի մարզում: Ժամը 11:30-ի սահմաններում ՀՀ ՆԳՆ ոստիկանության Տավուշի մարզային վարչությունում և ոստիկանության Դիլիջանի բաժնում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Դիլիջան քաղաքի Մաքսիմ Գորկի 48/5 հասցում կրակոցներ են հնչել և կան տուժած քաղաքացիներ...

Մինչ տեղում աշխատում էին ոստիկանները, «Դիլիջան» բժշկական կենտրոնից ահազանգ է ստացվել ոստիկանության Դիլիջանի բաժին, որ շտապօգնությունը գլխի մասում հրազենային վնասվածքով, մահացած վիճակում իրենց մոտ է տեղափոխել մի կին:

Հանցագործության շարժառիթների մասին ոչինչ չի ասվում, բայց շեշտվում է, որ սպանություն և ինքնասպանություն կատարած անձը Արցախից տեղահանված քաղաքացի է և Արցախի Հանրապետության ԱԱԾ աշխատակից: Արդյոք միջադեպը ուղղակի կապ

Դեպքի մասին ոստիկանության Դիլիջանի բաժնից տեղեկությունը փոխանցել են ՀՀ Քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության Դիլիջանի քննչական բաժին, որտեղից ժամանել է քննչական խումբը՝ մարզային քննչական վարչության պետ Արամ Հարությունյանի, Դիլիջանի քննչական բաժնի պետ Արգամ Ռաֆայելյանի գլխավորությամբ...

25 https://shamshyan.com/hy/article/2024/04/03/1258899

ունե՞ր դրա մասնակիցների ծագման հետ, ո՞րն է արցախցի լինելու հանգամանքը վերնագրում և նյութում շեշտելու անհրաժեշտությունը: Արդյոք դա շեշտելը չի՞ նպաստի, որպեսզի ընթերցողի մոտ լրացուցիչ կարծրատիպեր ձևավորվեն արցախցիների՝ իբր զինված ու վտանգավոր, բռնության հակված մարդիկ լինելու մասին:

Դեպքի փաստով Դիլիջանի քննչական բաժնում «սպանություն» և «ինքնասպանություն» հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ:

Ոստիկանությունն ու քննչական բաժինը պարզում են մահացածների ինքնությունը:

Դեպքի վայրում հավաքված մի քանի քաղաքացիներ, ովքեր հրաժարվեցին տեսախցիկի առաջ խոսել, ասում էին.

«Մահացած կինը «Յունիբանկ»-ի աշխատակից էր, ով այդ պահին գտնվում էր «Mobile Centre»-ում և նա երբ ներսում է եղել, նրա քրոջ ամուսինը, ով Արցախի Հանրապետության քաղաքացի է և Արցախի ԱԱԾ-ի աշխատակից է եղել, մոտեցել է նրան, ու մեղադրել իր ընտանիքը քանդելու մեջ, ապա իր մոտ եղած «Մակարով» տեսակի ատրճանակով կրակել է նրա գլխին, որից հետո ինքնասպան է եղել»:

Գ. Շամշյանի տեղեկություններով՝ մահացած վիճակում հիվանդանոց տեղափոխվածը Տավուշի մարզում հաշվառված, 37-ամյա Մերի Ա.-ն է, իսկ նրան սպանած և ինքնասպան եղած տղամարդը Արցախի Հանրապետության քաղաքացի, 33-ամյա Խաչիկ Ա.-ն է

Այս նյութն ամբողջությամբ վերարտադրում է սոց-ցանցային օգտատիրոջ գրառումը, որում վիճակագրական տվյալներով չամրապնդված դավադրապաշտական թեզեր են առաջ քաշվում՝ ամրապնդելով ներգաղթյալներից սպասվող «սպառնալիքների» մասին կարծրատիպերն ու փաստացի անբարեհաճ վերաբերմունք սերմանելով հնդիկ ներգաղթյալների նկատմամբ:

Հնդիկ «խոպանչիներն» այլևս հայրենիք չեն վերադառնալու. իրենց կանանց և երեխաներին են ՀՀ կանչում. Հեքիմյան[26]

Վերնագրում տրված հղումը, թե ներքևում ասվածը Հեքիմյանի խոսքն է, չի ազատում լրագրողին ու լրատվամիջոցին էթիկական ու լրագրողական պատասխանատվությունից՝ փաստեր ճշտել, հարցեր տալ, բազմակողմանի վերլուծել ...

Որտեղի՞ց է «գրավելու» մասին այս տվյալը:

Այն, որ ցանկացած մեկը իր ֆեյսբուքյան էջում գրառում է անում՝ իր գործն է, բայց լրագրողի գործն է փաստեր գտնել, հերքել կամ հաստատել ինֆորմացիան, ոչ թե արտատպել:

«Քաղաքացու իրավունքների պաշտպան» ՀԿ նախագահ Կարեն Հեքիմյանը ֆեյսբուքյան իր էջում գրել է.

«Գիտեք, որ Հայաստանում շատ հնդիկներ կան, որոնք արդեն «գրավել են» տնտեսության մի շարք ոլորտներ: Չգիտեմ՝ լավ է դա, թե վատ: Խնդիրն այլ է:

Ուրեմն, մինչ օրս Հայաստանում աշխատող հնդիկների զգալի մեծամասնությունը տղամարդիկ էին: Դա նշանակում էր, որ վերջիններս Հայաստան «խոպան էին» եկել, հետևաբար՝ հետ էին վերադառնալու իրենց Հայրենիք:

Այսօր հայաստանյան շատ խոշոր հիմնարկում սեփական աչքերով տեսա աշխատող մեծ թվով հնդիկ կանանց: Դա նշանակում է, որ «խոպանի» դարաշրջանն ավարտվել է, իսկ հնդիկ «խոպանչիներն» այլևս Հայրենիք չեն վերադառնալու, փոխարենն իրենց կանանց և երեխաներին են Հայաստան կանչում:

26 https://oragir.news/hy/material/2024/03/02/108773

Ո՞ր հիմնարկն էր դա, ինչո՞ւ հեղինակը հարկ չի համարում նշել դրա մասին: Ինչո՞վ է պայմանավորված այն հանգամանքը, որ արտագնա աշխատանքը տղամարդ հնդիկների դեպքում խոպան է, իսկ կանանց պարագայում՝ այլ հարց: Այստեղ կա նաև սեռով պայմանավորված խտրական պատկերացում:

Ո՞րն է այս ամբողջ կանխատեսման հիմքը:

Աշխարհի շատ անվտանգ և բարեկեցիկ երկրներում տարատեսակ կրոնական կառույցներ են գործում: Անգամ եթե այս «ազատ ոճի» կանխատեսումն իրականացվի, ի՞նչ վտանգ է այն սպառնում հայաստանցիներին: Ինչո՞ւ է հեղինակը կարծում, որ իր կանխատեսումն իրականանալու պարագայում Հայաստանը կանվանափոխվի: Աշխարհի շատ ու շատ երկրների օրինակը հակառակն է ապացուցում:

Այժմ պատմեմ, թե ինչ է լինելու հետո:

Նախ՝ հնդիկները պետք է տնավորվեն:

Ամեն ընտանիքում մեծ թվով երեխաներ կլինեն, որոնց դպրոց է անհրաժեշտ և ուսուցիչներ, հետևաբար իրենց ընտանիքներով հանդերձ, Հայաստան կժամանեն նաև հնդիկ ուսուցիչները:

Բոլոր այդ մարդկանց անհրաժեշտ կլինի բուժսպասարկում, հետևաբար՝ Հայաստան կժամանեն կամ Բժշկականն ավարտելուց հետո Հայաստանում կմնան հնդիկ բժիշկները: Այդքան ժողովրդին պետք է կերակրել և, ըստ այդմ, կբացվեն հնդկական ծագում ունեցող մթերային խանութներ, գործարաններ, ենթակառուցվածքներ: Թվարկածս կառույցներում ևս կաշխատեն Հնդկաստանից ժամանած մասնագետները: Նրանք կրկին ամուրի չեն լինելու:

Հայաստանյան հնդիկների հոգևոր պահանջները բավարարելու համար Հայաստանում կկառուցվեն հոգևոր կենտրոններ, որտեղ ամբողջ աշխարհից հնդիկների ուխտագնացություն կկազմակերպվի:

Չգիտեմ՝ լա՞վ է դա, թե՞ վատ: Միայն գիտեմ, որ այսպես շարունակվելու դեպքում, տեսանելի ապագայում Հայաստանն ամենաքիչը կանվանափոխվի»:

Այս նյութը, սկսած վերնագրից, վերջացրած բովանդակությամբ, լեցուն է բացասական կարծրատիպերով Հայաստանում համեմատաբար վերջերս նկատելի դարձած էթնիկազգային խմբի՝ հնդիկ ներգաղթյալների նկատմամբ:

Հնդիկների մասնակցությամբ վթարները դարձել են գլխացավանք. ինչպես են նրանք վարորդական վկայական ստանում. ՏԵՍԱՆՅՈՒԹ[27]

Սա խիստ կասկածելի պնդում է: Հայաստանում, մասնավորապես Երևանում, շաբաթական հարյուրավոր վթարներ են տեղի ունենում, որոնց մասնակիցների ճնշող մեծամասնությունը հայաստանցիներ են: Համենայնդեպս, հոդվածում այս պնդումը հաստատող որևէ վիճակագրական տվյալ մեջբերելու փորձ չի արվում:

Ինքնագլուխներով մարդկանց հարվածելու հետևանքով հասցված վնասն անհամեմատելի է ավտոմեքենաներով հասցված վնասի հետ: Առավել ևս, որ ամենևին միայն հնդկաստանցի ներգաղթյալները չէ, որ ինքնագլուխներ և մոպեդներ են վարում: Մինչդեռ, տպավորություն է, որ երթևեկության հիմնական խնդիրը հենց նրանք են ստեղծում:

Ո՞վ է «խորհրդավոր» քաղաքացին, ինչո՞ւ չի բացահայտում իր ինքնությունը, ի՞նչ պատճառ ունի դրա համար: Գուցե ոչ մի քաղաքացի

Վերջին շրջանում Հայաստանում՝ հիմնականում Երևան քաղաքում, վթարների էպիկենտրոնում հնդիկ վարորդներն են: Նրանք մայթերին հիմնականում ինքնագլուխով մարդկանց են հարվածում և վնասում, հաճախ իրենց ճարպիկ վազանցների ժամանակ հայտնվում են մեքենաների դիմաց, ինչի հետևանքով էլ ստեղծվում է վթարային իրավիճակ: Բացի նրանից, որ հնդիկներն ինքնագլուխներով են կաթվածահար անում երթևեկությունը, այժմ էլ նրանք սկսել են տաքսիներ վարել և ակտիվ մասնակցություն ունենալ ճանապարհատրանսպորտային վթարներին:

Օրերս ArmLur.am-ին դիմած քաղաքացին բողոքում էր, որ հնդիկները վարում են տաքսիներ՝ առանց երթևեկության կանոններին տիրապետելու: Նրանք ոչ միայն չեն տիրապետում ճանապարհատրանսպորտային կանոներին, վերջինս էլ դրա հետևանքով ավտովթարները և վթարային իրավիճակները շատանում են: Հավելեց նաև, որ նրանք նույնիսկ օնլայն քարտեզներից չեն կարողանում պատշաճ օգտվել: Նրանք չունենալով նաև վարորդական վկայական՝ զբաղվում են ուղևորափոխադրմամբ, ինչն էլ իր հերթին օրենքի որոշ կետերի խախտում է համարվում:

Երեկ Shamshyan.com-ը Հնդկաստանի քաղաքացու մասնակցությամբ վթար էր արձանագրել: Վթարը տեղի էր ունեցել Սարալանջի փողոցից Ազատության պողոտա ընթանալիս,

27 https://armlur.am/1319712/

էլ չկա՞, և սա լրագրողի մտածած «հնա՞րքն» է՝ հանրային դժգոհության պատրանք ստեղծելու համար:

Նյութի հեղինակի անանուն զրուցակիցը, առանց որևէ շատ թե քիչ հավաստի փաստարկի, պնդում է, թե հնդիկ վարորդները (ըստ ձևակերպման՝ բոլորը, և ոչ թե նրանց որոշակի մասը) առանց վարորդական վկայականի են երթևեկում, ինչը օրենքի խախտում է:
Եթե անգամ այդպես է, ապա հոդվածում որևէ կերպ չեն քննադատվում ՀՀ իրավապահ մարմինները, որոնք առնվազն կիսում են պատասխանատվությունը՝ առանց վարորդական վկայականի կամ այլ խախտումներով երթևեկելու դեպքերը չհայտնաբերելու և չվերացնելու համար:

Նյութում միանգամայն կանխակալ վերաբերմունք է դրսևորվում Հնդկաստանից ներգաղթած վարորդների նկատմամբ:

երբ բախվել են Mercedes և Opel մակնիշի մեքենաները: Ըստ նախնական տեղեկությունների՝ վթարի մեղավորը եղել է Opel-ի վարորդը, ով Հնդկաստանի քաղաքացի է եղել: Նա Ազատության պողոտայով ընթանալիս է եղել դեպի Բաբայան փողոց և դուրս է եկել հանդիպակաց երթևեկելի գոտի և բախվել Mercedes մակնիշի մեքենային: Վթարի արդյունքում տուժել էր անչափահաս երեխա:

ArmLur.am-ը զրուցել է ՀՀ ոստիկանության ՃԼՄ-ների հետ կապի, լրատվության և վերլուծության բաժնի պետ Ձարզանդ Գաբրիելյանի հետ: Նա մեզ հետ զրույցում փոխանցեց, որ Հայաստանում վարորդական վկայական ստանալու համար նախատեսված քննությունը լեզվական առումով ճկուն է, այսինքն՝ հնդիկները, նաև մյուս օտարերկրացիները, շատ հեշտ կարող են քննություն հանձնել:

ArmLur.am-ը դիմել է ՆԳՆ-ին, որ տրամադրեն վիճակագրություն հնդիկների մասնակցությամբ վթարների մասին, որին կանդրադառնանք վիճակագրությունը ստանալուն պես:

Անտեսվում է հայաստանցի կամ այլ ազգերի ներկայացուցիչների մասնակցությամբ կամ մեղավորությամբ վթարների գոյությունը, պետության ոչ բավարար գործողությունների հարցը: Նյութը կարդացողին կթվա, թե Հայաստանում երթևեկության խնդիրների հիմնական «մեղավորը» հնդիկներն են:

Թվում է, թե լրագրողը փորձել է ոստիկանության տեսակետը ներկայացնել: Սակայն սկսած վերնագրից, հոդվածի մեջ հնդկաստանցի ներգաղթյալներին ուղղված մեղադրանքները որևէ կերպ չեն հաստատվում:

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ

Վերջին տասնամյակներին գենդերային ինքնությանը վերաբերող հարցերը Հայաստանում ավելի ու ավելի ակտիվորեն են քննարկվում: Լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանս, քվիր և այլ գենդերային ինքնություններ ունեցող (ԼԳԲՏՔ+) անձինք միություններ են կազմում, կազմակերպում են համագումարներ և փորձում են լսելի դարձնել գեյերի, լեսբիների և բիսեքսուալների, տրանս և համայնքի այլ ներկայացուցիչների խնդիրները: Այդուհանդերձ, բազմաթիվ լրագրողներ և լրատվամիջոցներ դեռևս խիստ բացասական կարծրատիպերով են առաջնորդվում՝ ԼԳԲՏՔ+ անձանց վերաբերվելով որպես արատավոր մարդկանց և հանրության մերժված անդամների, որոնք վտանգ են ներկայացնում հասարակության համար և արժանի չեն ապրումակցման, ըմբռնման ու հավասար իրավունքների:

Ահա մի քանի խորհուրդներ ԼԳԲՏՔ+ համայնքի ներկայացուցիչների մասին հրապարակումների վերաբերյալ.

- Շատ հոդվածներում գենդերային ինքնությանն ու կողմնորոշմանը վերաբերող հարցերի լուսաբանումն ուղեկցվում է նվաստացնող բառերով, ինչպիսիք են «համասեռամոլ», «արվամոլ» և «այլասերված» արտահայտությունները: Յուրաքանչյուր լեզու ունի իր առանձնահատկությունները, բայց հայերենում, օրինակ, «նույնասեռական», «գեյ», «լեսբի» և «երկսեռական» բառերը չեզոք տերմիններ են և չունեն բացասական երանգավորում: Օգտվեք հայերենում առկա նման չեզոք տերմիններից, իսկ դժվարությունների հանդիպելու դեպքում խորհրդակցեք ԼԳԲՏՔ+ անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունների հետ:

- Ուշադրություն դարձրեք բնորոշումներին: Օրինակ՝ «տրանսվիստիտ» և/կամ «տրանսսեքսուալ» հասկացությունները ներկայումս դուրս են եկել կիրառելիությունից և անգամ կարող են վիրավորական լինել: Նախընտրելի է օգտագործել «տրանս» եզրույթը, երբ խոսքը գնում է տրանսգենդեր կամ տրանս անձանց մասին: Կան տրանս կամ տրանսգենդեր անձինք, որոնք կարիք ունեն փոխել իրենց մարմինը հորմոնային թերապիայի ու բժշկական միջամտությունների միջոցով՝ համապատասխանեցնելու այն իրենց զգացածին (ներկայումս կիրառելիությունից դուրս եկած «տրանսսեքսուալ» եզրույթի բնորոշումն է): Սակայն կարևոր է հիշել, որ ոչ բոլոր տրանս անձինք են, որոնք ունեն բժշկական միջամտության կարիք, այլ կատարում են միայն սոցիալական փոփոխություն և համապատասխան նույնականացում: Բոլոր դեպքերում ներկայումս կիրառում ենք տրանս կամ տրանսգենդեր եզրույթը:
- Սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության մասին գրելիս շատ կարևոր է, որպեսզի նախքան ձեր նյութը պատրաստելը զրուցեք ԼԳԲՏՔ+ համայնքի ներկայացուցիչների հետ: Հիշեք, որ այդ մարդիկ, ինչպես բոլորը, ունեն ՀՀ օրենսդրությամբ և միջազգային իրավունքի նորմերով ամրագրված հավասար իրավունքներ, ունեն հույսեր, երազանքներ և հոգսեր: Նրանք էլ, ինչպես բոլորը, ունեն կարիերա, հետաքրքրություններ և ընտանիք: Մի ենթադրեք, թե գիտեք՝ ինչպիսին է նրանց կյանքը, կամ ովքեր են նրանք՝ առանց նրանցից որևէ մեկի հետ այդ մասին զրուցելու: Այս դեպքում կարևոր է նաև իմանալ, որ ոչ բոլոր ԼԳԲՏՔ+ անձինք են տեղյակ գիտական վերջին զարգացումներից կամ ճիշտ տերմինաբանությունից, և միայն ԼԳԲՏՔ+ անձ լինելը չի նշանակում, որ նյութ գրելիս հենց նրանց օգնությամբ կապահովվի դրա զգայունությունն ու ճշգրտությունը: Կարևոր է համատեքստը, և

թե լրագրողին ինչ է անհրաժեշտ: Այս պարագայում նյութի զգայունությունը ստուգելու առումով ճիշտ կլինի դիմել ԼԳԲՏՔ+ համայնքի շահերի պաշտպանությամբ զբաղվող կազմակերպության կամ հատուկ մասնագիտացած անձանց:

- Շատ մարդիկ ընդգծված բացասական վերաբերմունք ունեն ԼԳԲՏՔ+ անձանց նկատմամբ: Այն փաստը, որ որոշ պաշտոնյաներ, քաղաքական գործիչներ, հոգևորականներ կամ ուրիշներ կարող են քաղաքական կամ այլ նկատառումից ելնելով վիրավորական արտահայտություններ գործածել նրանց մասին խոսելիս, ամենևին չի նշանակում, որ դուք, իբրև լրագրող, պետք է ձեր նյութի մեջ ընդգրկեք նման անպատիվ և խտրական արտահայտություններ: Եթե անհրաժեշտ է մեջբերել ուրիշի խոսքը, ապա փորձեք անուղղակի կերպով անել դա՝ խուսափելով վիրավորական բառերի վերարտադրությունից: Եթե որոշեք այդ արտահայտությունները մեջբերել ուղղակիորեն, նկատի ունեցեք, որ ԼԳԲՏՔ+ համայնքի անդամները վիրավորական և զայրացնող են համարում դրանք: Անհրաժեշտ է ԼԳԲՏՔ+ անձանց նկատմամբ ատելություն և անհանդուրժողականություն սերմանող հրապարակումները բացառել, և փոխարենը հասարակությանը մատուցել գրագետ, էթիկական առումով ընդունելի և ԼԳԲՏՔ+ անձանց մարդու իրավունքների նկատմամբ հարգանք սերմանող նյութեր:
- Դուք չպետք է միանշանակ ընդունեք բժիշկ կամ գիտնական ներկայացող մարդկանց կարծիքը, որոնք փորձում են համոզել, թե ԼԳԲՏՔ+ անձ լինել նշանակում է լինել «այլասերված» կամ հոգեկան շեղում ունեցող, կամ էլ այլ նվաստացուցիչ ձևակերպումներ են անում: Եթե որևէ մեկը ձեզ ասի, օրինակ, որ նույնասեռական անձանց 50%-ը մանկապիղծ են, ապա հարցրեք նրանց, թե որտեղից են գտել այդ վիճակագրությունը, պահանջեք ապացույցներ

և հիմնավորումներ: Իրենք իրենց փորձագետ համարող մարդիկ հաճախ օգտագործում են ապատեղեկատվություն կամ խեղաթյուրում են գիտական ուսումնասիրությունների տվյալները՝ ջանալով ազդել հանրային կարծիքի վրա՝ ընդդեմ ԼԳԲՏՔ+ համայնքի: Կարևոր է հիշել, որ միջազգային մասնագիտական ու գիտական հանրույթը ունի հստակ դիրքորոշում առ այն, որ նույնասեռական և երկսեռական սեռական կողմնորոշումը (1992 թ., Առողջապահության համաշխարհային կազմակերպություն (ԱՀԿ)) և տրանսգենդերային ինքնությունը (2022 թ., ԱՀԿ) չեն համարվում հոգեկան խանգարում:

- Թեմայի շուրջ շատ հրապարակումներ հաճախ վերաբերում են հանցագործություններին՝ հատկապես ԼԳԲՏՔ+ մարդկանց վրա կատարված հարձակումներին կամ նրանց սպանություններին: Նմանատիպ հրապարակումները հաճախ փորձում են պատասխանատվությունը վերապահել զոհերին, իբրև թե իրենք են մեղավոր հարձակման ենթարկվելու համար, քանի որ սադրել են իրենց պահվածքով կամ արտաքին տեսքով: Նման դեպքերում կարևոր է հիշել, որ մեղավորները հարձակվողներն են, այլ ոչ թե տուժողները: Հաճախ լրագրողներն ուղղակի միանշանակ փոխանցում են պաշտոնյաների կարծիքը, որոնք ևս կիսում են այն տեսակետը, թե զոհերն ինչ-որ ձևով արժանի էին հարձակման ենթարկվելու:
- Քանի որ մեծամասնությունից տարբերվող գենդերային ինքնություն ունեցող անձինք հաճախ մեկուսացած են հասարակությունից, հնարավոր է՝ դժվար լինի նրանց գտնել կամ գտնելու դեպքում՝ համոզել հարցազրույց տալ: Սկսելու ամենահարմար ձևը նրանց ներկայացնող խմբերի և հասարակական կազմակերպությունների հետ կապվելն է: Զրուցեք կազմակերպությունների հետ նրանց խնդիրների մասին ընդհանուր գաղափար կազմելու համար և նրանց

միջոցով կապ հաստատեք համայնքի մյուս անդամների հետ: Փորձեք նաև զրուցել համայնքի անդամ չհանդիսացող մարդկանց հետ, որոնք կարող են աջակցող դիրքորոշում ունենալ կամ ավելի անկեղծ ու հարգալից մտքեր և կարծիքներ արտահայտել ԼԳԲՏՔ+ անձանց մասին:

- Մի հավատացեք ԼԳԲՏՔ+ անձանց մասին ձեր լսած բոլոր կարծրատիպերին և միֆերին: Իրականում, գենդերային դերերն առավել բազմազան են: Ճշմարիտ չէ նաև, որ իբրև թե բոլոր նույնասեռական կամ տրանս անձինք արտիստիկ են, որ իբր բոլոր լեսբի կանայք ատում են տղամարդկանց, կամ հակառակը՝ ցանկանում տղամարդ լինել, և որ տղամարդիկ, որոնք կանանց պես են հագնվում, ինքնըստինքյան նույնասեռական են և այլն:

Դեպքերի ուսումնասիրություն

Այս նյութը թիրախավորում է հայաստանյան հասարակության մեջ խոցելի խմբի՝ լեսբիներին՝ չճշտված տեղեկությունների հիման վրա նրանց վերագրելով «զարհուրելի» հանցագործություն: Թեև բուն նյութում չի հաստատվում ոչ հանցանքի փաստը, ոչ դրա կատարման դրդապատճառը, փոխարենն արդեն վերնագրում «նշանակվել են» մեղավորները:

Զարհուրելի դեպք Բրյուսովում. լսարանում լեսբուհիները ծեծել են ուսանողուհու[28]

Ո՞րն է այս տեղեկության աղբյուրը:

Երեկ զարհուրելի դեպք է տեղի ունեցել Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարանում: Երկրորդ կուրսի

[28] https://hraparak.am/post/5bcf1931e1ed0206a48cf8af

Նյութի վերնագրում և նյութում հանդիպում ենք «լեսբուհի» տերմինի կիրառմանը, որը վաղուց դուրս է եկել գործածությունից:

Հոդվածում առկա է նաև անհեթեթ և անավարտ նախադասություն («Ունենք ահազանգ, որ Բրյուսովի անվան համալսարան:), ինչը ցույց է տալիս, որ թե՛ լրագրողը, թե՛ լրատվամիջոցը բարեխղճորեն չեն աշխատում իրենց նյութի վրա:

Այստեղ թվում է, թե ոստիկանությունը հաստատում է լրագրողի տեղեկությունը: Սակայն ոստիկանության ներկայացուցչի կարճ պատասխանը (որը նաև գուցե պատահական անուշադրության բերումով կիսատ է ներկայացված) որևէ տեղեկություն չի տալիս ենթադրյալ հանցանքի հանգամանքների, առավել ևս՝ լեսբի անձի մասնակցության մասին:

ուսանողուհիներից մեկին ծեծի են ենթարկել դիմակավորված անձինք: Ականատեսներ չեն եղել: Դիմակավորների մուտքը բուհի տարածք ոչ ոք չի նկատել: Իր նկատմամբ իրականացված բռնության մասին պատմել է ուսանողուհի Լ.-ն: Դեպքի մասին մեզ տեղեկացրին Լ.-ի համակուրսեցիները: Նրանք պատմեցին, որ աղջիկը մոտ մեկ ամիս շարունակ ընկերներին պատմել է, թե անհայտ անձից սպառնալից նամակներ է ստանում սոցցանցով՝ տարբեր անանուն էջերից, իսկ երեկ հերթական նամակն է ստացել, որում գրված է եղել մոտավորապես հետևյալը. «Եթե ուզում ես իմանալ, թե ով էր քեզ էսքան ժամանակ գրում, արի հինգերորդ հարկի լսարան»:

Նա պատմել է, որ բարձրացել է վերև և դատարկ լսարանում տեսել դիմակավորված անձանց, որոնք էլ դաժան հաշվեհարդար են տեսել աղջկա հետ: Նրա թևին գրել են անգլերեն «die», ինչը նշանակում է՝ «մահացիր»: Լ.-ն ցույց է տվել այդ գրությունն իր ընկերներին, նաև նամակները, որոնք ստացել է անհայտ անձից: Ուսանողները մեզ տեղեկացրին, որ աղջկան տեղափոխել են հիվանդանոց:

Ոստիկանությունը հաստատեց ծեծի վերաբերյալ տեղեկությունը: «Ունենք ահազանգ, որ Բրյուսովի անվան համալսարան: Ներկայումս նա ոստիկանության Կենտրոնի բաժնում է, նրա հետ աշխատում են»,- մեզ հայտնեցին ՀՀ ոստիկանության հասարակության հետ կապերի և լրատվության բաժնից: Մեր տեղեկություններով, հիվանդանոցում աղջկա մոտ ինչ-որ վնասվածքներ են հայտնաբերել և արձանագրել: Սակայն նա չի մնացել հիվանդանոցում, գնացել է ոստիկանություն, որտեղ սկզբում տարօրինակ վարք է ցուցաբերել՝ ասել է, որ ոչինչ չի հիշում: Համալսարանի ներկայացուցիչն

Անգամ լրագրողի անանուն աղբյուրը վստահ պնդում չի անում, որ ենթադրյալ հանցանք կատարողը լեսբի է եղել: Այնինչ, ինչպես հիշում ենք, վերնագրում միանշանակ պնդում է արվում, թե լեսբուհիները ուսանողուհու են ծեծել:

ուղեկցել է ուսանողուհուն հիվանդանոց և ոստիկանություն:

Լ.-ի համակուրսեցիներից պարզեցինք, որ նա պարբերաբար հայտնել է ինչ-որ անձից ստացված սիրային նամակների մասին: Նամակագրի սեռն անգամ նրան պարզ չի եղել: «Անանուն մեկը սիրո խոստովանություն է իրեն արել: Հնարավոր է, որ նամակներ գրողն աղջիկ էր՝ սեռական որոշակի կողմնորոշում ունեցող»,- ասաց Լ.-ի ընկերներից մեկը: Որոշ նամակներում գրված է եղել. «Չեն կարող ինձ բռնել», կամ՝ «Ում ուզում ես, ասա, ես չեմ վախենում»: Աղջիկը վերջերս նույնիսկ դիմել է ոստիկանություն, անվտանգության մարմիններ: Սակայն իրավապահներին չի հաջողվել պարզել, թե որ դոմենից են եկել հաղորդագրությունները:

Ավելի ուշ տեղեկացանք, որ Լ.-ի ընկերուհին երեկ նույնպես սպառնալից նամակ է ստացել, որում գրված է եղել. «Հաջորդը դու ես»: Ք.-ն ևս ոստիկանություն է գնացել և բացատրություն տվել որպես Լ.-ի ընկերուհի: Ք.-ն նույնպես, ըստ որոշ տվյալների, սիրային նամակներ է ստացել և մերժել է նամակագրին: Չի բացառվում, որ երկու աղջիկներից բացի, այլ աղջիկներ ևս սպառնալիքներ ստացած լինեն: Լ.-ի ընկերները կասկածում են, որ ուսանողուհուն ծեծողները լեսբուհիներ են եղել:

Բուհի ռեկտորը բավական հանգամանալից մեկնաբանում է միջադեպի մասին տեղեկությունը, սակայն կրկին ոչ մի լեսբուհու մասնակցության մասին չի հիշատակում:
Այստեղ արդեն հոդվածի՝ մինչ այս եղած ամբողջ շարադրանքին հակասող տեղեկատվություն է տարածվում, սակայն դա ևս չի խանգարել լրագրողին, միանշանակ, հաստատական

Դեպքի կապակցությամբ զրուցեցինք Բրյուսովի անվան համալսարանի ռեկտոր Կարինե Հարությունյանի հետ: «Միակ բանը, որ գիտենք, այն է, որ նրան երկար ժամանակ տարբեր հեռախոսահամարներից սպառնալից հաղորդագրություններ են գնացել: Ծնողները ժամանակին դիմել են ոստիկանություն և ԱԱԾ, որ պարզեն, թե ով է ուղարկում դրանք, բայց մինչև այս դեպքը

վերնագիր ընտրել: Եթե հանցանքն այնուամենայնիվ եղել է, և ինչ-ինչ մարդիկ փորձում են թաքցնել այն, ինչո՞ւ լրագրողը չի փորձել պարզել եղելությունը, լրացուցիչ տեղեկատվություն հավաքել պաշտոնական աղբյուրներից կամ համալսարանից: Գուցե իսկապե՞ս ոչ մի հանցանք չի եղել: Կամ հակառակը՝ գուցե այն եղել է, և ենթադրյալ զոհին դեռ վտանգ է սպառնում:

Հետգրությունը, որն ավելացվել է հրապարակումից հետո, փորձում է ինչ-որ բացատրություն տալ և մեղմել լեսբիներին թիրախավորելու մասին տպավորությունը, սակայն էլ ավելի է խճճում իրավիճակը:
Եթե, ըստ հետգրության, «չի բացառվում», որ ենթադրյալ հանցանքը «առնվազն մեկ» լեսբի է կատարել, ապա վերնագիրն արդարացված չէ մի քանի պատճառներով: Նախ՝ նյութում այդպես էլ բավարար փաստարկներով չի հաստատվում բուն ծեծի փաստը: Բացի դրանից՝ վերնագրում պնդում է արվում, որ ծեծել են «լեսբուհիՆԵՐԸ», այնինչ, նյութում ենթադրյալ հանցագործների հոգնակի լինելն էլ է կասկածի տակ դրվում: Եվ վերջապես, հասկանալի չէ, թե ինչու է շեշտվում ենթադրյալ

չեն պարզել: Դեպքից անմիջապես հետո ես զրուցեցի նրա հետ՝ մեր բուժկետում, որտեղ նրան առաջին օգնությունն են ցուցաբերել: Նա ասաց, որ առավոտյան նրան հաղորդագրություն է եղել, որ եթե ուզում ես իմանալ, թե ով է ուղարկում քեզ նամակները, բարձրացիր 5-րդ հարկի լսարան: Մենք հրավիրեցինք շտապօգնություն: Աղջիկը հուզված, սթրեսային վիճակում էր: Նա հարված էր ստացել որովայնի շրջանում և գլխացավ ուներ: Բժիշկները որոշեցին նրան տեղափոխել հիվանդանոց, որ հանգստացնող դեղամիջոցներ տան, նաև՝ հետազոտման նպատակով»,- ասաց ռեկտորը: Ք.-ի՝ հաղորդագրություն ստանալու մասին ռեկտորը չգիտեր: Ըստ Կարինե Հարությունյանի, Ք.-ն չի հայտնել, որ իրեն ևս սպառնացել են:

Օրվա վերջում կատարվածի վերաբերյալ մի նոր վարկած մեզ հասավ ոստիկանական աղբյուրից: Ըստ դրա՝ Լ.-ն ոստիկանության բաժնում խոստովանել է, որ հորինել է ծեծի պատմությունը, իսկ նրա ծնողները հայտնել են, որ աղջիկը հոգեբանական վատ վիճակի մեջ է և խնդիրներ է ունեցել: Այսօր ոստիկանությունը պատրաստվում է հաղորդագրություն տարածել, որ Բրյուսովի համալսարանում ուսանողուհու ծեծ չի եղել:

ՀԳ. Սույն հրապարակումը մեր կայքում տեղադրելուց հետո սոցցանցերում մեղադրանքներ հնչեցին լեսբուհիների իրավունքները խախտելու մեջ, մինչդեռ, եթե կատարվել է հանցագործություն, ինչը միանգամայն հնարավոր է, դեպքն ընկալելու համար կարևոր է տեղեկացնել դրա հնարավոր

հանցագործի սեռական կողմնորոշումը՝ չէ՞ որ հարյուրավոր տարատեսակ հանցանքներ են տեղի ունենում, որոնցում մեղավորները հետերոսեքսուալներ են, և ամենևին ոչ բոլոր դեպքերում է նշվում ենթադրյալ հանցագործի սեռական կողմնորոշումը:

դրդապատճառի մասին: Չի բացառվում, որ կատարվածի պատճառը մերժված սիրային առաջարկներն են եղել, իսկ կատարողները կամ նրանցից առնվազն մեկը, ըստ բուհի ուսանողների, աղջիկ է:

Կուբացի գոմիկներին հատուկ են գործուղել Հայաստան[29]

Այս հոդվածը լեցուն է ԼԳԲՏՔ+ համայնքի ներկայացուցիչների նկատմամբ ատելության ու խտրական խոսքով, նրանց ապամարդկայնացնելու, հանցանքներ ու հիվանդություններ վերագրելու կարծրատիպերով: Ընդ որում, դա արվում է քաղաքական պայքարի համատեքստում՝ օգտագործելով ԼԳԲՏՔ+ համայնքի դեմ կանխատրամադրվածությունը՝ գործող իշխանությանը վարկաբեկելու համար, ինչը լրագրողի համար կրկնակի անընդունելի է:

Այս տարի Կուբայից Հայաստանի միգրացիոն ծառայություն ապաստանի խնդրանքով դիմել է 19 քաղաքացի: Այս մասին Analitik.am-ին տեղեկացրել է Միգրացիոն ծառայության ղեկավարի մամուլի պատասխանատու Նելլի Դավթյանը: Նա նաև ակնարկել է, որ իրականում այդ թիվն ավելի մեծ կարող է լինել: Այսինքն, Հայաստան գալիս են միգրանտների տարբեր հոսքեր, սակայն Միգրացիոն ծառայության իրավասությունների շրջանակներում են ապաստան հայցողները: Մնացած հոսքերը վերապահված են

29 https://iravunk.com/?p=96316&l=am

Այստեղ և այնուհետև հոդվածում բազմիցս օգտագործվում է նույնասեռականներին նշող վիրավորական «գոմիկ» բառը:

Ինչի՞ց է լրագրողը եզրակացրել, որ Կուբայից ներգաղթողները նույնասեռականներ կամ տրանսգենդեր անձինք են:

Լրագրողն այստեղ մեջբերում է ոչ պաշտոնական տվյալ, որի իսկությունը չի փորձում որևէ կերպ ստուգել:

Ի՞նչ է նշանակում՝ «անցել են մասնագիտական ծառայությունների մատուցման»: Եթե նկատի ունի վճարովի սեքս աշխատանք (որը արգելված է ՀՀ օրենսդրությամբ), ապա պետք է նշել դրա մասին: Եթե ոչ, ապա պետք չէ սեռական կամ գենդերային ինքնությունը նույնացնել սեքս աշխատանքով զբաղվելու հետ:

ոստիկանության Անձնագրային վարչությանը: Դա պարզ ակնարկ է, որ կարող են գոմիկական ավելի մեծ հոսքեր եղած լինել, որոնց մի մասը պարզապես դեռ հարկ չեն համարել դիմել միգրացիոն ծառայություններին:

Նկատենք նաև, որ գոնե ապաստան հայցողներին Միգրացիոն ծառայությունը պետք է որ ինչ-որ կերպ վերահսկեր: Բայց ահա պարզվում է, որ մասնավորապես Կուբայից ժամանածների հետ կապված ծառայությունում ընդամենը տեղյակ են, որ նրանք Հայաստանում են: Իսկ թե կոնկրետ որտեղ և ինչով են զբաղված, հազիվ թե դա որևէ պատկան պաշտոնյայի հետաքրքրի: Դրանք դեռ ապաստանի համար դիմածները: Իսկ չդիմածների մասով անգամ Հայաստանում գտնվելու փաստը որևէ պաշտոնական ատյանի հայտնի չէ:

Այսպիսով, ինչ է կատարվում: Հիշեցնենք, որ ավելի վաղ ՎԵՏՕ հասարակական-քաղաքական շարժման ղեկավար Նարեկ Մալյանն իր ՖԲ էջում հրապարակում էր կատարել՝ նշելով, որ Կուբայից ժամանել են թվով 14 տրանսգենդերներ, որոնք ՁԻԱՀ վարակակիրներ են: Ապա համացանցում սկսեց շրջանառվել տեսագրությունը, որ ենթադրաբար այդ նույն կուբայական «գաստրոլյորները» Հայաստանում արդեն անցել են «մասնագիտական ծառայությունների մատուցման»: Ընդ որում, ոչ թե թաքուն, մեկուսի վայրերում, այլ հենց մայրաքաղաքի և երկրի ամենակենտրոնական հատվածում՝ կառավարության շենքի պատերի տակ, այսինքն՝ առանց որևէ վախի կամ մտահոգության:

Խնդրի հետ կապված «Iravunk.com»-ն էլ իր հերթին տեղեկացրեց (https://iravunk.com/news/95964), որ Կուբայից եկած տրանսվիստիտները մեր երկրում ոչ միայն իրենց շատ

լավ են զգում, հասցրել են անցնել իրենց 'աշխատանքին', այլ նաև, որ, որպես «էկզոտիկ ապրանք», ունեն պահանջարկ: Նաև, որ այդ, «իմպրտնի» գոմիկների «ծառայությունները» տեղականներից էժան են՝ 5000 դրամ, և դրանք տեղական գոմիկներից կլիենտ են փախցնում, ինչով խսիտ ջղայնացնում են տեղականներին: Բացի այդ, որ կուբացիները փորձել են Հայաստանից տեղափոխվել Մոսկվա, սակայն Մոսկվայի օդանավակայանից նրանց թույլ չտվեցին երկիր ներթափանցել և հետ ուղարկեցին Երևան: Ի դեպ, նույն կերպ վարվեց նաև Վրաստանը: Ընդ որում, Մոսկվայից վռնդվելուց հետո օտարերկրյա գոմիկները կտրուկ ակտիվացել են՝դիմելով նաև պաշտոնական կարգավիճակի համար: Նաև հաշվի առնելով, որ իրավապահները ոչ միայն գոնե «թարս աչքով» չեն նայում «գաստրոլյորներին», կարծես թե ունեն այլ հանձնարարություն՝ ամեն կերպ նրանց պաշտպանել: Իսկ դա տարօրինակ է նրանով, որ կուբացիները խփում են տեղական գոմիկների բիզնեսին, մինչդեռ մինչ այս հանց տեղականներն էին մեր իրավապահների «աչքի լույսը»: Այն աստիճան, որ կարող էին մտնել ոստիկանական բաժին և ծեծուջարդ սարքել: Եվ հիմա ինչպե՞ս ստեցվեց, որ տեղական «աչքի լույսերի» մրցակից «գոստրոյլորներն» ավելի խորը մտան մեր իրավապահների «աչքը»...

Բացի օգտագործված նսեմացուցիչ բառապաշարից, խնդրահարույց է նաև մեջբերված տվյալների աղբյուրը: Որտեղի՞ց նման տեղեկություն:

Եթե լրագրողը տեղեկություն ունի, որ այդ մարդկանց վերաբերյալ ոստիկանությունը հատուկ հանձնարարություն ունի, ինչո՞ւ չի փորձել ոստիկանությունից պարզաբանում ստանալ:

Եվ ահա, վերջին հարցի հետ կապված նոր տեղեկատվություն ստացվեց: Եթե մինչ այդ ենթադրելի էր, որ ինչքան էլ «իմպրտնի» գոմիկներն այստեղ իրենց ապահով են զգում, բայց մեկ է, տեղականները նրանց համարում են մրցակից, և կոնֆլիկտ է հասունանում: Բայց ահա, ըստ նշված տեղեկատվության, անգամ «գոմիկապաշտպան» հայտնի հ/կ-ներն են փորձում այդ հակասությունը մարել: Ըստ աղբյուրի,

թեև ի սկզբանե տեղական «գոմիկապաշտպան» որոշ Հ/Կ-ները ևս եկել են այն եզրակացության, որ կուբացի «գաստրոլյորների» շուրջ աղմուկը նրանց ոչ թե կվնասի, այլ մի բան էլ դա կդառնա նրանց համար ձրի գովազդ, եթե, իհարկե, իրավապահները ստիպված տեղներից չշարժվեն: Եվ քանի որ այն տպավորությունն է, որ նման միտք անգամ չունեն, «գոմիկապաշտպաններն» էլ եկել են այն համոզմունքին, որ կուբացիները դառնալու են շատ ծանր մրցակիցներ: Սակայն խնդիրը միայն նրանք չեն: Պարզապես, եթե նրանք տեղավորվեն ու սկսեն «ծաղկել», դա կդառնա ազդանշան, որ ոչ միայն կուբաներից, այլ նաև տարբեր այլ երկրներից միգրանտների անվան տակ գոմիկների և տարաբնույթ նման այլ երևույթների հոսքը դեպի Հայաստան կտրուկ ավելանա: Այնպես, ինչպես եղավ հնդիկների պարագայում. սկզբից տասնյակներով, ապա հարյուրներով և հազարներով սկսեցին լցվել Հայաստան:

Այստեղ ԼԳԲՏՔ+ համայնքի հանդեպ խտրական խոսքը զուգակցվում է էթնիկ փոքրամասնության՝ հնդիկ ներգաղթյալների և քաղաքացիական հասարակության (սորոսատեսք) հանդեպ խտրական խոսքի հետ:

Բայց նաև, ըստ աղբյուրի, դիմադրության պատրաստվող տեղական «գոմիկապաշտպանները» ստացել են խիստ հրահանգ, որ անկախ մրցակցությունից, ոչ միայն չնեղացնեն, այլ մի բան էլ՝ իրենց հովանու տակ առնեն այս և դեռ սպասվող «գաստրոլյորներին»: Թե ինչու և որտեղից են գալիս նման ազդակները, դժվար չէ կռահել: Այն, որ Հայաստանը կամաց-կամաց ողողող տարբեր տեսք ունեցող միգրանտների թիկունքին կանգնած են այն նույն սորոսատեսք ուլտրալիբերալ ուժերը, որոնք նաև Եվրոպան են ողողում միգրանտներով, դժվար չէ կռահել: Հայաստան, հասկանալի է, բավական դժվար կլիներ լցնել իսլամական միգրանտներով. աղմուկը շատ մեծ կլիներ: Իսկ ահա հնդիկներով հայաստանցիների «աչքը» միգրանտներին սվորեցնելն անհամեմատ ավելի իրատեսական էր: Այդ հոսքերը հունի մեջ դնելով, ըստ նույն

Հաջորդիվ ոչ մի փաստական տվյալի վրա չհիմնված դավադրապաշտական տեսություններ են շարադրվում՝ հեղեղված տարբեր խմբերի նկատմամբ ատելության խոսքով:

աղբյուրի, տրվել է երկրորդ փուլի մեկնարկը. կամաց-կամաց դեպի Հայաստան ուղղել, այսպես ասած, «թափոնային» կառուցվածքի միգրացիոն հոսքերը, անգամ այնպիսիների, որոնց նույնիսկ «դեմոկրատական» տեսանկյունից շատ բան տեսած Վրաստանում դժվար է տեղավորելը: Ու եթե հաջողվի գոնե մասամբ նման «գաստրոլյորներին» տալ ապաստան ստացածների տեսք ու ՀՀ անձնագիր, ապա հնարավոր կլինի դրանց ապագայում ուղղել դեպի Ռուսաստան՝ օգտագործելով հայաստանյան այդքան հարմար խողովակը:Նախնական փորձը ձախողվեց. «իմպորտնիները» Հայաստանում որևէ կարգավիճակ չունեին: Բայց եթե «օծվեն» հայաստանյան անձնագրով, ակա կարող են ՌԴ մտնելու շանսեր ունենալ: Իսկ եթե դրանից հետո անգամ ռուսները սահմանից վռնդեն, էլի հոգս չէ. այս անգամ կարելի է այլ աղմուկ սարքել, թե այսպես էլ Եվրասիական միությո՞ւն, որ ռուսները ՀՀ անձնագիր ունեցողներին իրենց տարածք չեն թողնում:

Կարճ ասած, խոսքը մեծ ու հեռուն տանող ծրագրերի մասին է, և այս տեսանկյունից արդեն չպետք է զարմանալ, որ կուբացիներն իրենց այդքան լավ են զգում հայաստանյան կառավարության շենքի պատերի տակ: Բայց ասել, թե ռուսներն այդքան միամիտ են, որ այդ ողջ «թափոնը», թեկուզև եվրասիական սոուսով, կթողնեն իրենց երկիր, սխալ կլինի: Արդյունքում, որ այդ հոսքերը հիմնականում Հայաստանում էլ կմնան, երկիրն էլ ավելի վերածելով «համաշխարհային աղբանոցի», էս գլխից էլ ենթադրելի է:

Հետևյալ նյութը ներկայացնում է ընտանեկան բռնության կանխարգելման մասին օրենքում[30] փոփոխությունների վերաբերյալ միայն մեկ մարդու տեսակետը՝ առանց մյուս կողմերի՝ օրինագծի հեղինակների, իրավապաշտպանների, ընտանեկան բռնության հետ առնչվող հասարակական կազմակերպությունների և այլոց տեսակետը ներկայացնելու: Ընդ որում, հոդվածում զգալի տեղ է տրվում օրինագծի անցկացման հարցում «ԼԳԲՏ ակտիվիստների» մասնակցությանը, ինչը, սակայն, որևէ կերպ չի փաստարկվում:

Կանխել բռնությո՞ւնը, թե՞ քանդել ընտանիքը. մասնագետը բացահայտում է նոր օրենքի վտանգները[31]

ԵՐԵՎԱՆ, 13 ապրիլի – Sputnik. Ընտանեկան բռնության մասին օրենքում կատարված վերջին փոփոխությունների նպատակը ոչ թե բռնությունը կանխարգելելն է, այլ ընտանիք քանդելը: Sputnik Արմենիայի հետ զրույցում այս մասին ասել է Փաստաբանների պալատի նախկին նախագահ Արա Ջոհրաբյանը՝ մեկնաբանելով ԱԺ–ում օրերս ընդունված աղմկահարույց օրենքի նախագիծը:

Ինչո՞ւ լրագրողը չի փորձել ստուգել այս պնդման իսկությունը: Եթե իսկապես «ԼԳԲՏ ակտիվիստները», ինչպես նշված է հոդվածում, լոբբինգ են արել, ապա դրա հետ կապված որոշ տվյալներ պետք է լինեն: Սա

«Այս օրինագծի լոբբիստները հիմնականում ԼԳԲՏ ակտիվիստներն էին: Եվ պարադոքսալ հարց է ծագում՝եթե դուք ընտանքին դեմ էիք, ինչո՞ւ եք հիմա ուզում պաշտպանել ընտանիքը»,– ասում է Ջոհրաբյանը՝ արձանագրելով, որ նոր ընդունված օրենքից հանվել է 2017թ–ին

30 «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենք – https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=118672

31 https://arm.sputniknews.ru/20240413/kankhel-brnutjuny-te-qandel-yntaniqy-masnagety-bacahajtum-e-nvor-orenqi-vtangnery-74523651.html

ներմուծված հաշտեցման մեխանիզմը, որով ընտանեկան բռնություն վերապրած ընտանիքի անդամներին հաշտության, վերամիավորման ու քրեական պատասխանատվությունից խուսափելու հնարավորություն էր տրվում:

«Որովհետև ի սկզբանե այս օրենքն այդ նպատակով չէր ընդունվում: Նախ ասեմ, որ ես դեմ եմ ցանկացած տեսակի բռնության ու կողմ եմ բռնություններին հակադրվելու՝ պետության ողջամիտ ջանքերին: Բայց սա բռնություն կանխարգելել չէ, սա ընտանիքի ինստիտուտը քանդել է»,–ասել է Զոհրաբյանը:

Նշենք, որ նախագծի քննարկումը բուռն բանավեճերի ու քննադատությունների տեղիք էր տվել ինչպես ՀՀ Ազգային ժողովում, այնպես էլ հանրային տարբեր հարթակներում:

Արա Զոհրաբյանը փաստում է՝օրենքում «ընտանեկան բռնությանը» զուգահեռ կա նաև «կենցաղային բռնություն» հասկացությունը, բայց չի տրվում «կենցաղային» բառի հստակ նկարագրությունը, ինչը, նրա համոզմամբ, օրենքի կիրարկման ընթացքում տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք է տալու: Օրենքում ամրագրվում է նաև «զուգընկեր» տերմինը: Օրենքի հեղինակների մեկնաբանմամբ՝ դրանք այն անձինք են, որոնց միջև առկա է սիրային կապ՝անկախ համատեղ ապրել–չապրելու հանգամանքից:

«Այս իշխանությունն ի վերջո հասավ իր երազանքին ու «զուգընկեր» բառը ներմուծեց օրենքի դաշտ: Ի դեպ, գործող օրենքն այդ հարցը լուծել էր. ասվում էր, որ ամուսիններ ասելով՝ նկատի է առնվում նաև փաստացի ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող անձանց: Բայց այստեղ ակնհայտ է, որ «զուգընկեր» բառը դրել են ԼԳԲՏ անձանց այդ հասկացության

փաստահե՞ն տվյալ է, թե՞ դավադրապաշտական տեսություն, որը հիմնված է կարծրատիպերի վրա. 1) իբր «քանի որ ընտանեկան բռնության կանխարգելման օրենքը քայքայում է ընտանիքը, իսկ 2) ԼԳԲՏ մարդիկ դեմ են ընտանիքին, ապա ԼԳԲՏ մարդիկ կողմ են «քայքայիչ» օրենքին:

Զրուցակցի այս մի պնդումն էլ քննության չի առնվում՝ ինչո՞ւ է «զուգընկեր» հասկացությունը նույնացվում ԼԳԲՏ-ի հետ:
Ինչո՞ւ չեն կարող ԼԳԲՏՔ+ անձինք ընտանիքներ կազմել: Հոդվածի հեղինակը ուղղակի վերարտադրում է զրուցակցի խոսքերը՝ առանց ճշտող հարցեր տալու և առանց փորձելու ներկայացնել, որ դրանցում խտրականություն կա խմբի հանդեպ:

մեջ ներառելու նպատակով: Մեր մտահոգությունն այն է, որ ԼԳԲՏ անձանց միությունը փորձելու են հավասարեցնել «ընտանիք» հասկացությանը»,– ասել է նա: Փաստաբանների պալատի նախկին նախագահը ենթադրում է, որ հաջորդ քայլով իշխանությունը վավերացնելու է տարիներ շարունակ հետաձգված ու բուռն քննադատության արժանացած Ստամբուլյան կոնվենցիան, ապա նաև «երեխաների որդեգրման» կոնվենցիան, որով ԼԳԲՏ անձանց իրավունք է տրվում երեխա որդեգրելու: Այս կոնվենցիան Հայաստանը ստորագրել է 2008թ.-ին ու մինչ օրս չի վավերացրել:

Հոդվածի հեղինակը, առանց խմբագրման և լրացուցիչ պարզաբանման, ուղղակի մեջբերում է զրուցակցի խոսքը, որտեղ վերջինս ԼԳԲՏՔ+ համայնքին պատկանելությունը համարում է այլասերություն:

«Եթե այս իշխանությանը հաջողվի այս ամենն իրագործել, մենք գնալու ենք այս այլասերված նորմերի միջազգային կոնվենցիաները ճանաչելու ճանապարհով և կոտրելու ենք մեր ընտանիքի ավանդական հասկացությունը»,– արձանագրում է Ջոհրաբյանը:

Նշենք, որ ԱԺ–ում օրենքի փոփոխությունների նախագծի քննարկման օրերին Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի իրավախորհրդատվական հանձնախումբը հանդես էր եկել հայտարարությամբ, որով թեև ողջունել էր յուրաքանչյուր նախաձեռնություն, այդ թվում և իրավական փաստաթուղթ, որը կոչված է բացառելու բռնությունն ինչպես ընտանիքում, այնպես էլ սոցիալական որևէ այլ միջավայրում, բայց և մտահոգություն էր հայտնել նախագծում տեղ գտած որոշ ձևակերպումների վերաբերյալ՝ դրանք համարելով խիստ անընդունելի: Մայր աթոռն առավել քան մտահոգիչ է համարել նախագծում «զուգընկեր» հասկացության ներառումը:

Արա Ջոհրաբյանը հիշեցնում է, որ ժամանակին Մայր աթոռը հստակ կեցվածք էր դրսևորել նաև Ստամբուլյան կոնվենցիայի ընդունման առիթով:

Իրավաբանը նաև շեշտում է, որ ՀՀ գործող Սահմանադրությունը ևս ընտանիքը համարում է հասարակության բնական բջիջ՝ կիրառելով հենց «բնական» բառը: Այս համատեքստում Ջոհրաբյանը չի բացառում, որ իշխանության քայլերի հաջորդականությունը կարող է հանգեցնել նաև Սահմանադրության այդ դրույթի փոփոխությանը:

Հաջորդ օրինակի դեպքում, թերևս, կարելի էր ակնկալել, որ լրատվամիջոցը, բացի մեկ անձի ֆեյսբուքյան գրառումից, փորձել է հավելյալ տեղեկություններ հավաքել ողբերգական դեպքի մասին՝ քննելով դրա սոցիալական ակունքները: Դա գուցե լրատվամիջոցի առաջնահերթությունների կամ ռեսուրսների սղության հարց է: Թեև թե՛ լուրի վերնագիրը, թե՛ ուղեկցող լուսանկարը, թե՛ տեքստն ինքնին միանգամայն կոռեկտ են և համապատասխանում են զգայուն թեմաների պատշաճ լուսաբանման համընդհանուր պատկերացումներին, այդուհանդերձ, այս լուրը «Ֆեյսբուքում» տեղադրելով՝ լրատվամիջոցը թույլ էր տվել, որպեսզի իր հարթակում հայուրավոր մեկնաբանություններ հայտնվեն, որոնք օրեր շարունակ ատելություն, խտրականություն և անգամ բռնության կոչեր էին տարածում ԼԳԲՏՔ+ համայնքի նկատմամբ:

Ներկա ժամանակաշրջանում, երբ տեղեկատվության տարածման հարցում մեծ տեղ են զբաղեցնում սոցցանցերը, առաջացել է սոցցանցային տիրույթում լրատվամիջոցների վարքագծի կարգավորման անհրաժեշտությունը, և պետություններն ու միջազգային կառույցները, արձագանքելով այս անհրաժեշտությանը, արդեն որոշակի իրավական ու էթիկական նորմեր են մշակել: Եվրոպական իրավունքի տարածքում, որի մաս է կազմում Հայաստանը, նախադեպային իրավունքի նորմ է դարձել ՄԻԵԴ «Դելֆին ընդդեմ Էստոնիայի» գործը, որը, ըստ էության, պարտավորեցնում

է լրատվամիջոցներին մոդերացիայի ենթարկել իրենց սոց-ցանցային էջերը և լրատվամիջոցի համար պատասխա-նատվություն է սահմանում երրորդ անձանց կողմից բռ-նություն, ատելության խոսք և վիրավորանք տարածելու պարագայում: Այս նյութը տարածելիս, փաստորեն, լրատ-վամիջոցը չէր ապահովել այդ պահանջի կատարումը, և միայն մի քանի ամիս անց, ԼԳԲՏՔ+ իրավունքները պաշտ-պանող կազմակերպության դիմումի հիման վրա էթիկայի դիտորդ մարմնի կայացրած որոշումից հետո հարյուրավոր վիրավորական մեկնաբանություններ պարունակող ֆեյս-բուքյան գրառումը հեռացվեց:

Կամրջից իրեն նետել է նույնասեռական մի տղա[32]

Տրանսգենդեր Լիլիթ Մարտիրոսյանը ֆեյս-բուքի իր էջում գրում է. «Երեկ կամրջից իրեն նետել (ինքնասպան) է նույնասեռական մի տղա:

Մեր գրասենյակում իր առաջին և վերջին ծնոդյան հավաքույթը արեց:

Վերջին անգամ 4 օր առաջ էի տեսել մեր գրասենյակում, թակեց աշխատասենյակիս դուռը ու ասաց՝ ուզում եմ շնորհակալություն հայտնեմ, որ մեր համայնքի համար այսքան բան եք անում:

Լուրեր են շրջանառվում, որ հոմոֆոբ ընտանիքի պատճառով է գնացել այդ քայլին (դեռ չճշտված):

Վաղվանից մեր փաստաբանական թիմը կզբաղվի այս գործով»:

32 https://bit.ly/4gNBQUZ

Ահա մի փոքր բառարան, որը ձեզ կօգնի ավելի ճիշտ և տեղին կիրառել տերմինները՝ համապատասխան թեմայով նյութեր պատրաստելիս.

- Հոմոսեքսուալ (նույնասեռական՝ լեսբի կամ գեյ) է այն անհատը, որը խոր զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջություն, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերություններ և/կամ հարաբերությունների ցանկություն ունի նույն գենդերի անձանց նկատմամբ:
- Բիսեքսուալ (երկսեռական) է այն անհատը, որը զգացմունքային և/կամ սեռական գրավչություն ունի մեկից ավելի գենդերների նկատմամբ:
- Սեռական կողմնորոշումը տարբերվում է սեռականության այլ բաղադրիչներից, այդ թվում՝ սեռից (անատոմիական, ֆիզիոլոգիական և գենետիկ հատկանիշներ՝ կապված իգական կամ արական լինելու հետ), գենդերային ինքնությունից (կին կամ տղամարդ լինելու հոգեբանական ներքին զգացողությունը), գենդերային դերից (մշակութային նորմեր, որոնք սահմանում են կանացի ու առնական վարքի նմուշները):

«Փինք» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունն ունի նաև մասնագետների համար ուղեցույց[33]՝ ԼԳԲՏ անձանց հետ աշխատանքի, որը կարող է հետաքրքիր և օգտակար լինել ձեզ համար:

[33] ԼԳԲՏ անձանց հետ աշխատանքի ուղեցույց - https://pinkarmenia.org/wp-content/uploads/2024/02/specialists-guideline-2021.pdf

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՅԼԱԽՈՀՆԵՐ

Մի կողմից՝ երիտասարդ ժողովրդավարություններում քաղաքական պայքարի հասնելու համար հիմնական պայմաններից մեկը տեսակետների բազմակարծության ապահովումն է: Մյուս կողմից, տարամետ դիրքորոշումների արտահայտումը՝ որպես քաղաքացիական հասարակության գործունեության նորմալ և բնական բաղկացուցիչ մաս: Որոշ հասարակություններ, ի տարբերություն մյուսների, հաջողությամբ են հաղթահարում ժողովրդավարության անցումը և եռանդուն քայլեր են ձեռնարկում ընդդիմադիր կուսակցությունների և մեծամասնության կարծիքին չհարող այլ անձանց համար ասպարեզ հարթելու ուղղությամբ: Շատ երկրներում, այնուամենայնիվ, այդ գործընթացը դեռևս անավարտ է: Թեև դրանցում հռչակվում է այլ տեսակետների հանդեպ հանդուրժողականությունը, այդուհանդերձ, շատ դեպքերում տեղական ու պետական իշխանությունները շարունակում են իրավական, քաղաքական և տնտեսական խոչընդոտներ ստեղծել ընդդիմադիր հայացքներ ունեցող քաղաքացիների ձայնը լսելի դարձնելու հարցում: Երբեմն իշխանության տեսակետին տարակարծիք մարդկանց վերաբերվում են գրեթե որպես դավաճանների, և նրանք կարող են անարդարացիորեն ենթարկվել քրեական կամ այլ կարգի հետապնդման: Լրագրողները և լրատվության միջոցները հաճախ լռելյայն համաձայնում են մասնակցել ընդդիմադիր տեսակետների դեմ արշավին: Նրանք կարող են իշխանությունների ճնշման տակ լինել և կաշկանդված լինել ֆինանսական հանգամանքներով: Երբեմն էլ լրատվությամբ զբաղվողները կարող են իսկապես կարծել, թե հանրային բանավեճի մեկ կամ մյուս կողմն անիրավացի

է և արժանի չէ իր փաստարկները ներկայացնելու իրավունքի: Որոշ լրատվամիջոցներ ներկայացնում են կառավարության տեսակետը, իսկ ընդդիմադիր ուժերը ներկայացնող լրագրողները, հակառակը, փորձում են արգելքներ ստեղծել դեպքերի մատուցման պաշտոնական տեսակետի հրապարակման համար: Բոլոր կողմերին բանավեճի մեջ ներգրավելը մեդիայի կարևոր խնդիրներից մեկն է: Ահա մի քանի օրինակներ, թե ինչպես կարելի է դա անել:

- Կարևոր խնդիրներ լուսաբանելիս աշխատեք չսահմանափակվել մեծամասնության կամ քաղաքական իշխանության դիրքորոշումներով: Եթե կառավարությունը որոշակի քայլեր է նախաձեռնում կամ որոշակի հայտարարություններ է անում, ապա գտեք այնպիսի մարդկանց, որոնք դեմ են առաջարկվող կամ իրականացվող քաղաքականությանը: Նրանք կարող են լինել քաղաքական գործիչներ, ինչպես նաև գիտնականներ, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, գործարարներ կամ էլ պարզապես անցորդներ:
- Տեղեկատվության աղբյուրներ փնտրեք ընդդիմադիր առաջնորդների շրջանում: Կապ հաստատեք նրանց հետ և ճանաչողական հանդիպում կազմակերպեք նրանց հոգսերը, կարիքները, համոզմունքները և գաղափարները քննարկելու համար: Մի խոստացեք անպայման ներառել նրանց դիրքորոշումները, բայց խնդրեք նրանց կապվել ձեզ հետ որևէ նշանակալի իրադարձության դեպքում, որի շուրջ նրանք կցանկանային իրենց մեկնաբանությունը ներկայացնել:
- Ուշադրությամբ վերլուծեք կառավարության կողմից առաջարկված ցանկացած նոր օրենք կամ կանոնակարգ: Բացահայտեք, թե ում օգտին և ի վնաս ում է դա գործելու և ապա անպայման ներկայացրեք այդ մարդկանց կարծիքը

փոփոխությունների վերաբերյալ: «Հալած յուղի տեղ» մի ընդունեք իրենց քաղաքականությունն արդարացնող իշխանությունների փաստարկները:

- Կառավարությանը հակադրվող մարդկանց մի բնութագրեք իբրև «օտարների» կամ «շեղվածների»: Հիշեք, որ բազմակարծիք հասարակությունում տեսակետների և քաղաքական դիրքորոշումների բազմազանությունը բնականոն երևույթ է: Կառավարության քաղաքականությանը արմատապես հակադրվողները չպետք է առանձնացվեն իբրև հատուկ խումբ միայն այն պատճառով, որ ընդամենը կիրառում են մարդու հիմնարար իրավունքներից մեկը. նրանք ընդամենը մարդիկ են, որ համակարծիք չեն իշխանությունների հետ:
- Արխիվներն ու անցյալում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ փաստերն ու ապացույցները ուսումնասիրելով՝բացահայտեք ձեր լրատվամիջոցի կողմից դեպքերի լուսաբանման մեջ տեղ գտած բացթողումները: Գուցե ձեր լրատվամիջոցը հիմնականում կենտրոնացել է մեկ կուսակցության լուսաբանման վրա կամ հարցազրույց է վերցրել միևնույն տեսակետն ունեցող մարդկանցից: Արդյոք ընդդիմության առաջնորդներին և իշխանություններին ընդդիմախոսող այլ մարդկանց հնարավորություն տրվե՞լ է արձագանքել իրենց դեմ ուղղված մեղադրանքներին: Արդյոք ուշադրությա՞ն են արժանացել իշխանության որդեգրած գծից տարբերվող տեսակետները:
- Մի չափազանցրեք տարբեր անհատների կամ կուսակցությունների տեսակետների միջև առկա տարբերությունները: Մարդիկ, հատկապես քաղաքական գործիչները, հաճախ ավելի ընդգծված և չափազանցված են ներկայացնում իրենց ասելիքը՝ հանրության աչքում միավորներ շահելու կամ համարձակ երևալու համար: Երբ գրում եք

նուրբ թեմաների շուրջ, որտեղ առկա են տեսակետների տարբերություններ, անհրաժեշտ է ցանկացած մոտեցում լուսաբանել անաչառ և խուսափել վիրավորական բառապաշարից:

- Մյուս կողմից, ընդդիմության առաջնորդները կամ կառավարության տեսակետները չկիսող մարդիկ կարող են լինել նույնչափ դոգմատիկ և ավտորիտար, որքան իշխանություն ներկայացուցիչները: Միայն այն, որ նրանք հակադրվում են ներկա իշխանություններին, դեռևս չի նշանակում, որ նրանք ժողովրդավար են կամ իշխանություն ունենալու դեպքում ամբողջովին այլ կերպ կդրսևորեն իրենց, քան ներկա իշխանությունը: Դրդեք նրանց դուրս գալ հակակառավարական կոչերի շրջանակներից և բացատրել իրենց ծրագրերը: Որպես լրագրող, թերահավատ եղեք հասարակական որևէ խնդրի կամ բանավեճի շուրջ հնչած այս կամ այն պնդումների նկատմամբ:

Դեպքերի ուսումնասիրություն

Նորագույն պատմության շրջանում Հայաստանի ներքաղաքական կյանքը առանձնանում է ակտիվ և հաճախ հրապարակային, զանգվածային պայքարով: Թերևս չկա այնպիսի տարի, երբ օրվա ընդդիմությունը փողոցներում և հրապարակներում հակակառավարական ցույցեր չնախաձեռնի: 2024-ին ընդդիմադիր շարժումը գլխավորում էր ավանդական ազգային եկեղեցու՝ Հայ Առաքելական եկեղեցու ներկայացուցիչ Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանը: Ստորև մի քանի օրինակներով ցույց կտանք այդ շարժման լուսաբանման մի քանի նմուշներ, որոնք ցույց են տալիս ընդդիմադիր շարժումը վարկաբեկելու, շարժման մասնակիցներին ապօրինի գործողություններ վերագրելու

չհաստատված մեղադրանքներ, մյուս կողմից՝ ընդդիմադիրների կողմից իշխանությանը հասցեագրված ատելության խոսք:

Վազգեն Գալստանյանը աջակիցներին տարավ բախման ոստիկանների հետ. ԱԳՆ շենքի մոտ անկառավարելի իրավիճակ է[34]

Այս հատվածից կարելի է ենթադրել, որ լրագրողը ցուցարարների մի մասին մեղադրում է մյուս մասի վրա շշեր նետելու և այդպիսով բախումներ հրահրելու մեջ: Եթե այդպես է, ապա տեխնոլոգիաները միանգամայն թույլ են տալիս այս պնդումը հաստատել տեսանյութերով, ինչը տվյալ դեպքում չի արվել:

Այստեղ ևս երևում է լրագրողի կողմնակալությունը: Ինչո՞ւ է նա պնդում, որ Գալստանյանը բախումներ է հրահրել: Արդյոք ընդդիմության գործողություններում ոստիկանների հանդեպ բռնության նշաններ կա՞ն: Այստեղ ուշադրություն է գրավում այն, որ լրագրողը ընդդիմության լիդերին անվանում է Վազգեն Գալստանյան: Բանն այն է, որ արքեպիսկոպոս Գալստանյանի քաղաքական

Այս պահին ԱԳՆ շենքի դիմաց իրավիճակը լարվել է: Գալստանյանի աջակիցները շշեր, տարբեր առարկաներ են նետում ցուցարարների ուղղությամբ:

Գալստանյանը իր աջակիցներին հրահրեց ոստիկանների հետ բախումների:

Նրանք փորձում են ճեղքել շենքի դիմաց հասարակական կարգը պահպանող ոստիկանության աշխատողների կազմած պատնեշը:

Ավելի վաղ Գալստանյանը հայտնել էր, որ իրենց քայլերի ամբողջ պատասխանատվությունը կընկնի ԱԳ և ՆԳ նախարարների վրա. «Մարդիկ չեն ուզում, մենք կփորձենք հատուկ պահպանվող տարածքում գնալ հատուկ պահպանվող մարդկանց տեսնելու»:

Հիշեցնենք՝ Վազգեն Գալստանյանը փոքրաթիվ աջակիցների հետ հանդիպում է պահանջում ԱԳ նախարարի հետ: Կառույցից հայտնել են, որ այս պահին նպատակահարմար չէ:

Վազգեն (Բագրատ) Գալստանյանը ավելի վաղ հայտարարել էր, որ կես ժամ ժամանակ են տալիս ԱԳ նախարարին՝ կամ իջնում է ներքև,

34 https://www.armtimes.com/hy/article/288473

հակառակորդները նրան հրաժարվում են կոչել իր եկեղեցական անունով՝ նախընտրելով քաղաքացիական անունը: Սա գուցե ընդունելի հնարք է քաղաքական պայքարի տեսանկյունից: Սակայն լրագրողը քաղաքական գործիչ չէ, և քանի դեռ արքեպիսկոպոս Գալստանյանը չի զրկվել եկեղեցական իր կոչումից, նրան պետք է դիմել համապատասխան ձևով:

կամ իրենք լրագրողների հետ բարձրանում են վերև:

ՆԳՆ ոստիկանությունը տեղեկացրել է, որ Արտաքին գործերի նախարարությունը անցագրային ռեժիմային համակարգով գործող կառույց է: Հետևապես ցանկացած մուտք ենթադրում է ռեժիմի պահպանում:

Այս նյութում ամբողջությամբ վերարտադրվում է սոցմեդիայում մի օգտատիրոջ գրառումը, որը լեցուն է քաղաքական հակառակորդի, տվյալ դեպքում՝ իշխանության ներկայացուցիչների նկատմամբ ատելության խոսքով ու ապամարդկայնացնող պիտակավորումներով: Սովորաբար սոցցանցային տիրույթում նման բովանդակությունը կարող է հեռացվել, կամ նույնիսկ օգտատերը կարող է արգելափակվել: Սակայն հաճախ պատահում է, որ լրատվամիջոցը արտատպում է սոցցանցում եղած ատելության խոսքը, այն բողոքարկվում է և հեռացվում սոցիալական մեդիայից համայնքի կանոններին չհամապատասխանելու պատճառով, սակայն լրատվամիջոցում շարունակում է մնալ: Ցանկացած պարագայում բացարձակապես անընդունելի է նման խոսքի տարածումը, հատկապես լրատվամիջոցի կողմից:

Միտինգավորների վրա թքող և միջնամատ ցույց տվողի որդին խուլիգան է անվանում դավաճան քայլիստի երեսին ճիշտը ասողին[35]

Ամբողջ տեքստը լցված է վիրավորական, թշնամական բառապաշարով («անմեղսունակ», «թրքամետ զառանցանք», «ոչնչությունները» և այլն), այնչափ, որ որևէ մեկնաբանության իմաստ, թերևս, չկա:

Ալենը շատ է նեղվել անմեղսունակ քայլիստ Հակոբի և քաղաքացու միջև տեղի ունեցած միջադեպից, որտեղ խուլիգանությունը հենց 45 րոպե դատարկ դասարանում դաս պարապած ու թրքամետ զառանցանքներով հանդես եկող Հակոբը կատարածեց, երբ հարվածեց քաղաքացու ձեռքին…

Ալեն, ինչի՞ց ես վիրավորվում… Մեկի համար ձեր նման ոչնչությունները “ՓՌԳԻՉ”, աստված ու եսիմինչ է, մյուսի համար՝ դավաճան վիժվածք, ստոր հայրենավաճառ և այլն… Այսինք, եթե ինչ-որ մի պրիմիտիվ նիկոլական կամ ժեխ քեզ կամ շեֆիդ “ՓՌԳԻՉ” է ասում կամ կռապաշտություն դրսևորելով աստված է անվանում՝ դա լավ է, բայց երբ ձեր երեսներին ասում են այն ինչ իրականում կաք՝ դա արդեն խուլիգանություն է…

Երկրորդը… Քո պարագայում հիշեցի Նիկիտա Խրուշչովի հայտնի խոսքերը՝ “Ու՛մ կովը բառաչի, քոնը պետք է լռի”… Ալեն, մորդ ո՞վ էր վիրավորել, որ դուրս եկավ պատշգամբ և սկսեց թքել մարդկանց վրա և միջնամատ ցույց տալ… Ըստ քեզ մայրդ ի՞նչ է այս պարագայում… Դե մորդ դաստիարակությունն է, որ դու էլ ես թքում մարդկանց վրա, այն էլ “ղզիկ” ձևով՝ թիկնազորիդ հրամայում ես մարդկանց բռնել ու նոր թքում ես վրաները…

Ի դեպ, “69-ամյա” լինելը ինչու՞ ես հատուկ շեշտում… Իբր տարիքով ես երես տալիս… Ինքն իր տարիքը հաշվի առնու՞մ է, երբ հիմարություններ, հակահայ բարբաջանքներ և թրքամետ զառանցանքներ է արտաբերում…

35 https://hayeli.am/?p=751807&l=am

Ալեն, դու ու բոլոր քայլիստներդ ՈՉՆՉՈՒԹՅՈՒՆ, ԴԱՎԱՃԱՆ, ՀԱԿԱՀԱՅ ԿԵՂԾԱՐԱՐՆԵՐ եք…

Հ.Գ. Ալեն, ձեր միակ փրկությունը Հայաստանի կործանումն է… Այլ պարագայում, շեֆԴ, դու ու քո նմանները Թուրքիայում կամ Ադրբեջանում եք ապաստան խնդրելու… Իսկ դու կոնկրետ Ալիևի դստեր՝ Լեյլայի համար ես ակվարիումում պարելու…

Գագիկ Համբարյանի գրառումը

Այս նյութը նախորդի հայելային արտացոլումն է, այս անգամ իշխանության դիրքերից շատ անարգ կերպով խոսվում է ընդդիմադիր շարժման և նրա լիդերի մասին: Թվում է, թե նախկինի համեմատ՝ այստեղ ձևակերպումները փոքրինչ ավելի մեղմ են, սակայն ըստ էության, նույն կերպ ապամարդկայնացվում են ընդդիմադիրները: Եվ կրկին, թվում է, թե լրատվամիջոցն ընդամենը մեջբերում է քաղաքագետ ներկայացող անձի ասածը, բայց դրանից լրատվամիջոցի պատասխանատվությունը բոլորովին չի նվազում: Նախ՝ լրատվամիջոցն է նրան ընտրել որպես զրուցակից, ապա թույլ է տվել, որ վիրավորական արտահայտությունները տեղ գտնեն կայքում: Սա միանգամայն անընդունելի է բարեխիղճ լրատվության տեսակետից:

Լեշը վերցրած՝ ընկել է փողոցներ՝ սադրանքներ է ուզում. ռուսները սրանց մինչև վերջ մաշեցնելու են. Հայկ Սուքիասյան[36]

Այդ շարժումից պարզապես մնացել են իրենց մարմինները փողոցում՝ 100-200 հոգի,

36 https://araratnews.am/show/114110

Նախ՝ արդյոք իսկապե՞ս 100-200 հոգի է մասնակցում ցույցերին: Լրագրողը պետք է ստուգեր այդ փաստը: Բացի դրանից՝ «մնացել են իրենց մարմինները փողոցում» արտահայտությունը վիրավորական բնույթ է կրում հավաքի մասնակիցների և աջակիցների համար:

Ինչո՞ւ է պետք ընդդիմադիրներին ձերբակալել. արդյոք նրանք անօրինական գործողություններ՞ են անում ցույցերի ժամանակ: Եվ որտեղի՞ց է այդ համոզմունքը, որ Ռուսաստանից հանձնարարություն են ստացել:

Ի՞նչ ապացույց կա, որ ընդդիմադիր շարժումը ուղղորդվում է ռուսական հատուկ ծառայությունների կողմից: Ոչ ժողովրդավար հասարակությունների «հին և բարի» ավանդույթն է՝ քաղաքական ընդդիմախոսներին ներկայացնել որպես «հինգերորդ շարասյուն», «աղանդ» կամ օտարերկրյա հատուկ ծառայությունների գործակալ:

Խոսքը այդ օրերին հայաստանյան ընդդիմության լիդեր Բագրատ արքեպիսկոպոս Գալստանյանի մասին է: Ինչո՞ւ է բանախոսը քրիստոնեության տեսանկյունից «հակամարդ» համարում նրան: Սա ինչ-որ

բայց հավաքող չկա. ակնհայտ է, որ սա օտար պետության շահերը սպասարկող ուժ է: Ռուսական ԿԳԲ-ն գզրոցում պահած եկեղեցու «սառցակալած» հատվածին հանել է փողոց ու սրանք մինչև վերջ մաշելու են: Այս մասին Araratnews-ի հետ զրույցում ասաց քաղաքագետ Հայկ Սուքիասյանը:

«Իրենցից բան չի մնացել, այդ մարդը բացարձակ հակաքրիստոնյա է, իսկ քաղաքականության մեջ աղանդավոր է և ինքը քաղաքական աղանդ է: Իսկ քրիստոնեության տեսանկյունից ինքը հակամարդ է և նաև բարոյականության հետ որևէ կապ չունեցող մարդ է: 100 հոգի են, մնում է գնան սադրանքի՝ ոստիկանությանը վիրավորել, ԱԳՆ և ՆԳՆ շենքեր են գնում և այլն: Իր լեշը վերցրած ընկել է տարբեր տեղեր ու որոնում է սադրանք, որովհետև այլ ելք չի մնացել, որ հետո ստացվի այս սառցակալած սրբազանի նկատմամբ ուժ կիրառվի կամ ձերբակալի՝ դա լինի վերջին հնարավորությունը, որ մարդիկ իբրև թե մոբիլիզացվեն: Եթե մենք լինեինք իշխանություն՝ այս մարդիկ հենց սկզբից ձերբակալված կլինեին, երբ ոտքը դուրս էր դնում թեմից: Իրենց ուզածը սա է, իսկ Ռուսաստանից ունեն հանձնարարություն, որ պետք է գնան հեղաշրջման, բայց քանի որ չի հաջողվում՝ ռուսները սրանց մինչև վերջ մաշացնելու են, որովհետև այս մարդը այլևս չի խորշում բարոյազրկվել վերջնականապես: Այս մարդը այլևս զրո է, քաղաքական աղանդ, որոնք գրոհում են Հայաստանի ազատության և անկախության դեմ, բայց մեր ժողովուրդը այս տեսակին անհաղորդ է. մի քանի օր էլ անցնի՝ կմաշվեն կգնան»:

Հարցին՝ արդյոք Գալստանյանը, երբ Ալիևի հասցեին ասում է, թե ինչ ասեն անելու է, այդպիսով չի սադրում հակառակորդին,

Սուքիասյանը պատասխանեց. «Էլի եմ ասում՝ այս մարդը միջպետական կոնֆլիկտ է հրահրում. ժամանակին սահմանազատում թույլ չէր տալիս և մի տափակ հայտարարություն էր անում՝ ոտնահարելով միջազգային բոլոր հնարավոր սկզբունքները, ասում, թե ՀՀ սահմանն այն է, որտեղ զինվորը կանգնած է: Հիմա էլ Երևանի փողոցներում իրեն դրել է տղամարդու տեղ, որ ինքը չի, բայց Ադրբեջանին հրահրում է Հայաստանի վրա: Երբ ինքը Ալիևի մասին բաներ է խոսում՝ պետք է ասի՝ արդյո՞ք պատրաստ է երեք գիշատչի՝ Ադրբեջանի, Ռուսաստանի ու Թուրքիայի դեմ դուրս գալ»:

Սուքիասյանի կարծիքով՝ եթե Ալիևի անունը տալով Գալստանյանը չի խոսում Ռուսաստանից՝ նշանակում է գործակալ է նա. «Կամ տգետ ախմախ ես, աղանդավոր ես, կամ էլ ագենտ, իր դեպքում՝ ենթադրում եմ երկուսը միասին. ինքը տգետ գործակալ է: Եթե իրենց արտգործնախարարների հայտարարություններն էլ նայենք՝ մենք Ռուսաստանի հետ հարաբերություններ պետք է զարգացնենք, ԵՄ չպետք է մտնենք, ինչը Հայաստանի կործանման ծրագիր է: Եվ իրենց աղմուկը ավելի շատ է, քան իրենք կան, իսկ ինչ վերաբերում է Խոջալուին՝ իշխանությունը հայտարարություն է արել. դու ո՞վ ես, որ արտգործնախարարը քեզ իջնի բան բացատրի»:

Սուքիասյանը հավելեց, որ Գալստանյանը ոչ մի բան է, զրո, և եթե իշխանություններն արձագանքել են Ալիևին, ապա Բագրատ Գալստանյանը թող գնա ու դա կարդա:

կրոնական ընկալման վրա հիմնված պնդո՞ւմ է, թե՞ բանախոսն ուղղակի ուզում է անարգել Գալստանյանին: Եթե անգամ այդպես է, լրագրողը պետք է թույլ չտա իր հոդվածը ատելության հարթակ դարձնել: Կարելի է առնվազն ընդհատել զրուցակցին և հարցնել՝ ինչո՞ւ եք այդպես կարծում:

Լրագրողն այստեղ «ուղղորդող» հարցով բանախոսին հրավիրում է ընդդիմության լիդերին ոչ բարեկամ երկրի օգտին գործողություններ անելու մեղադրանք վերագրել: Սա մի հնարք է, որ հայաստանյան քաղաքականությունում հաճախ են օգտագործում նաև ընդդիմադիրները: Սակայն դարձյալ պետք է նշել, որ լրագրողը քաղաքական պայքարի կողմ չէ:

Այստեղ բանախոսը սկսում է ուղղակիորեն անձնական վիրավորանքներ հասցնել, ինչն անարգել կերպով հայտնվում է լրատվամիջոցի էջերում: Սա կողմնակալ լրագրության շատ վառ դրսևորում է:

ԵՐԵԽԱՆԵՐ

Թերևս երեխաները հասարակության ամենախոցելի խումբն են, որոնք շատ հաճախ չեն կարող պաշտպանել իրենց իրավունքները, ինչն իրավական տեսակետից դրված է ծնողների կամ օրինական խնամակալների վրա: Շատ հաճախ երեխաները հայտնվում են ՋԼՄ-ների լուսաբանումներում, երբ գտնվում են զոհի կարգավիճակում, մասնավորապես բռնության, ընտանեկան բռնության, բուլինգի և կիբեռբուլինգի դեպքերով: Այս իմաստով բազմաթիվ լուսաբանումներ խախտում են երեխայի անձնական տվյալների պաշտպանության իրավունքը, ինչն իր հերթին մեծացնում է նյութի հերոսին կրկնակի վնասելու հավանականությունը: Երեխաներն ու անչափահասները պարբերաբար հայտնվում են դեպքերի էպիկենտրոնում, որոնք առնչություն ունեն բռնության տարբեր տեսակների, թմրամիջոցների օգտագործման, առողջապահական, կրթական և մշակութային հիմնահարցերի հետ: Մենք մշտապես պետք է հիշենք, որ երեխաներին անդրադառնալիս գործ ունենք զգայուն թեմայի հետ և որևէ կերպ չենք կարող լուսաբանել նրանց՝ առանց ծնողների կամ օրինական խնամակալների համաձայնության:

Այսպիսով, դիտարկենք խորհուրդներ, վերցված ՄԻՊ-ի՝ երեխաների վերաբերյալ լուսաբանման ձեռնարկից, որոնք կօգնեն լրատվամիջոցներին և լրագրողներին առավել ճիշտ և զգայուն կերպով անդրադառնալ երեխաներին և անչափահասներին վերաբերող թեմաներին:

- Մի վնասեք երեխային. խուսափեք հարցադրումներից, դիրքորոշումներից կամ մեկնաբանություններից, որոնք գնահատողական են, հաշվի չեն առնում մշակութային արժեքները, վտանգում են երեխային, նվաստացուցիչ են

կամ ստիպում են վերապրել իրադարձությունների ցավը:

- Մի ցուցաբերեք խտրական մոտեցում հարցազրույց անցկացնելու համար երեխային ընտրելիս՝ նրա սեռի, ռասայի, տարիքի, կրոնի, կարգավիճակի, կրթության կամ ֆիզիկական կարողությունների հիմքով:
- Մի բեմականացրեք ձեր հաղորդումը. մի խնդրեք երեխային պատմել կամ մասնակից լինել մի բանի, ինչը նրանց սեփական պատմության մաս չէ:
- Համոզվեք, որ երեխան կամ նրա օրինական ներկայացուցիչը գիտեն, որ զրուցում են լրագրողի հետ: Պարզաբանեք նրանց, թե հարցազրույցն ինչ նպատակ ունի և ինչպես է այն օգտագործվելու:
- Ձեռք բերեք երեխայի և նրա օրինական ներկայացուցչի համաձայնությունը բոլոր սպասվելիք հարցազրույցների, տեսանկարահանման և հնարավորության դեպքում՝ փաստագրական բնույթի լուսանկարների հրապարակման համար: Հնարավորության դեպքում այդ համաձայնությունը պետք է լինի գրավոր: Համաձայնությունը պետք է ձեռք բերվի պայմանով, որ երեխան կամ նրա օրինական ներկայացուցիչը որևէ կերպ ճնշված չեն և գիտակցում են, որ իրենք մասնակից են մի պատմության, որը կարող է լուսաբանվել տեղական կամ միջազգային մակարդակներում: Սա, որպես կանոն, ապահովվում է, եթե երեխայի համաձայնությունը ձեռք է բերվում երեխային հասկանալի լեզվով, և որոշումը կայացվել է՝ երեխայի վստահությունը վայելող մեծահասակի հետ խորհրդակցելով:
- Ուշադրություն դարձրեք՝ երբ և ինչ պայմաններում է երեխան հարցազրույց տալիս: Սահմանափակեք հարցազրույց վերցնողների և լուսանկարահանողների թիվը: Համոզվեք, որ երեխան իրեն հարմարավետ է զգում և կարող է ներկայացնել իր պատմությունն առանց կողմնակի, այդ թվում՝ հարցազրույց վերցնողի ազդեցության:

- Ֆիլմում, հարցազրույցների տեսագրման կամ ձայնագրման ժամանակ հաշվի առեք, թե տեսարանը կամ ձայնային ուղեկցումն ինչ տպավորություն կարող է ստեղծել երեխայի կամ նրա կյանքի և պատմության մասին: Համոզվեք, որ երեխան վտանգի կամ բացասական հակազդման չի ենթարկվի իր բնակարանը, համայնքը կամ գտնվելու վայրը ցուցադրելու հետևանքով:
- Ձերծ մնացեք խարանել որևէ երեխայի, խուսափեք նրա վրա բացասաբար անդրադարձող դասակարգումներից կամ բնորոշումներից, որոնք լրացուցիչ ֆիզիկական կամ հոգեբանական ցավ կպատճառեն երեխային կամ կհանգեցնեն հետագա չարաշահման, խտրականության կամ համայնքի մերժողականության:
- Միշտ ներկայացրեք երեխայի պատմության կամ պատկերի ճիշտ համատեքստը:
- Փոխեք երեխայի անունն ու թաքցրեք նրա ինքնությունը բոլոր այն դեպքերում, երբ երեխան՝
    - սեռական բռնության կամ շահագործման զոհ է դարձել,
    - ֆիզիկական կամ սեռական բռնության է ենթարկվել,
    - ՄԻԱՎ կամ ՁԻԱՀ վարակակիր է,
    - քանի դեռ երեխան, ծնողը կամ օրինական ներկայացուցիչը չի տվել իր իրազեկված համաձայնությունը,
    - գտնվում է քրեական հետապնդման ներքո կամ դատապարտվել է հանցագործության համար:
- Երեխային վնասելու կամ նրանից վրեժխնդիր լինելու ռիսկի կամ հնարավոր այլ ռիսկի դեպքում փոխեք երեխայի անունն ու թաքցրեք նրա ինքնությունը, եթե երեխան՝
    - ռազմական գործողությունների անմիջական մասնակից է

- (կոմբատանտ) կամ եղել է այդպիսին,
- ապաստան հայցող է, փախստական կամ տեղահանված անձ է:

- Որոշ դեպքերում երեխայի ինքնության բացահայտումը (անունը կամ ճանաչելի պատկերը) բխում է երեխայի շահերից: Այդուհանդերձ, երեխայի ինքնությունը բացահայտելու դեպքում անգամ, ինքը պետք է պաշտպանված լինի վնասից և ցանկացած խարանումից ու ճնշումից: Օրինակ՝ երեխայի ինքնությունը կարելի է բացահայտել, երբ երեխան՝
    - նախաձեռնում է լրագրողի հետ շփումը՝ ցանկանալով իրացնել իր
    - կարծիքն արտահայտելու ազատությունը և այն լսելի դարձնելու իրավունքը,
    - ներգրավված է սոցիալական ակտիվության ծրագրում և ցանկանում է ներկայացվել որպես այդպիսին,
    - ներգրավված է սոցիալ-հոգեբանական ծրագրում և պնդում է, որ իր անունն և ինքնությունն առողջ զարգացման նախադրյալ են:
- Հավաստիացեք երեխայի ասածի ճշմարտացիության մեջ՝ զրուցելով այլ երեխաների կամ մեծահասակի (նախընտրելի է՝ երկուսի) հետ:
- Եթե կասկածում եք՝ արդյոք երեխան վտանգվա՞ծ է, ներկայացրեք երեխաներին վերաբերող ընդհանուր վիճակը՝ առանց կոնկրետ երեխայի մատնանշելու, անգամ եթե դա լուսաբանման արժանի պատմություն է: Երեխան ունի կյանքի իրավունք, ինչպես նաև իրավունք՝
    - իրեն վերաբերող հարցերով որոշում կայացնելու,
    - կարծիք արտահայտելու,
    - խղճի ու դավանանքի ազատության,
    - խաղալու և իր անձնական կյանքն ունենալու,

- տեղեկացված լինելու,
- տեղեկություն տարածելու,
- ընտանիքում ապրելու,
- առողջ ապրելու,
- կրթություն ստանալու և այլն:

Երեխայի մասնակցությամբ կամ նրան վերաբերող հարցերի՝ զանգվածային լրատվության միջոցներով լուսաբանման ընթացքում և երեխային վերաբերող խնդիրը հրապարակելու հնարավորություն ունեցող անձինք (լրագրող, օպերատոր, ռեժիսորը և այլն) պարտավոր են պահպանել երեխայի իրավունքների պաշտպանությանն առնչվող պահանջները:

Եթե անգամ կոնկրետ իրավիճակում երեխային տեսանկարահանելու արգելք չկա, տեսանյութի հրապարակման պատասխանատուները պետք է վեր դասեն երեխայի շահն անգամ այն դեպքում, երբ այդ հրապարակումը լրատվամիջոցին կբերի բարձր դիտողականություն, վարկանիշ, այցելություններ կամ հավանումներ:

- Հարգեք երեխայի արժանապատվությունն ու իրավունքները ցանկացած իրավիճակում:
- Երեխայի հետ հարցազրույց անցկացնելիս կամ նրա մասին լուսաբանելիս հատուկ ուշադրություն դարձրեք յուրաքանչյուր երեխայի անձնական կյանքի գաղտնիության, իր կարծիքն արտահայտելու, իր վերաբերյալ որոշումների կայացմանը մասնակցության իրավունքներին, ինչպես նաև վնասից և վրեժխնդրությունից պաշտպանվածությանը:
- Գերադասեք երեխայի լավագույն շահը ցանկացած այլ բանից, անգամ եթե դա ուղղված է երեխային առնչվող հարցերի լուծմանն ու երեխայի իրավունքների խթանմանը:
- Երեխայի լավագույն շահը որոշելիս հաշվի առեք կարծիքն ազատ արտահայտելու երեխայի իրավունքը՝ նրա

տարիքին և հասունության մակարդակին համապատասխան:

- Խորհրդակցեք նրանց հետ, ովքեր լավագույնս ծանոթ են երեխայի վիճակին և կարող են գնահատել Ձեր հաղորդման կամ այլ նյութի քաղաքական, սոցիալական և մշակութային ազդեցությունը:
- Մի հրապարակեք պատմություն կամ լուսանկար, որը կարող է երեխային, նրա քույրերին կամ եղբայրներին, հասակակիցներին վտանգի տակ դնել, եթե անգամ վերջիններիս անունները փոխված, թաքցված են կամ չեն գործածվում:

Դեպքերի ուսումնասիրություն

Պատմության նմանատիպ լուսաբանումը (տե՛ս ստորև) հերթական անգամ ցույց է տալիս, թե ինչպես պետք չէ լուսաբանել կանանց, հատկապես անչափահաս աղջիկների նկատմամբ սեռական բռնության դեպքերը: Նախ՝ սկզբնաղբյուր կայքը, որին հղում է արվում այս լուրի սկզբում, դեպքի մասին լուր տալիս մի քանի անձնական տվյալ ներկայացրեց զոհի մասին՝ դրանով հնարավոր դարձնելով նրա նույնականացումը: Այնուհետև, արդեն ArmLur.am-ը որոշեց նոր մանրամասներ ավելացնել սարսափելի դեպքի մասին, փաստորեն անուղղակիորեն կատարվածի համար մեղադրելով նաև զոհին:

Նոր մանրամասներ 13-ամյա աղջկա բռնաբարության գործից[37]

Հոդվածում նշվում են համայնքների անունները, ոստիկանության բաժանմունքի անունը և անչափահասի ծննդյան տարեթիվը, որը կարող է թույլ տալ նույնականացնել զոհին:

Բացի դրանից՝ նյութում հաշվի չեն առնվել երեխաների վերաբերյալ զգայուն տեղեկատվության հրապարակման մի շարք էթիկական նորմեր, որոնք ոչ միայն թիրախավորում են երեխային, այլև վերջինիս սեռը:

Ովքե՞ր են տեղի բնակիչները, ի՞նչ է նշանակում՝ «չի փայլել վարքով», արդյոք դա կարո՞ղ էր սարսափելի հանցանքի պատճառ կամ արդարացում դառնալ: Արդյոք նման տեղեկություն վերարտադրող լրատվամիջոցում մտածե՞լ են, թե ինչ զգացողություններ կարող են ունենալ բռնության զոհի հարազատները կամ հենց ինքը՝ այս տողերը կարդալով: Ի՞նչ անմիջական և հետագա հետևանքներ կարող է ունենալ նման լուսաբանումը զոհի համար, որը որևէ կերպ հավասար դիրքերում չի եղել հանցանք իրականացնողների հետ: Նման լուսաբանումը թիրախավորում է զոհին երկրորդ անգամ՝ դարձնելով վերջինիս կրկնազոհ:

Ի՞նչ հանրային կարևորություն ունեն այս մանրամասները, ինչո՞վ են նրանք «ուշագրավ»:

Ինչպես գրել էր Aysor.am-ը՝ ապրիլի 11-ին ոստիկանության XXX բաժնում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Սոթք և Ակունք գյուղերի բնակիչ 2 տղամարդ սեքսուալ բնույթի գործողություններ են կատարել 2011 թ. ծնված մի աղջկա նկատմամբ:

ՀՀ ոստիկանության հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչության աշխատակից Զարզանդ Գաբրիելյանն ArmLur.am-ին փոխանցեց, որ կատարված ստուգողական գործողությունների և ձեռնարկված միջոցառումների ընթացքում՝ հանցանքը կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով տղամարդիկ ձերբակալվել և տեղափոխվել են բաժին, որտեղ վերջիններս խոստովանել են կատարվածը և կից փաստաթղթերի հետ ներկայացվել քննչական բաժին:

ArmLur.am-ի ուշագրավ տեղեկություններով՝ վերոնշյալ դեպքերը նույն ժամանակահատվածում չեն եղել, ըստ տեղեկությունների՝ առաջին անգամ աղջկան բռնաբարել է 72-ամյա տղամարդը, որոշ ժամանակ անց 70-ամյա տղամարդը:

Տեղի բնակիչները իրավապահների հետ զրույցում ասում են, որ 13-ամյա աղջիկը այդքան էլ չի փայլել վարքով:

Հիշեցնենք, որ մենք գործ ունենք 13-ամյա երեխայի կյանքի հետ և անչափահաս երեխաների հանդեպ սեռական ոտնձգությունները քրեորեն պատժվում է:

37 https://armlur.am/1360210/

Ինչպես վերը նկարագրված որոշ նմուշներում, հաճախ է պատահում, որ հանրային գործիչների ընտանիքի անդամները, այս դեպքում՝ երեխաները, իրենց կամքից անկախ, ներգրավվում են քաղաքական պայքարի մեջ: Քաղաքական հակառակորդին թիրախավորելու համար երբեմն հանրային գործիչները չեն ընկրկում երեխաներին վիրավորելու, նրանց վարքը քննարկելու գայթակղության առաջ: Քաղաքական գործչի էթիկական ընկալումները գուցե իր ու իր ընտրողների հարաբերությունների տիրույթում են գտնվում, սակայն ցանկացած պարագայում լրատվամիջոցները պետք է իմանան, որ անթույլատրելի է երեխաներին թիրախավորող, առավել ևս՝ նրանց վիրավորող բովանդակության հեռարձակումը, տարածումը: Ստորև նկարագրված նյութը հեռուստատեսությամբ և առցանց տիրույթում հեռարձակված հաղորդումից է:

Արփին «դավաճանաձագ է». Էդգար Ղազարյան. ՏԵՍԱՆՅՈՒԹ[38]

Լրատվամիջոցը անարգել վերարտադրում է երեխայի հանդեպ ատելության և խտրական խոսքը: Մեջբերված պիտակավորումները կարող են ուղղակիորեն վտանգ առաջացնել երեխայի համար: Չէ՞ որ կարող են լինել մարդիկ, որոնք հեռուստատեսությամբ լսելով, որ երեխան «նզովյալ» է կամ «դավաճանաձագ», «պիղծ ժառանգ է», «արյան մեջ կեղտ կա» և այլն, իրենց կրոնական կամ այլ

«Հայկական երկրորդ հեռուստաալիք»-ի «Հայելի ակումբ» հաղորդման ընթացքում, հաղորդման հյուր էդգար Ղազարյանը մեկնաբանում է ապրիլի 24-ին՝ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրը տեղի ունեցած միջադեպը, երբ վարչապետի տիկին Աննա Հակոբյանը անչափահաս երեխայի հետ այցելել էր հուշահամալիր, և նրա ամուսնու քաղաքական ընդդիմախոսների մի խումբ սկսել էր ամոթանքի և քննադատության բառեր վանկարկել: Հաղորդման հյուր, ընդդիմադիր գործիչ, նախկինում մի շարք բարձր պաշտոններ զբաղեցրած Էդգար

38 https://hayeli.am/?p=753358&l=am

Ղազարյանն այդ կապակցությամբ ասում է.

«... Հիմա գնացել սադրանքն արել ա, հետն էլ նա կատաղել ա, բա Արփիի տրամադրության վրա ազդել ա, որ էնտեղ բոլորը իրա պապային ասում են «դավաճան»: Բա Արփին դավաճանաձագ ա, պիտի իմանա, որ իրան սաղ կյանքն էլ ասելու են՝ «Բալի՛կ ջան, դու դավաճանաձագ ես, ինչքան էլ մեծանաս, քո քեռին աներձագ ա, դու էլ դավաճանաձագ ես»: Ըտենց ա: Բա որ եթե մարդը, որ ապրում ա պատվով, ինչի՞ համար ա ապրում պատվով, որ իրա զավակների համար անուն թողնի, չէ՞: Բա եթե ես իմ՝ Ղազարյան Ֆերդինանդի զավակը լինելու համար ամբողջ կյանքը հպարտանալու առիթ ունեմ, Արփին և մյուս դավաճանաձագերն էլ, ընդ որում՝ մյուսներինն էլ, մենակ Նիկոլինը չէ, դրանց բոլորի (հաղորդավարուհի՝ երեխաները դավաճանաձագեր են) դավաճանաձագեր են: Դրանց ամբողջ կյանքում պետք ա, [Բագրատ Գաստանյանը] Սրբազանն էլ ասեց, չէ՞, ասում ա՝ «նզովյալ են սերնդեսերունդ»: Այսինքն՝ ոչ թե միայն իրենք, այլ դեռ յոթը

պորտ դրանք պիտի եկեղեցի գնան, քահանան ասի «հա՛, քո պապու պապու պապը եղել ա Ալեն Սիմոնյանը, ուրեմն

դու, մեռոն չի քսվելու քո ճակատին, բալե՛ս»: Այո՛, ըտենց պիտի լինի: Դու էդ եկեղեցում չես կարա ամուսնանաս, գնա քաղաքացիական զագսում ամուսնացիր, եկեղեցին քեզ չի կարա պսակի, որովհետև քո պապու պապը եղել ա Ալեն Սիմոնյանը, եղել ա Տիգրան Ավինյանը, դուք չեք կարա, սուրբ մեռոնի, սրբաօծ մեռոնը ձեր ճակատին չի դրոշմվելու, որովհետև ձեր պապու պապի մեղքով մեր սրբավայրերը դարձել են թշնամու պղծման առարկա: Դուք պիղծ ժառանգ եք, ձեր արյան մեջ կեղտ կա, հայրենիքը թշնամուն հանձնելու կեղտ կա ձեր արյան մեջ»:

պատկերացումների դրդմամբ, կարող են ընդունելի համարել այդ երեխային վնաս պատճառելու միտքը: Լրատվամիջոցը պետք է պատասխանատու մոտեցում դրսևորի նման հեռանկարի առումով:

Բացի դրանից, երեխան, հեռարձակման պահին կամ թեկուզ տարիներ անց, կարող է իմանալ, թե ինչ է ասվել իր հասցեին, և այդ պատճառով հոգեկան տառապանքներ կրել:

Լրատվամիջոցի պատասխանատուները, որոնք թույլատրում են ատելության խոսքի տարածումն իրենց ալիքներով, նաև պետք է գիտակցեն, որ դրանով իսկ կարող են քրեական հետապնդում հարուցել իրենց նկատմամբ, և շատ դժվար, եթե չասենք՝ անհնարին կլինի այդ դեպքում ապահովել ՋԼՄ-ի պաշտպանությունը, որովհետև ատելության խոսքը որևէ պաշտպանություն չունի, այդ թվում՝ միջազգային իրավունքում:

Մեկ այլ իրավիճակ է հաճախ պատահում, երբ հանրային գործիչները որոշում են իրենց դրական կերպարը ներկայացնելու համար օգտագործել երեխաներին: Նման դեպքերը հնարավոր չէ բացառել, և լրատվամիջոցները դրանք ներկայացնելիս պետք է հաշվի առնեն՝ արդյոք երեխաները գիտակցո՞ւմ են, որ մասնակցում են այս կամ այն գործչի PR ակցիային, կամ արդյոք նրանց ծնողները/խնամակալները տվե՞լ են դրա համաձայնությունը: Ստորև բերված լուսաբանումը, որտեղ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը պաղպաղակ է հյուրասիրում գյուղի երեխաներին, մի շարք հարցեր է առաջացնում:

Նիկոլ Փաշինյանը Լանջառատ գյուղում երեխաներին պաղպաղակ է հյուրասիրել. ՏԵՍԱՆՅՈՒԹ[39]

Արդյոք երեխաներին նկարահանել են ծնողների կամ խնամակալների համաձայնությա՞մբ: Անգամ եթե վարչապետի աշխատակազմը նման տեսանյութ է հրապարակում, այն վերարտադրող լրատվամիջոցները պետք է այդ հարցը տան իրենք իրենց:

Բացի նրանից, որ հասկանալի չէ՝ արդյոք նկարահանողները թույլտվություն ունե՞ն ցուցադրելու երեխաների դեմքերը, նրանց նաև «հրավիրում են» շնորհակալություն հայտնել վարչապետին իր մեծահոգի ժեստի համար:

Երեխաները սովորաբար սիրում են, երբ իրենց պաղպաղակ են հյուրասիրում, սակայն ոչ բոլոր դեպքերում է, որ նրանք կամ նրանց ծնողները/խնամակալները համաձայն կլինեն դա անել տեսախցիկների ներքո: Լրատվամիջոցը պետք է հաշվի առնի դա:

Իր աշխատանքային մարզային այցերից մեկի ժամանակ վարչապետ Նիկոլ Փաշինյանը որոշում է պաղպաղակ հյուրասիրել Լանջառատ գյուղի երեխաներին:

Տեսանյութում, որը հրապարակվել է Փաշինյանի պաշտոնական ֆեյսբուքյան էջում և որը վերահեռարձակել են բազմաթիվ լրատվամիջոցներ, բաց երևում են երեխաների դեմքերը:

Ընթացքում լսվում է ձայն, որը հավանաբար վարչապետին ուղեկցող անձանցից մեկինն է. «Ինչ եք ասելու պարոն վարչապետին – Շնորհակալությու՞ն»:

39 https://araratnews.am/show/114135

Օգտակար աղբյուրներ երեխաների մասին լուսաբանումնե-րի համար՝

- Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ. ինչ-պես լուսաբանել երեխաներին վերաբերող հարցերը https://www.ombuds.am/images/files/53988c684fec6a6dd-0af986eff694827.pdf
- ՅՈՒՆԻՍԵՖ. երեխաների մասին լուսաբանման հիմնարար սկզբունքներ https://bit.ly/3XZTCfo

ԱՄՓՈՓՈՒՄ

Հարգելի ընթերցող, հուսով ենք, որ այս ձեռնարկն օգնեց ձեզ ավելի լավ պատկերացնել մարդու իրավունքների և խոցելի խմբերի լուսաբանման նրբություններն ու առանձնահատկությունները: Մեր նպատակն է խթանել լրատվության բազմազանությանը և այդ բազմազանության մեջ տարածել հարգանք ու հանդուրժողականություն հասարակության տարբեր խմբերի շրջանում:

Հիշեք, որ ձեր առաքելության կարևոր հիմնաքարերը պետք է լինեն միմյանցից անքակտելի: Էթիկան և հարգանքը մարդու և մարդու իրավունքների նկատմամբ չեն կարող վերաբերել միայն մեկ խմբի կամ խմբի, որին մենք հարում ենք և որի գաղափարախոսությունը կիսում ենք: Մենք որևէ կերպ չպիտի վնասենք մարդկանց և խմբերին, եթե չենք կարող օգնել նրանց մասին լուսաբանելիս:

Այս ձեռնարկը մշակվել է
Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտի կողմից:

Մենք պատրաստ ենք աջակցել ձեզ՝ տրամադրել
խորհրդատվություն, կազմակերպել և իրականացնել
վերապատրաստում ձեռնարկում տեղ գտած
թեմաների շրջանակում:

Հարցերի և առաջարկների դեպքում կարող եք
կապ հաստատել մեզ հետ՝
info@mdi.am
էլեկտրոնային փոստի միջոցով:

www.mdi.am
info@mdi.am